

**Վատ վերաբերմունքի գործերի
քննության առանձնահատկությունները
միջազգային չափանիշերի,
ՄԻԵԴ–ի նախադեպային իրավունքի,
ինչպես նաև ազգային օրենսդրության և
դատական պրակտիկայի լույսի ներքո**

ՈՒՂԵՑՈՒՅՑ-ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2018

Հեղինակ՝ Վահե Ենգիբարյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր,
ՀՀ դատավորների միության գործադիր տնօրեն

Գրախոս՝ Արմեն Գալստյան

Իրավագիտության մագիստրոս,
2014–2016 թթ.՝ ՀՀ կառավարության կողմից գործուղված ազգային իրավաբան ՄԻԵԴ –ում,
2017 թ–ից՝ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՄԻԵԴ–ի հետ կապերի վարչության պետ

Ձեռնարկի պատրաստմանն աջակցել է Ռալֆ Ռոշը

Իրավագիտության և հումանիտար գիտությունների մագիստրոս,
Մարդու իրավունքների և հասարակական կարգի ոստիկանական պաշտպանության գծով փորձագետ Եվրոպայի խորհրդում, փաստաբան

Սույն ձեռնարկը պատրաստվել է «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վաղ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում: Սույն ձեռնարկի մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և/կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 7

ԲԱԺԻՆ 1

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՓԱՍՏԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

- § 1. Խոշտանգման և վատ վերաբերմունքի փաստի քննության միջազգային չափանիշերը Եվրոպական դատարանի վճիռների լույսի ներքո 13
- § 2. Ընդդեմ Հայաստանի կայացված Եվրոպական դատարանի վճիռների ընդհանուր բնութագիրը խոշտանգման և վատ վերաբերմունքի փաստի քննության միջազգային իրավական չափանիշերի համատեքստում 26

ԲԱԺԻՆ 2

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

- § 1. Խոշտանգման և վատ վերաբերմունքի բովանդակությունն ու քրեաիրավական բնութագիրը 81
- § 2. Խոշտանգման և վատ վերաբերմունքի փաստի վերաբերյալ քրեական գործերի քննության ընդհանուր պայմաններն ու մարտահրավերները 93
- § 3. Խոշտանգման և վատ վերաբերմունքի զոհերի հիմնական թիրախային խմբերը և ռիսկերը 103

ԲԱԺԻՆ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՅԼ ՁԵՎԵՐԻ ՓԱՍՏԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

- § 1. Արդյունավետ քննության ապահովման առաջարկներ 115
- § 2. Կազմակերպաիրավական բնույթի առաջարկներ 121

Հավելված

- ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻՑ..... 127**

Հիմնական հապավումները

Եվրոպական կոնվենցիա	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
Եվրոպական դատարան	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
Հանձնաժողով	Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողով
ՁԴՎ ՀՀ ԱՆ ՔԿԸ	Ձերբակալված անձանց պահելու վայր ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկ
CAT	Խոշտանգումների դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոմիտե
Ստամբուլյան արձանագրություն	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արդյունավետ քննության և փաստաթղթավորման ուղեցույց
CEHRC	Եվրոպայի խորհրդի՝ Մարդու իրավունքների հանձնակատար
CPT	Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտե
ECPT	Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա

**HRC
OPCAT**

ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների կոմիտե
Խոշտանգումների և այլ դաժան, ան-
մարդկային կամ արժանապատվությու-
նը նվաստացնող վերաբերմունքի կամ
պատժի դեմ կոնվենցիայի կամ ընտիր
արձանագրություն

UNCAT

Խոշտանգումների և այլ դաժան, ան-
մարդկային կամ արժանապատվությու-
նը նվաստացնող վերաբերմունքի կամ
պատժի դեմ Միավորված ազգերի կազ-
մակերպության կոնվենցիա

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից քաղաքակիրթ հասարակությունը անվերապահ և հետևողական պայքար է մղում վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորման դեմ, ընդ որում՝ մեկտեղելով ուժերն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային համագործակցության ձևաչափերում:

Այդ երևույթի նկատմամբ միջազգայնորեն ընդունված իմպերատիվ մոտեցման շնորհիվ է, որ խոշտանգումն արգելված է առաջադեմ բոլոր պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ:

Միջազգային իրավունքում բացարձակ արգելք է սահմանված վատ վերաբերմունքի ցանկացած տեսակի դրսևորման համար, այն որևէ կերպ չի կարող արդարացված համարվել, և, ի տարբերություն մի շարք միջազգային նորմերով ամրագրված և երաշխավորված այլ իրավունքների, նշված կանոնից բացառություններ նախատեսված չեն:

Քննարկվող երևույթի դեմ պայքարի վերաբերյալ հիմնարար միջազգային իրավական ակտերից, թերևս, կարելի է համարել ՄԱԿ-ի՝ *խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող այլ վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան*: ՄԱԿ-ը հայտարարել է, որ խոշտանգումը հակասում է իր կանոնադրությանը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներին՝ դատապարտելով խոշտանգումների կիրառումը և դիտելով այն լիովին անթույլատրելի:

Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ **«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»**:

Հանձնաժողովի և Եվրոպական դատարանի աշխատանքի շնորհիվ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը ձեռք է բերել առավել հստակ ուրվագծեր: Ընդ որում՝ ակնհայտ է, որ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ «անմարդկային» կամ «նվաստացնող», պետք է մեկնաբանվեն ոչ թե ստատիկ իմաստով, այլ

Եվրոպական հանրային կարգի տվյալ ժամանակաշրջանում գործող չափանիշերին համապատասխան:

Խոշտանգման արգելքը բացարձակ բնույթ է կրում և դրանից որևէ շեղում չի թույլատրվում: Այսպես, ուսումնասիրելով Եվրոպական կոնվենցիայի 15-րդ հոդվածի բովանդակությունը, կարելի է եզրակացնել, որ այն հնարավորություն է տալիս Բարձր պայմանավորվող կողմերին որոշ արտակարգ իրավիճակներում շեղվելու Եվրոպական կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորություններից: Սակայն, այդ նորմը միաժամանակ նախատեսում է բացառություններ, որոնք վերաբերելի են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ և որոշ հոդվածներին: Ըստ այդմ՝ Եվրոպական կոնվենցիան չի նախատեսում 3-րդ հոդվածից որևէ շեղման հնարավորություն:

Խոշտանգումների արգելքն ընկալվում է որպես ընդհանուր միջազգային իրավունքի սկզբունք, այն համարվում է յուս կոգենս (jus cogens) նորմ, այսինքն՝ պարտադիր իրավանորմ: Յուս կոգենս բնույթի նորմերի պահպանությունը պարտադիր է բոլոր պետությունների համար, եթե նույնիսկ այդ պետությունները չեն վավերացրել որևէ կոնկրետ պայմանագիր: Միջազգային պայմանագրերը կամ միջազգային իրավունքի այլ կանոնները չեն կարող հակասել jus cogens սկզբունքին¹: Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր միջազգային պարտադիր նորմը պետությունների միջազգային հանրության կողմից ամբողջությամբ ընդունվում ու ճանաչվում է որպես այնպիսին, որից շեղումն անթույլատրելի է, և որը կարող է փոփոխվել միայն ընդհանուր միջազգային իրավունքի հաջորդ նորմով:

Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում իրավական դիրքորոշում է հայտնել առ այն, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածն ամրագրում է ժողովրդավարական հասարակությունների

¹ Տե՛ս Նախկին Հարավսլավիայի Միջազգային քրեական դատարանի *Դավարազր ընդդեմ Դելալիչի և մյուսների* գործ IT-96-21-T, 16 նոյեմբերի 1998 թ. վճիռ, պարբ. 452 և 454, *Դավարազր ընդդեմ Ֆուրունջիայի*, գործ IT-95-17/1-T, 10 դեկտեմբերի 1998 թ. վճիռ, պարբ. 139 և 143, *Դավարազր ընդդեմ Կունարացի և մյուսների*, գործ IT-96-23-T & IT-96-23/1-T, 22 փետրվարի 2001 թ. վճիռ, պարբ. 466:

ամենահիմնարար արժեքներից մեկը: Նույնիսկ ամենադժվարին հանգամանքներում, ինչպիսին են ահաբեկչության և կազմակերպված հանցավորության դեմ պայքարը, Եվրոպական կոնվենցիան բացարձակ իմաստով արգելում է խոշտանգումները և վատ կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ տվյալ անձի վարքագծից¹:

Միևնույն ժամանակ ՄԱԿ–ի անդամ պետությունների կողմից ընդունված կոնվենցիաներով, հռչակագրերով և բանաձևերով հստակ նախատեսվում է, որ չի կարող լինել խոշտանգման արգելքից որևէ բացառություն, և դրանցով սահմանվում են նման բռնություններից պաշտպանությունն ապահովելու համար այլ պարտավորություններ: Այդ փաստաթղթերի շարքում առավել կարևորներից են. *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը*, *Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը*, *Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները*, *խոշտանգումից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից պաշտպանության մասին ՄԱԿ–ի հռչակագիրը* (խոշտանգումներից պաշտպանության մասին հռչակագիր), *Իրավակիրառ գործունեության վերաբերյալ վարքագծի կանոնագիրքը*, *Խոշտանգումից և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից դատապարտյալների և կալանավորվածների պաշտպանության մեջ առողջապահական անձնակազմի, մասնավորապես՝ բժիշկների դերին համապատասխան բժշկական էթիկայի սկզբունքները* (Բժշկական էթիկայի սկզբունքները), *Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կոնվենցիան* (Խոշտանգումների դեմ կոնվենցիան), *Կալանավորման կամ ազատազրկման որևէ տեսակի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ժողովածուն* (Կալանավորման վերաբե-

¹ Stén Chahal v. United Kingdom, Judgment of 15 November 1996 § 79, Selmouni v. France, Judgment of 28 July 1999, § 95, Labita v. Italy, Judgment of 6 April 2000, § 119:

րյալ սկզբունքների ժողովածու) և Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության հիմնական սկզբունքները:

Պետք է նշել, որ խոշտանգման կանխարգելման, ինչպես նաև խոշտանգման դեպքերի առթիվ քննություն իրականացնելու պետությունների պարտավորությունը ներառող չափանիշերի մշակման գործում ակտիվ դերակատարություն ունեն ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների հարցերով զբաղվող տարբեր մարմիններ ու կառույցներ, մասնավորապես՝ *Խոշտանգումների դեմ հարցերով կոմիտեն, մարդու իրավունքների հարցերով կոմիտեն, Մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովը, Խոշտանգումների հարցերով հարուկ զեկուցողը, Կանանց դեմ բռնությունների հարցերով հարուկ զեկուցողը և Մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի կողմից ըստ երկրների նշանակված հարուկ զեկուցողները:*

Խոշտանգման կանխարգելման ու դրա փաստի քննության չափանիշերի հիմնախնդիրներով զբաղվում են նաև տարածաշրջանային մարմիններ ու կառույցներ, որոնց շարքում հատկապես ընդգծվում է *Եվրոպական դատարանի, Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի («CPT»)* դերը:

CPT-ն ստեղծվել է 1987 թ. Եվրոպայի խորհրդի ընդունված խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիայով, որն ուժի մեջ է մտել 1989 թ. փետրվարի 1-ին:

CPT-ն բաղկացած է յուրաքանչյուր անդամ պետությունից ընտրված մեկ անդամից: Ընտրված անդամները պետք է ունենան բարոյական բարձր հատկանիշներ, պետք է լինեն անաչառ, անկախ և հասանելի լինեն՝ համապատասխան ոլորտում առաքելություններ իրականացնելու համար: CPT-ն կատարում է այցելություններ Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ, մասամբ՝ կանոնավոր և պարբերաբար և մասամբ՝ կոնկրետ դեպքի հետ կապված: Այցելող պատվիրակության լիազորությունները բավականին լայն են. կարող է այցելել ցանկացած վայր, որտեղ անձինք զրկված են իրենց

ազատությունից, կատարել չհայտարարված այցելություններ ցանկացած վայր, կրկին կատարել այցելություններ այդ վայրեր, առանձին զրուցել ազատությունից զրկված անձանց հետ, այդ վայրերում այցելել իր կողմից ընտրված ցանկացած անձի կամ բոլոր անձանց հետ և զննել բոլոր տարածքները (ոչ միայն բանտախցերը) առանց սահմանափակումների: Պատվիրակությանը կարող են հասանելի լինել այցելված անձանց վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և նյութերը: Ընդ որում, CPT-ի ամբողջ աշխատանքը հիմնված է գաղտնիության և համագործակցության վրա:

Այցելությունից հետո CPT-ն պատրաստում է զեկույց: Հիմնվելով այցելության ժամանակ դիտարկված փաստերի և պայմանների վերաբերյալ զեկույցում առկա մեկնաբանումների վրա՝ մշակում է հատուկ առաջարկություններ և տալիս լրացուցիչ պարզաբանում պահանջող հարցեր, որին գրավոր պատասխանում է անդամ պետությունը: Թեև CPT-ի զեկույցները և անդամ պետության պատասխանները գաղտնի փաստաթղթեր են, բայց անդամ պետությունը կարող է հրապարակել և զեկույցները, և՛ պատասխանները:

CPT-ի գործունեության, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի անդամ տարբեր պետություններում վատ վերաբերմունքի դեմ պայքարի վիճակի մասին պատկերացում կազմելու տեսանկյունից հարկ է նաև նշել, որ Եվրոպական դատարանի ինտերնետային կայքում հասանելի է օգտակար վիճակագրություն, որը վերաբերում է բոլոր անդամ պետություններում, ներառյալ Հայաստանի Հանրապետությունում զանգատների և խախտումների հայտնաբերման վիճակին¹: Այս տեղեկատվությունը կարող էր օգտագործվել ամբողջ Եվրոպայի տարածքում վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորման ծավալների վերաբերյալ գործնական և համեմատական տվյալների ապահովման նպատակով: Այն կարող է նաև օգտագործվել՝ ներկայացնելու արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորության խախտումների արձանագրման մեծ թիվը՝ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով արձանագրված էական խախտումներ:

¹ <https://www.echr.coe.int/Pages/home.aspx?p=reports&c=>

րի թվի հետ համեմատելու համար: Այս առումով նշենք, որ 2017 թ. արձանագրվել են Եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածի էական խախտումների 165 և արդյունավետ քննության պարտավորությունը չկատարելու 58 դեպքեր¹:

Ինչպես նկատում ենք, միջազգային քաղաքակիրթ հանրությունն ակտիվ պայքար է մղում վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորման, ինչպես նաև անպատժելիության դեմ՝ սահմանելով և անընդհատ կատարելագործելով դրանց քննության չափանիշերը:

Վերը նշված խնդրի կարևորության ընդգծմամբ էլ պայմանավորված է սույն ձեռնարկի պատրաստման անհրաժեշտությունը, որի հիմնական նպատակը քննության եվրոպական չափանիշերի համատեքստում ընդդեմ Հայաստանի Եվրոպական դատարանի կայացրած վճիռներում արտահայտված հիմնական դիրքորոշումների օրինաչափությունների վերհանումն ու ներկայացումն է՝ դրանով իսկ աջակցելով Հայաստանի Հանրապետությունում վատ վերաբերմունքի փաստի քննության որակի բարձրացմանը: Ընդ որում՝ վատ վերաբերմունքի քննության արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկները մշակվել են՝ հիմք ընդունելով ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակիցների, մասնավորապես խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության քննիչների հետ կազմակերպված թեմատիկ քննարկումների արդյունքները հաշվի առնելով ՀՀ գլխավոր դատախազության 23.06.2017 թ. կոլեգիայի նիստի հիմնական վերաբերելի հանձնարարականները:

Եվ վերջապես, մեր երախտագիտությունն ենք հայտնում ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության բոլոր քննիչներին և վարչության պետ, արդարադատության առաջին դասի խորհրդական Վարուժան Ղահրամանյանին ձեռնարկի տեքստի պատրաստմանն ակտիվորեն աջակցելու համար:

¹ Տե՛ս https://www.echr.coe.int/Documents/Stats_violation_2017_ENG.pdf

ԲԱԺԻՆ 1.

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՓԱՍՏԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

§ 1. Խոշորանգաման և վաղ վերաբերմունքի փաստի քննության միջազգային չափանիշերը Եվրոպական դատարանի վճիռների լույսի ներքո

Վատ վերաբերմունքի փաստի քննության միջազգային չափանիշերը, ըստ էության, ներառում են Եվրոպական կոնվենցիայում, Ստամբուլյան արձանագրության մեջ ամրագրված, ինչպես նաև Եվրոպական դատարանի շարունակաբար զարգացող նախադեպային իրավունքում և մյուս միջազգային կառուցակարգերում ընդունված դրույթները:

CPT-ն, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը որպես ուղեցույց ընդունելով, երկուստեք ընդլայնել է վատ վերաբերմունքի քննության հետ կապված իր փաստահավաք գործունեության և հանձնարարականների սահմանները: CPT-ի չափանիշերն ամրագրված են վերջինիս կողմից ընդունված 14-րդ ընդհանուր զեկույցում:

Վերլուծելով Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան և միջազգային իրավական տարբեր փաստաթղթերում ամրագրված համապատասխան իրավադրույթները՝ կարող ենք փաստել, որ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության Եվրոպական չափանիշերը մասնավորապես ներառում են հետևյալ պահանջները.

1. Անկախությունը և անկողմնակալությունը, որը ենթադրում է, որ ա. Քննությանը ներգրավված և որոշում կայացնող մարմիններն ու բոլոր պաշտոնատար անձինք պետք է անկախ լինեն քննվող փաստերի հետ առնչություն ունեցող անձանցից:

բ. Անկախությունը պետք է լինի գործնական, այլ ոչ թե միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ հարաբերությունների բացակայություն:

գ. Քննությանը ներգրավված և որոշում կայացնող բոլոր պաշտոնատար անձինք, այդ թվում նաև բժիշկները, փորձագետները և այլոք, պետք է անկողմնակալ լինեն, նրանք չպետք է առնչված լինեն ենթադրյալ տուժողների վերաբերյալ որոշակի գործով իրականացված քննություններին կամ կայացված որոշումներին:

Նմանօրինակ դիրքորոշումներ Եվրոպական դատարանն արտահայտել է *Մեխմետ Էմին Յուքսելն ընդդեմ Թուրքիայի*¹ գործով՝ 2004 թվականի հուլիսի 20-ի վճռում:

Այսպես.

«...

37. *Դատարանը կրկնում է, որ պաշտոնատար անձանց կողմից փանջանքների կամ վատ վերաբերմունքի ցանկացած քննության արդյունավետության համար անհրաժեշտ է, որպեսզի քննության համար պատասխանատու և քննությունն իրականացնող պաշտոնատար անձինք դեպքի հետ առնչություն ունեցող անձանցից անկախ լինեն: Դա նշանակում է ոչ միայն ենթակայության (հիերարխիկ) կամ ինստիտուցիոնալ կապերի բացակայություն, այլ նաև պրակտիկ անկախություն:*

Վատ վերաբերմունքի մասին հաղորդումների քննությունը չի համարվի անկախ, եթե քննության իրականացումը հանձնարարվի փանջանքների կատարման ենթադրյալ մեղավորներին կամ նրանց, ովքեր ծառայողական ենթակայական կապի մեջ են գտնվում ենթադրյալ մեղավորների հետ: Նման չափանիշի օրինակ կարող է դիտվել Տոյունն ընդդեմ Բուլղարիայի² գործով՝ 2004 թվականի մայիսի 19-ի Եվրոպական դատարանի վճիռը:

...

¹ Տե՛ս Mehmet Emin Yuksel v. Turkey (Application no. 40154/98) գործով Եվրոպական դատարանի 2004 թ.-ի հուլիսի 4-ի վճիռը:

² Տե՛ս Toteva v. Bulgaria (Application no. 42027/98) գործով Եվրոպական դատարանի 2004 թ.-ի մայիսի 19-ի վճիռը:

Դեպքերի ժամանակագրությունը ցույց է տալիս, որ 1995 թվականի ապրիլի 5-ի միջադեպից հետո ոստիկանությունը և դատախազական մարմիններն էապես արագ են գործել դիմողի հանդեպ: Նրան մեղադրանք են առաջադրել և դատապարտել միջադեպից հետո ընդամենը մեկ տարվա ընթացքում: Ուշագրավ է այն, որ այդ նույն ժամանակահատվածում միևնույն դատախազը, ով ներգրավված էր դիմողի քրեական գործի քննությանը, որևէ անկախ գործողություն չի ձեռնարկել դիմողի դատեր բողոքները ստուգելու նպատակով (ոստիկանության կողմից իր մոր նկատմամբ վատ վերաբերմունքի վերաբերյալ): Նա ստուգման իրականացումը վստահել էր ոստիկանության այն նույն աշխատակցին, ով քննություն էր իրականացրել դիմողի նկատմամբ, դատարանում ցուցմունք էր տվել նրա դեմ և եղել է այն ոստիկանների պետը, ովքեր ենթադրաբար ծեծի էին ենթարկել դիմողին»:

Քննության անկախության սկզբունքն արգելում է նաև վատ վերաբերմունքի համար պոտենցիալ պատասխանատուների և նրանց հետ սերտ կապ ունեցող անձանց մասնակցությունը քննության առանձին փուլերին կամ որոշակի քննչական գործողություններին: Այսպես, Աքտասն ընդդեմ Թուրքիայի¹ գործով Եվրոպական դատարանի՝ 2003 թվականի ապրիլի 24-ի վճռի մեջ նշված է հետևյալը.

«...»

301. Կողմերը չեն վիճարկել այն փաստը, որ դեպքի վայրի, այն է՝ ժանդարմերիայի շենքում քննություն իրականացնող անձինք հենց ժանդարմերիայի աշխատակիցներ են եղել: Կասկածից վեր է նաև այն, որ նրանցից երեքը ... Մարդինի ժանդարմերիայի հետախուզական ենթաբաժանմունքի աշխատակիցներ են եղել: Դատարանը համաձայն է Հանձնաժողովի հետ այն հարցում, որ այդ պատճառով կատարված զննությունը չի կարող համարվել արդյունավետ քննության մաս:

¹ Տե՛ս Aktas v. Turkey (Application no. 24351/94) գործով Եվրոպական դատարանի 2003 թ.-ի ապրիլի 24-ի վճիռը:

...

302. Պարոն Արթարը (դատախազը) փոխանցել է գործը տարածքային վարչական խորհրդին: Այդ խորհուրդը նշանակել է մայր Դուրսունա Շեքերին քննել գործը:

...

305. Արդյոք Դուրսուն Շեքերը մասնակցել էր Յակուպ Աքրասի հարցաքննությանը, թե ոչ, այնուամենայնիվ կասկածից վեր է այն փաստը, որ նա նույնպես ժանդարներիայի աշխատակից է եղել, հետևաբար, եղել է այն հիերարխիկ համակարգի մասը, որի անդամների գործողությունների քննությամբ նա զբաղվել է:

... »:

Վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունների քննությանը ներգրավված անձինք պետք է անկախ լինեն նաև ենթադրյալ զոհի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումից, քանի որ դա կասկածի տակ է դնում քննության անկախությունը:

Այսպես, Բոյչենկոն ընդդեմ Մոլդովայի գործով Եվրոպական դատարանի՝ 2006 թվականի հուլիսի 11–ի վճռի մեջ նշված է հետևյալը.

«...

124. Դատարանը, նախևառաջ, նշում է, որ քննությանը ներգրավված դատախազի անկախությունը կասկածի տեղիք է տալիս: Դատարանն ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ վերջինս դիմողին մեղադրանք առաջադրող նույն դատախազն է:

...»:

Անկախության և անկողմնակալության պահանջը տարածվում է նաև քննության արդյունքների վրա: Այսինքն՝ քննության արդյունքում արված հետևությունները պետք է լինեն օբյեկտիվ: Քննության անկախության չափանիշերը ենթադրում են, որ քննության արդյունքներն առաջին հերթին անհիմն չպետք է լինեն և պետք է հաստատվեն որոշակի ապացույցներով: Քննություն իրականացնող մարմնի կողմից ապացույցներով չհիմնավորված վարկած ընդունելը դիտվում է որպես քննության անկախության սկզբունքի խախտում:

Օրինակ՝ *Ասենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի*¹ գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճռի մեջ նշված է հետևյալը.

«...»

103. *Դատարանը նշում է, որ ի պատասխան տրիկին Իվանովայի բողոքի՝ իշխանությունները նրա պնդումների առիթով կատարել են մի շարք քննություններ: Սակայն Դատարանը համոզված չէ, որ այդ քննությունը եղել է բավականաչափ մանրակրկիտ և արդյունավետ, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջներին: Այդ առիթով Դատարանը հարկատու անբավարար է համարում այն, որ ներքին գործերի շրջանային վարչության քննիչը պատրաստ էր գալ հետևության, թե պարոն Ասենովին վնասվածքները հասցրել է նրա հայրը, չնայած այն հանգամանքին, որ չի եղել որևէ ապացույց առ այն, որ վերջինս իր որդուն այնքան ուժգին է հարվածել, որպեսզի հասցվելին բժշկական եզրակացության մեջ նկարագրված վնասվածքները: ...»:*

Անկախության սկզբունքը ենթադրում է նաև, որ քննության հետևությունները չեն կարող բացառապես հիմնվել ենթադրյալ մեղավորների ցուցմունքների և բացատրությունների վրա: Այդպիսի ցուցմունքների ոչ քննադատական գնահատականը կդիտվի որպես խախտում, ինչպիսին ամրագրվել է, մասնավորապես *Աֆանասևը ընդդեմ Ուկրաինայի*² գործով Եվրոպական դատարանի՝ 2005 թվականի ապրիլի 5-ի վճռում:

«...»

76. *Դատարանը նկատում է, որ ի պատասխան դիմողի բողոքների՝ իշխանությունները մակերեսային քննություն են իրականացրել՝ հարցաքննելով միայն ենթադրյալ մեղավորներին: Նրանք ընդունել են ոստիկանության աշխատակիցների կողմից*

¹ *Sten Assenov and others v. Bulgaria* (Application no. 90/1997/874/1086) գործով Եվրոպական դատարանի 1998 թ.-ի հոկտեմբերի 28-ի վճիռը:

² *Sten Afanasyev v. Ukraine* (Application no. 38722/02) գործով Եվրոպական դատարանի 2005 թ.-ի ապրիլի 5-ի վճիռը:

մեղքի հերքումը որպես ճշմարտություն և մերժել են քրեական գործի հարուցումը նրանց դեմ՝ չնայած դիմողի պնդումներին և նրա մոտ անվիճելիորեն առկա մարմնական վնասվածքներին:

...»:

Քննության անկախության սկզբունքը ենթադրում է նաև, որ քննության հետևությունները կարող են ձևակերպվել՝ հիմք ընդունելով գործով ձեռքբերված այն բոլոր ապացույցները, որոնք համապատասխանում են դրանց գնահատման վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության չափանիշերին: Քննության արդյունքում ձեռքբերված որևէ ապացույցի անտեսումը խախտում է քննության անկախության սկզբունքը¹:

Պետք է նշել, որ անկախության և անկողմնակալության վերաբերյալ յուրօրինակ մոտեցումը որդեգրվել է նաև CPT–ի կողմից.

«Բացի դրանից, եթե անգամ ոստիկանության կողմից դրսևորված վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների կապակցությամբ նախնական քննություն իրականացնելու պաշտոնական պարտականություն կրող ոստիկանը կարող է նման հայտարարություն անել պատասխանատու ոստիկանության աշխատակիցներից անկախ, ապա նույնը չի կարելի ասել ոստիկանության այն աշխատակիցների մասին, ովքեր իրականում կատարում են այդ քննությունը: CPT–ի կարծիքով՝ ակնհայտ է, որ նման քննություններն ի վերջո պետք է իրականացվեն ոստիկանության այն աշխատակիցների կողմից, ովքեր կցված չեն ոստիկանության նույն հիմնարկին (օրինակ՝ ոստիկանության ընդհանուր տեսչությունը կամ ներքին գործերի դեպարտամենտին կցված ոստիկանության աշխատակիցները)»²:

Տարբեր պաշտոնատար անձանց և մարմինների միջև կապը, հետևաբար, կարող է բարդ լինել և մանրամասն ուսումնասիրություն պահանջել: Այսպիսով, դա կիրառվում է այն դեպքերում, երբ ինստիտուցիոնալ առումով անկախ պաշտոնատար անձինք առավել-

¹ Տե՛ս *Toteva v. Bulgaria* (Application no. 42027/98) գործով Եվրոպական դատարանի 2004 թ.–ի մայիսի 19–ի վճռի 64–րդ կետ:

² 2003 թվականի հուլիսի 13–ից 18–ն Ալբանիա կատարած այցի արդյունքում կազմված CPT–ի զեկույցը, CPT/Inf (2006) 22, կետ 40:

լապես հիմնվում են այն անձանց կողմից տրամադրված տեղեկությունների վրա, ովքեր կապված են քննության հետ, կամ քննությունն իրականացվում է այն ստորաբաժանման կողմից, որի աշխատակից են նրանք հանդիսանում¹:

2. Ամբողջականությունը, որը ենթադրում է, որ.

ա. Վատ վերաբերմունքի քննությունը պետք է ներառի համապատասխան դեպքի (դեպքերի) վերաբերյալ ապացույցների պահպանումն ապահովելու նպատակով ողջամիտ բոլոր քայլերի ձեռնարկումը:

բ. Պահանջվող քննչական գործողություններով հավաքված ապացույցները պետք է ներառեն՝

– ենթադրյալ տուժողների մանրամասն և ամբողջական հայտարարությունները, որոնք ձեռք են բերվել համապատասխան աստիճանի ջանասիրությամբ,

– պատասխանատու անձանց բացահայտման համար անհրաժեշտ հարցաքննությունների և, անհրաժեշտության դեպքում, առերեսումների ու առանձին այլ քննչական գործողությունների իրականացում²,

– ենթադրյալ տուժողների ֆիզիկական և հոգեկան վիճակի հստակ դատաբժշկական հետազոտությունները, որոնք պետք է իրականացվեն անկախ և համապատասխան պատրաստվածություն ունեցող անձնակազմի կողմից, ովքեր կարող են ախտորոշել վնասվածքների պատճառները և դրանց համապատասխանությունը հայտարարություններին,

– այլ բժշկական ապացույցները, այդ թվում՝ կալանավայրերի և բժշկական հիմնարկների կողմից կազմված արձանագրությունները,

– համապատասխան վկաների ցուցմունքները, հնարավորության դեպքում՝ կալանավորված այլ անձանց, կալանավայրերի վարչա-

¹ Այդ մասին մանրամասն տես **Սվանիձե է.**, Վատ վերաբերմունքի արդյունավետ քննություն, Եվրոպական չափանիշեր, ՀՀ դատավորների միություն, Երևան, Անտարես հրատ., 2010, էջեր 60–61:

² Տես *Aktas v. Turkey* (Application no. 24351/94) գործով Եվրոպական դատարանի 2003 թ.–ի ապրիլի 4–ի վճիռը:

կազմի, հանրության ներկայացուցիչների, իրավապահ մարմինների և այլ պաշտոնատար անձանց ցուցմունքները,

– դեպքի վայրի զննությունը՝ իրեղեն ապացույցներ, այդ թվում՝ վատ վերաբերմունքի դրսևորման ժամանակ կիրառված գործիքներ, մատնահետքեր, մարմնից արտաթորված հեղուկներ և հյուսվածքներ հայտարարելու նպատակով: Չննությանը պետք է մասնակցեն դատաբժշկության և այլ ոլորտի մասնագետներ, որոնք կարող են հայտնաբերել ապացույցներ, համապատասխան բանավոր նկարագրության հիման վրա ուրվագծել անձի դիմանկարը և/կամ վերականգնել դեպքի հանգամանքները,

– ձերբակալման արձանագրությունների, որոշումների, գործի նյութերի և որոշակի դեպքի վերաբերյալ այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը:

գ. Ապացույցները պետք է ձեռք բերվեն, իսկ քննությունն ընդհանրապես պետք է իրականացվի ներպետական դատավարական օրենսդրության պահանջներին խիստ համապատասխան:

դ. Վատ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկությունը և ապացույցները պետք է ձեռք բերվեն բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ եղանակով:

Բոյչենկոն ընդդեմ Մոլդովայի՝ գործով վճռի մեջ Եվրոպական դատարանն արձանագրել է.

«...

123. Ոչ պարզաձև վերաբերմունքի մասին էական բողոքների քննությունը պետք է լինի մանրակրկիտ և ամբողջական: Դա նշանակում է, որ իշխանությունները մշտապես պարտավոր են լուրջ միջոցներ ձեռնարկել, որպեսզի պարզեն, թե ինչ է կատարվել և չպետք է հիմնվեն հապճեպ և անհիմն հեղուկությունների վրա, որպեսզի ավարտեն քննությունը կամ տրվյալ գործով որոշում կայացնեն: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր քայլերը կատարվածի հետ կապված ապացույցների ամրա-

¹ *Stin Boicenko v. Moldova* (Application nos. 41088/05) գործով Եվրոպական դատարանի 2008 թ.–ի հունիսի 10–ի վճիռը:

գրման համար, ներառյալ, մասնավորապես՝ ականադեսների ցուցմունքները և բժշկական փաստաթղթերը:

...»:

Բատին և այլոք ընդդեմ Թուրքիայի՝ գործով Եվրոպական դատարանի՝ 2004 թվականի հունիսի 3–ի վճռի մեջ նշված է հետևյալը.

«...»

143. Դատարանը ափսոսանքով է նկատում, որ բժիշկների կողմից առաջարկված լրացուցիչ փորձաքննությունները չեն կատարվել, որոնց նպատակն էր պարզել, թե ինչպես են հասցվել հայտնաբերված մարմնական վնասվածքները, և ո՛չ դատախազը, ո՛չ Սպամբուլի դատարանը որևէ միջոց չեն ձեռնարկել շրկելու համար այդ իրավիճակը: Դատարանը նկատում է նաև, որ լրացուցիչ բժշկական փորձաքննությունների բացակայության պարճառով Բյուլենյու Գեդիկը, Մուշտակ Էրիսան Իլը և Արզու Քեմանողլուն զրկված են եղել հիմնարար երաշխիքներից, որոնք տարածվում են կալանավորների վրա: Դա կարող է դիտվել ոչ միայն քննության բացթողում, այլ նաև՝ որպես անմարդկային և նվաստացնող վերաբերմունք:

...»:

Վկաների ցուցմունքների հետ կապված՝ ի թիվս այլ գործերի ուշագրավ է նաև Ասենովն ընդդեմ Բուլղարիայի² գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի հոկտեմբերի 28–ի վճիռը, մասնավորապես.

«...»

103. Դատարանը նշում է, որ տիկին Իվանովայի բողոքից հետո պետական մարմինները քննություն են սկսել դիմողների բողոքների հիման վրա: Սակայն նա համոզված չէ, որ այդ քննությունը եղել է բավականաչափ մանրակրկիտ և արդյունավետ, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայի 3–րդ հոդվածի վե-

¹ Տե՛ս *Bati and others v. Turkey* (Application no. 33097/96 and 57834/00), գործով Եվրոպական դատարանի 2004 թ.–ի հունիսի 3–ի վճիռը:

² Տե՛ս *Assenov and others v. Bulgaria* (Application no. 90/1997/874/1086), գործով Եվրոպական դատարանի 1998 թ.–ի հոկտեմբերի 28–ի վճիռը:

րը նշված պահանջներին: Այդ կապակցությամբ նա հատկապես անբավարար է համարում այն, որ ոստիկանության աշխատակիցը պատրաստ էր եզրակացնել, որ պարոն Ասենովին վնասվածքները հասցրել է նրա հայրը, չնայած այն հանգամանքին, որ չի եղել որևէ ապացույց առ այն, որ վերջինս իր որդուն այնքան ուժգին է հարվածել, որպեսզի հասցվեին բժշկական եզրակացության մեջ նկարագրված վնասվածքները: Չնայած դա տեղի է ունեցել հրապարակայնորեն ավտոբուսի կանգառում, և ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների համաձայն՝ ականատես վկաների շարքում եղել են մոտ 15–20 գնչուներ և ավտոբուսի 20 վարորդներ, ամենայն հավանականությամբ ոչ ոք չի փորձել պարզել ճշմարտությունը՝ անհապաղ, միջադեպից անմիջապես հետո հարցաքննելու այդ վկաներին, երբ հիշողությունները դեռ թարմ էին: Այդ ժամանակ ցուցմունք է վերցվել միայն մեկ անկախ վկայից, ով չի կարողացել հիշել նշված իրադարձությունները»:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ամբողջականության չափանիշն ապահովելու համար անհրաժեշտ քննչական գործողությունների սպառիչ ցանկ հնարավոր չէ նախատեսել: Այդուհանդերձ Եվրոպական դատարանի կողմից զարգացվել է «ողջամիտ բոլոր քայլերը» ձեռնարկելու կամ պատշաճ ջանասիրություն ցուցաբերելու ընդհանուր պահանջը:

Եվրոպական դատարանն իր վճիռներում հաճախ նշում է ցանկալի միջոցառումների բացատրական և ոչ սպառիչ ցանկ.

«Պաշտոնատար անձինք պետք է ձեռնարկեն հնարավոր բոլոր ողջամիտ քայլերն ապահովելու համար միջադեպին վերաբերող ապացույցների պահպանումը, ներառյալ՝ *«inter alia»*, հայտարարության վերաբերյալ ենթադրյալ տուժողի, ակնատես վկաների ցուցմունքները, դատաբժշկական ապացույցները և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ բժշկական հավաստագրեր՝ համա-

¹ Տե՛ս **Սվանիձե է.**, Վատ վերաբերմունքի արդյունավետ քննություն: Եվրոպական չափանիշեր, ՀՀ դատավորների միություն, Երևան, Անտարես հրատ., 2010, էջ 63:

պատասխանաբար ապահովելու համար վնասվածքների ամբողջական և հստակ արձանագրումը և մասնավորապես վնասվածքների պատճառների վերաբերյալ բժշկական եզրակացությունների օբյեկտիվ վերլուծությունը: Քննության յուրաքանչյուր թերացում, որը կհանգեցնի վնասվածքների պատճառների և պատասխանատու անձի բացահայտման հնարավորության նվազեցմանը, կարող է դիտվել որպես այս չափանիշերին հակասող»¹:

3. Անհապաղությունը, որը ենթադրում է, որ.

Քննությունները և հնարավոր իրավական ընթացակարգերը պետք է իրականացվեն անհապաղ և ողջամիտ ժամկետներում:

Վատ վերաբերմունքի ենթարկվելու մասին բողոքների քննության անհապաղությունն այս տեսակ գործերի քննության արդյունավետության կարևորագույն պայմաններից մեկն է: Միջազգային իրավական փաստաթղթերում նախատեսված անհապաղ քննության պահանջը նախևառաջ ենթադրում է վատ վերաբերմունքի մասին հայտարարությունների նկատմամբ իշխանությունների արագ արձագանքում: Այսպես, Ձերբակալման կամ կալանավորման ցանկացած տեսակի ենթարկված բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների կանոնագրքի (Свод) 33–րդ սկզբունքի 4–րդ կետը սահմանում է հետևյալը.

«Յուրաքանչյուր դիմում կամ բողոք դիտարկվում է անհապաղ և պարասխան է տրվում առանց չարդարացված ձգձգման»:

Խոշտանգումների մասին հատուկ զեկուցողի՝ 2002 թվականի դեկտեմբերի 17–ի հանձնարարականների համաձայն (Մարդու իրավունքների հանձնաժողովի բանաձևին համապատասխան ներկայացված Հատուկ զեկուցողի հաշվետվության 1–ին Հավելված)

«Խոշտանգումների վերաբերյալ բողոքները պետք է քննվեն անհապաղ, առանց հետաձգման: Սահմանված է, որ վարչ վերաբերմունքի վերաբերյալ բողոքներ կամ այլ տեղեկություններ ստանալիս

¹ Stin Bati and others v. Turkey (Application no. 33097/96 and 57834/00), գործով Եվրոպական դատարանի 2004 թ.–ի հունիսի 3–ի վճռի 134–րդ կետը:

իրավասու մարմինները պետք է քննությունը սկսեն հնարավորինս արագ և առանց ձգձգումների»:

Բադին և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի՝ 2004 թվականի հունիսի 3-ի վճռի՝ մեջ մասնավորապես նշված է.

«...»

133. Քննության բնույթը, որը կհասնի դրված նպատակներին (վնասվածքներ ստանալու պատճառները և մեղավորների բացահայտումն ապահովելը) պայմանավորված է որոշակի հանգամանքներից: Սակայն քննության ինչպիսի մեթոդ էլ ընտրված լինի, իշխանությունները պետք է սկսեն գործել անմիջապես բողոքը ստանալու պահից»:

Համանման մոտեցում Եվրոպական դատարանն արձանագրել է նաև Աբդուլսամեթ Յամանն ընդդեմ Թուրքիայի² գործով՝ 2004 թվականի նոյեմբերի 2-ի վճռում.

«...»

54. Այս համարեքստում ենթադրվում է արագության պահանջը: Անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ կարող են առաջանալ խոչընդոտներ կամ բարդություններ, որոնք կարող են դժվարացնել քննության ընթացքը որոշակի իրավիճակում: Այնուամենայնիվ, խոչընդոտներ կամ անթույլատրելի վերաբերմունքի քննության շրջանակներում իշխանությունների ռեակցիան կարող է, ընդհանուր առմամբ, համարվել հանրության վստահության առանցքն իշխանությունների կողմից օրենքի գերակայությանն ապահովման, ինչպես նաև հանցավոր համագործակցության ու ապօրինությունների հանդեպ անհանդուրժողականության դրսևորման վերաբերյալ»:

Վատ վերաբերմունքի արդյունավետ քննության չափանիշերը նաև ենթադրում են անհապաղության անհրաժեշտություն նախնա-

¹ Տե՛ս *Bati and others v. Turkey* (Application no. 33097/96 and 57834/00) գործով Եվրոպական դատարանի 2004 թ.-ի հունիսի 3-ի վճիռը:

² Տե՛ս *Abdulsamet Yaman v. Turkey* (Application no. 32446/96) գործով Եվրոպական դատարանի 2004 թ.-ի նոյեմբերի 2-ի վճիռը:

կան քննությունից մինչ վերջնական իրավական ընթացակարգ ընկած ժամանակահատվածում¹: Դրանք չեն նախատեսում ժամանակային սահմանափակումներ:

4. Տուժողի ներգրավվածությունը և հասարակական վերահսկողությունը, որը ենթադրում է, որ.

ա. Վատ վերաբերմունքից ենթադրյալ տուժողները կամ նրանց ներկայացուցիչները պետք է ներգրավված լինեն քննչական վարույթներին այնքանով, որքանով դա անհրաժեշտ է նրանց օրինական շահերը պաշտպանելու համար: Տուժողները պետք է իրավասու լինեն ներկայացնելու ապացույցներ, պահանջելու ձեռնարկել առանձին միջոցներ, միջնորդելու կատարելու որոշ քննչական գործողություններ և անհրաժեշտության դեպքում՝ մասնակցելու առանձին քննչական գործողությունների կատարմանը: Նրանք պետք է պարբերաբար տեղեկացվեն քննության ընթացքի և կայացված բոլոր համապատասխան որոշումների մասին: Անհրաժեշտության դեպքում նրանց պետք է տրամադրվի իրավական օգնություն, և նրանք պետք է իրավասու լինեն հասարակական ու մրցակցային դատական վերահսկողության ընթացակարգի իմաստով վիճարկելու քննչական մարմինների գործողությունները կամ անգործությունը:

Ապացույցներ ձեռք բերելու և քննչական գործողություններ կատարելու մասին արված միջնորդությունների անհիմն մերժումը կարող է դիտվել որպես արդյունավետ քննության սկզբունքի խախտում:

բ. Առանձին դեպքերում այս իրավունքի ապահովման համար կարող է պահանջվել հրապարակային քննության իրականացում:

Հրապարակայնության սկզբունքն առաջին հերթին տարածվում է ավարտված քննության արդյունքների վրա, որոնք այս կամ այն կերպ պետք է ներկայացվեն հանրությանը:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ տուժողի ներգրավվածությունը չի նույնանում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի կամ անգամ առավել սահմանափակ՝ 5-րդ հոդվածի 4-րդ

¹ Տե՛ս **Սվանիձե է.**, Վատ վերաբերմունքի արդյունավետ քննություն: Եվրոպական չափանիշեր, ՀՀ դատավորների միություն, Երևան, Անտարես հրատ., 2010, էջ 74:

մասով նախատեսված՝ արդար դատական քննության պաշտոնական երաշխիքի հետ: Սակայն եվրոպական չափանիշերով նախատեսված են «օրինական շահերի ապահովման անհրաժեշտության սահմանները»: Եվրոպական չափանիշերում նաև ամրագրված է, որ տուժողները պետք է իրավունք ունենան պահանջելու առանձին քննչական գործողությունների կատարում, որը բխում է Եվրոպական դատարանի մի շարք վճիռներից:¹

§ 2. Ընդդեմ Հայաստանի կայացված Եվրոպական դատարանի վճիռների ընդհանուր բնութագիրը խոշորանգման և վատ վերաբերմունքի փաստի քննության միջազգային իրավական չափանիշերի համարեքստում

Եվրոպական դատարանի կողմից ընդդեմ Հայաստանի կայացվել են մի շարք որոշումներ, որոնցով արձանագրվել են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութական և ընթացակարգային խախտումներ:

Անշուշտ, դրանցում արձանագրված խախտումներն էական են իրավակիրառ պրակտիկայի և վատ վերաբերմունքի քննության մեթոդիկայի կատարելագործման համար՝ նպատակ ունենալով դրանց քննությունն առավելագույնս համապատասխանեցնելու վատ վերաբերմունքի քննության եվրոպական չափանիշերին: Այդ նպատակով հարկ է վերլուծել վերը նշված վճիռները՝ դրանցում արձանագրված ՀՀ-ում վատ վերաբերմունքի քննության տիպային խախտումները հայտնաբերելու, խմբավորելու և հետագայում շտկելու նպատակով: Ուստի ստորև կներկայացվեն ընդդեմ Հայաստանի Եվրոպական դատարանի կայացրած վճիռներում արձանագրված վատ վերաբերմունքի քննության եվրոպական չափանիշերի՝ առավել առանցքային նշանակություն ունեցող այն խախտումները, որոնց շտկումն էապես կարող է նպաստել այս տեսակ գործերի քննության որակի բարե-

¹ Տե՛ս **Սվանիձե է.**, Վատ վերաբերմունքի արդյունավետ քննություն: Եվրոպական չափանիշեր, ՀՀ դատավորների միություն, Երևան, Անտարես հրատ., 2010, էջ 79:

լավմանը: Ընդ որում, հարկ է նկատել, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտումներն ինչպես քրեադատավարական բնույթի են, այնպես էլ կազմակերպական այնպիսի բացթողումները, որոնք հանգեցրել են նման խախտումների: Ուստի նպատակահարմար է դրանք դիտարկել համակցության մեջ՝ իրական պատկերի լիարժեք բացահայտման և քննության որակի բարելավման նպատակով:

1. Նախքան դանի ընդդեմ Հայաստանի գործով 2015 թվականի մարտի 31-ի վճռով (գանգապնեթ թիվ 9935/06, 23339/06) Եվրոպական դատարանը մասնավորապես արձանագրել է հետևյալ խախտումները:

Դիմողները ծնվել են համապատասխանաբար՝ 1961, 1964 և 1988 թվականներին: Առաջին և երկրորդ դիմողները գանգատները ներկայացնելու պահին պատիժ են կրել «Կոշ» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներում: Երրորդ դիմողը բնակվում է Հայաստանի Հանրապետության Վարդենիս քաղաքում:

Առաջին և երկրորդ դիմողներն ամուսիններ են: Երրորդ դիմողն իրենց դուստրն է: Գործի քննության ժամանակ նրանք բնակվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում:

2004 թվականի հունիսի 8-ին քրեական գործ է հարուցվել տեղացի աղջկա սպանության փաստի առիթով, ով երրորդ դիմողի համադասարանցին է եղել, ում մարմինը հայտնաբերվել է դիմողների տանից ոչ հեռու:

2004 թվականի օգոստոսի 31-ին Գեղարքունիքի մարզի դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը առաջին և երկրորդ դիմողների նկատմամբ, և գործը փոխանցվել է Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության համար: Մարզային դատարանում գործի քննության շրջանակներում առաջին և երկրորդ դիմողները հերքել են իրենց մեղքը և նշել, որ խոստովանական ցուցմունքները

տրվել են մինչդասական վարույթի ընթացքում իրենց նկատմամբ դրսևորված վատ վերաբերմունքի արդյունքում:

Առաջին և երկրորդ դիմողները պնդել են, որ մարզի դատարանի նիստերն անցկացվել են շարունակվող անկարգությունների մթնոլորտում՝ ներառյալ տուժողի հարազատներից և նրանց ընկերներից բաղկացած 25–30 հոգանոց խմբի կողմից դիմողներին ու իրենց փաստաբանին հասցեագրված իրական սպառնալիքների, ինչպես նաև խոսքերով արտահայտված և ֆիզիկական բնույթի ոտնձգությունների մթնոլորտում: Առաջին և երկրորդ դիմողները պնդել են, որ իրենց փաստաբանը ստիպված էր բացակայել մի քանի նիստերից, քանի որ մտահոգված էր իր անվտանգության համար: 2005 թվականի փետրվարի 4–ին մարզի դատարանը սպանության գործով մեղավոր է ճանաչել առաջին և երկրորդ դիմողներին և նրանց դատապարտել ազատազրկման համապատասխանաբար՝ ինը և տասնչորս տարի ժամկետով: Այսպիսով, մարզային դատարանը քննել և մերժել է վատ վերաբերմունքի վերաբերյալ առաջին և երկրորդ դիմողների բողոքները:

Դատավճիռը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան: Ըստ առաջին և երկրորդ դիմողների՝ Վերաքննիչ դատարանում կայացված դատական նիստերն անցկացվել են այնպես, ինչպես Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանում: 2005 թվականի հուլիսի 2–ին Վերաքննիչ դատարանն ուժի մեջ է թողել առաջին և երկրորդ դիմողների նկատմամբ մեղադրական դատավճիռները: Վերաքննիչ դատարանը մերժել է վատ վերաբերմունքի վերաբերյալ նրանց պնդումները նույն հիմքերով, ինչ մարզի դատարանը՝ հավելելով, որ դատարանի նշանակած դատաբժշկական փորձագետի եզրակացության համաձայն՝ առաջին դիմողը չի ունեցել վնասվածքի նշաններ:

Չպարզված օրը երկրորդ դիմողը ներկայացրել է իրավունքի հարցերի վերաբերյալ բողոք: Իր բողոքում նա պնդել է, որ հանցագործության կատարումը խոստովանել է ծեծի, խոշտանգման և սպառնալիքների գործադրման արդյունքում: Նա նաև բողոքել է, որ

Վերաքննիչ դատարանում կայացված դատական նիստերն անցկացվել են առանց փաստաբանի մասնակցության: 2005 թվականի օգոստոսի 12-ին ՀՀ վճռաբեկ դատարանը մերժել է երկրորդ դիմողի բողոքը: Վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների առնչությամբ Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրանք մանրամասնորեն ուսումնասիրվել են մարզային ու Վերաքննիչ դատարանների կողմից և պարզվել է, որ այդ պնդումները հիմնավորված չեն: Ինչ վերաբերում է փաստաբանի ենթադրյալ բացակայությանը, ապա դատարանն անհիմն է համարել այս պնդումները և հիմնվելով գործի նյութերի վրա՝ գտել է, որ փաստաբանն առաջին օրվանից, այն է՝ 2005 թվականի մարտի 22-ից, ներգրավված է եղել Վերաքննիչ դատարանում գործի քննությանը:

Գործով երրորդ դիմողի պնդմամբ իր կողմից տրված ցուցմունքները ևս վատ վերաբերմունքի գործադրման արդյունք են:

Եվրոպական դատարանը գտել է, որ սույն գործով գանգատները պետք է հայտարարվեն ընդունելի: Եվրոպական դատարանը գտել է, որ Կառավարության պնդմանը հակառակ, երկրորդ և երրորդ դիմողները ներկայացրել են այնպիսի ապացույցներ, որոնք վկայել են քննարկվող ժամանակահատվածում մարմնական վնասվածքների առկայության մասին: Գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում Եվրոպական դատարանը գտել է, որ երկրորդ դիմողը ոստիկանության Վարդենիսի բաժնում վատ վերաբերմունքի է ենթարկվել, որը, անկասկած, հասել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված դաժանության նվազագույն աստիճանի: Եվրոպական դատարանը եզրակացրել է նաև, որ Կառավարությունը բավարար չափով չի ապացուցել, որ երրորդ դիմողին հասցված վնասվածքների պատճառն այլ է, քան ոստիկանության բաժնում նրա նկատմամբ կիրառված վատ վերաբերմունքը, ինչը բավականաչափ լուրջ է, որպեսզի դիտարկվի Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի գործողության շրջանակներում: Եվրոպական դատարանը վճռել է, որ երեք դիմողների նկատմամբ տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային

խախտում, երկրորդ և երրորդ դիմողների նկատմամբ տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութաիրավական խախտում...:

Ըստ էության սույն գործով առաջին դիմողն՝ ընտանիքի հայրը, անձամբ չէր պնդել, որ իրեն խոշտանգել են: Դրա մասին պնդել էին նրա կինը և դուստրը: Սակայն, նա նույնպես ներգրավված էր որպես կասկածյալ, ոստիկանության նույն բաժին էր տարվել մյուս երկու կասկածյալների հետ միևնույն ժամանակահատվածում, ըստ երևույթին հարցաքննվել էր նույն աշխատակիցների կողմից: Վարույթն իրականացնող մարմինը տեղյակ էր այս հանգամանքների մասին, ինչպես նաև նրա՝ վատ վերաբերմունքի ենթարկված լինելու մասին պնդումներին, նույնիսկ եթե այդ պնդումները հենց ինքը չէր արել, այլ արել էին մյուս երկու դիմողները և փաստաբանը: Հենց այս կապակցությամբ Եվրոպական դատարանը գտել է, որ պետական մարմինները պարտավոր էին իրականացնել արդյունավետ քննություն:

Տեղին է նաև ընդգծել, որ պետությունը պարտավոր է ողջամիտ բացատրություն տալ նաև այն դեպքերում, երբ ենթադրաբար վատ վերաբերմունքի ենթարկված անձը չի բարձրաձայնում իր խոշտանգումների մասին, սակայն նրա մարմնի վրա առկա են հետքեր, կամ որևէ այլ կերպ կարելի է կասկածել նրա՝ վատ վերաբերմունքի ենթարկված լինելու մասին:

Սույն գործով Եվրոպական դատարանը վերահաստատել է, երբ անհատը ներկայացնում է փաստարկված պահանջ առ այն, որ ոստիկանությունը կամ պետական այլ մարմինները վատ վերաբերմունք են ցուցաբերել իր նկատմամբ՝ խախտելով Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը, ապա այդ դրույթով՝ զուգակցված Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված պետության ընդհանուր պարտականության մասին դրույթի հետ, այն է՝ «իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայում...», ինքնին ենթադրում է, որ պետք է իրա-

կանացվի արդյունավետ պաշտոնական քննություն (*տես Ասենովը և այլք, կեպ 102 և Լաբիթան, կեպ 131*):

Քննություն իրականացնելու պարտականությունը «արդյունքի պարտավորություն չէ, այլ միջոցներ ձեռնարկելու պարտավորություն»: Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգի մի եզրակացության, որը համապատասխանում է դիմողի կողմից նշված դեպքերի շարադրանքին, սակայն դրա միջոցով գործնականում պետք է հնարավոր լինի արձանագրել գործի փաստերը: Այն դեպքերում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ են, այն պետք է հանգեցնի հանցանքի համար պատասխանատուների բացահայտմանը և, համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ նրանց պատժելուն: Այսպիսով, վատ վերաբերմունքի մասին արժանահավատ հայտարարությունների վերաբերյալ քննությունը պետք է իրականացվի բազմակողմանի: Դա նշանակում է, որ իշխանությունները միշտ պետք է ձգտեն պարզելու, թե ինչ է տեղի ունեցել և չպետք է անեն հապճեպ կամ անհիմն եզրակացություններ՝ քննությունն ավարտելու կամ դրանք իրենց որոշումների հիմք դարձնելու համար: Նրանք պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ միջոցները միջադեպի հետ կապված ապացույցներ ձեռք բերելու համար, որը, *inter alia*, ներառում է վկաների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննությունը և այլն: Քննության ցանկացած թերություն, որը կարող է խափանել վնասվածքների պատճառի կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնության հաստատումը, կարող է այս չափանիշին չհամապատասխանելու վտանգ առաջացնել:

Վերջապես Եվրոպական դատարանը վերահաստատել է, որպեսզի պետական մարմինների կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքի առիթով իրականացվող քննությունը լինի արդյունավետ, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությունը ենթադրում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն (տես Օղուրն ընդդեմ Թուրքիայի (ՄԴ), թիվ 21594/93, կետ 91, ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ 1999-III, Մեմեդ. Էմին Յուկսեւն ընդդեմ Թուրքիայի, թիվ

40154/98, կետ 37, 2004 թվականի հուլիսի 20, ինչպես նաև Էրզին ընդդեմ Թուրքիայի, 1998 թվականի հուլիսի 28-ի, կետ 83, Ձեկույցներ 1998-IV, երբ մանկահասակ աղջկա մահվան դեպքը քննող հանրային մեղադրողն անվտանգության ուժերի և ՔԲԿ-ի ենթադրյալ բախման ժամանակ անկախ չգտնվեց՝ հիմնվելով միայն միջադեպին ներգրավված ոստիկանների կողմից տրամադրված տեղեկությունների վրա): (Տես սույն վճռի 118-120-րդ կետերը):

Ինչպես նկատում ենք Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Եվրոպական դատարանն իր վճռում ուղղակիորեն արձանագրում է վատ վերաբերմունքի փաստի քննության եվրոպական չափանիշերի հստակ շեղումներ, մասնավորապես՝ քննարկվող դեպքի վերաբերյալ ներկայացնելով, որ.

1. քննության անհապաղության և ամբողջականության չափանիշի պահպանումը ենթադրում է, որ իրավասու մարմինները պետք է անհապաղ, առանց ձգձգումների ձեռնարկեն բոլոր ողջամիտ միջոցները միջադեպի հետ կապված ապացույցներ ձեռք բերելու համար, որը, «inter alia», ներառում է վկաների ցուցմունքները, դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը և այլն, դրանով իսկ ընդգծելով քննության ամբողջականությունը.

2. անկախության և անկողմնակալության չափանիշն էլ ենթադրում է, որ պետական մարմինների կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքի առիթով իրականացվող քննությունը լինի արդյունավետ, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությունը ենթադրում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն:

2. Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով (2012 թվականի հոկտեմբերի 2-ի, գանգատ թիվ 40094/05) Եվրոպական դատարանն արձանագրել է մի շարք էական խախտումներ:

Դիմողը ծնվել է 1958 թվականին և ապրում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան գյուղում: Նա տվյալ ժամանակահատվածում Հայաստանում հիմնական ընդդիմադիր կուսակցություններից մեկի անդամ էր: 2004 թվականի մարտ և

ապրիլ ամիսներին ընդդիմության կողմից բազմաթիվ հանրահավաքներ անցկացվեցին, որոնց փաստորեն մասնակցում էր դիմողը: Նա պնդում էր, որ իշխանությունները պատասխան գործողություններ էին ձեռնարկել ընդդիմության համակիրների, այդ թվում՝ իր նկատմամբ կիրառվող ձերբակալությունների և ահաբեկումների միջոցով: Ըստ նրա՝ այդ ժամանակահատվածում իրեն ոստիկանական բաժանմունք տանելու մտադրությամբ ոստիկաններն ամեն օր այցելում էին Շահումյան գյուղում գտնվող իր տուն, որտեղ բնակվում էր իր մայրը: Նա ստիպված էր տնից հեռու մնալ և թաքնվել Երևանում:

Ըստ ոստիկանության նյութերի՝ 2004 թվականի ապրիլի 23-ին ժամը 5:05-ին Արտաշատի ոստիկանության բաժնում անանուն հեռախոսազանգ է ստացվում, ըստ որի՝ 2004 թվականի ապրիլի 12-ի հանրահավաքին մասնակցելու ժամանակ դիմողը հրազեն է ունեցել, որը դեռ նրա մոտ է: Երկու ոստիկաններին՝ Ռ. Ս.-ին և Ա. Ս.-ին կարգադրվել է դիմողին բերել ոստիկանության բաժին:

Դիմողի պնդմամբ՝ ոստիկաններ Ռ. Ս.-ն և Ա. Ս.-ն իրեն կանգնեցրել են իր տան մոտ ժամը 14:00-ի և 15:00-ի միջակայքում: Նրանք խնդրել են հետևել իրենց դեպի ոստիկանության բաժին, որտեղ վերջինս ենթարկվել է խոշտանգման: Մասնավորապես՝ ոստիկան Ա. Ս.-ի՝ աշխատասենյակից դուրս գալուց հետո մի քանի րոպե անց ներս է մտել ոստիկան Հ. Մ.-ն և սկսել հայիոյել նրան: Այնուհետև ոստիկան Հ. Մ.-ն մոտեցել է նրան և հարվածել իր կրծքավանդակի ձախ մասին ու խփել դեմքին: Դիմողը խլել է բջջային հեռախոսի լիցքավորման սարքը, որը եղել է գրասեղանի վրա, և հարվածել է ոստիկան Հ. Մ.-ին: Կռվի ձայները լսելով, երեք ուրիշ ոստիկաններ մտել են աշխատասենյակ և նրան տարել մեկ այլ սենյակ: Մոտ տասը րոպե անց ոստիկան Հ. Մ.-ն և մեկ այլ ոստիկան՝ Ա. Ա.-ն, մտել են այդ սենյակ և սկսել դաժանորեն ծեծի ենթարկել նրան: Երբ նրանք դուրս են եկել սենյակից, ներս է մտել մեկ ուրիշ ոստիկան՝ Ա. Կ.-ն, և սկսել մետաղյա իրով խփել նրան ամորձիների շրջանում: Հետո նրան ձեռնաշղթաներ են հագցրել, և ոստիկան Ա. Կ.-ն շարունակել է

հարվածել և խփել նրան գոտկատեղից ներքև, ինչից հետո նա գիտակցությունը կորցրել է:

Ինչ–որ պահի շտապ օգնություն է կանչվել Արտաշատի հիվանդանոցից՝ դիմողի հարբածության վիճակի ստուգման համար: Ըստ բժշկական զննության արձանագրության՝ դիմողը բժշկական զննության է ենթարկվել շտապօգնության բժիշկ Ա.Գ.–ի կողմից ժամը 19:00–ին, և ստուգման արդյունքները ցույց են տվել, որ եղել են հարբածության նշաններ: Դիմողը պնդում է, որ իրականում իր հարբածությունը ստուգելու համար շտապօգնության բժշկին կանչել են ժամը 15:00–ին (տե՛ս սույն վճռի 66–րդ կետը): Ոստիկան Ա.Հ.–ն, որն օգնում էր զննության ժամանակ, չորս անգամ հարվածել է իր դեմքին և մեկ անգամ էլ՝ գոտկատեղից ներքև:

Չպարզված ժամին Արարատի մարզի դատախազությունից քննիչ Մ.–ն որոշել է հարուցել թիվ 27203404 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 316–րդ հոդվածի 1–ին կետի այն հիմքով, որ դիմողն ուժ է գործադրել իշխանության ներկայացուցչի նկատմամբ՝ ոստիկան Հ.Մ.–ին հարվածելով և դրանով կյանքի համար ոչ վտանգավոր վնաս պատճառելով առողջությանը:

Այնուհետև, քննիչ Մ.–ն հարցաքննել է դիմողին որպես կասկածյալ: Ըստ կասկածյալի հարցաքննության արձանագրության՝ դիմողը նշել է, որ նա ի վիճակի չէ վկայություն տալու այդ պահին և ցուցմունքներ կտա հաջորդ առավոտյան: Արձանագրությունից պարզ է դառնում, որ դիմողի՝ պետության կողմից նշանակված փաստաբանը ներկա է եղել այս հարցաքննության ժամանակ:

Ըստ ոստիկանության մեկ այլ աշխատակցի՝ Օ.Բ.–ի կազմած արձանագրության, չհստակեցված ժամին դիմողը վատ է զգացել և խնդրել, որ բժիշկ կանչեն: Կանչվել էր շտապ բուժօգնություն: Շտապօգնության բժիշկ Ա. Գ.–ն՝ լսելով դիմողի գանգատները, խորհուրդ է տվել հետազոտություն անցակցնել ստացիոնար պայմաններում, քանի որ նրա գանգատների հետ կապված հետազոտությունը կարող էր իրականացվել միայն հատուկ սարքավորումներով: Պարզվում է, որ այցը տեղի է ունեցել ժամը 23:20: Այնուհետև պարզ–

վում է, որ դիմողը տեղափոխվել է Արտաշատի հիվանդանոց ոստիկանության մի քանի աշխատակիցների կողմից, սակայն նրան թույլ չեն տվել մնալ, չնայած բժշկի խորհուրդներին: Այդ գիշերը դիմողն անցկացրել է ոստիկանության բաժնի խցում:

2004 թվականի ապրիլի 24–ին՝ ժամը 11:20–ին, դիմողը ոստիկանության բաժնից տարվել է Արտաշատի հիվանդանոց, որտեղ նա ենթարկվել է բժշկական հետազոտության և տարվել վիրաբուժական բաժանմունք: Քննիչ Մ.–ն նաև կարգադրել է, որ թե՛ դիմողը, և թե՛ ոստիկանության աշխատակից Հ.Մ.–ն ենթարկվեն դատաբժշկական փորձաքննության:

Նույն ամսաթվին Մարդու իրավունքների պաշտպանը, ով այցելել էր դիմողին հիվանդանոցում և հետևում էր նրա գործին, գրություն է ուղարկում Գլխավոր դատախազություն և Ոստիկանության պետին: 2004 թվականի մայիսի 3–ին դիմողին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 316–րդ հոդվածի 3–րդ մասով՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու մեջ:

Նույն ամսաթվին դիմողը դուրս էր գրվել հիվանդանոցից: Նրա անձնական բժշկական քարտում պարունակվում էին նրա ախտորոշման և բուժման մասին նույն տեղեկությունները, որ ներկայացված էին վիրաբույժի կողմից 2004 թվականի ապրիլի 24–ին տրված տեղեկանքում (տե՛ս սույն որոշման 31–րդ կետը):

2004 թվականի մայիսի 6–ին դիմողը բողոքել է Գլխավոր դատախազին, որ իր դեմ քրեական վարույթը հիմնավորված չէ: Նա փաստել է, որ մարզային դատախազությունից քննիչ Մ.–ն, իր ծառայողական պարտականությունների բերումով, կապված է եղել ոստիկանության մարզային բաժնի աշխատակիցների հետ, հետևաբար, անկողմնակալ չի եղել: Նա դիմել է, որ քննիչ Մ.–ն հեռացվի գործի քննությունից, որ գործը տեղափոխվի Գլխավոր դատախազություն և որ քրեական վարույթ հարուցվի նրան խոշտանգումների ենթարկելու փաստի առնչությամբ:

2004 թվականի մայիսի 10-ին Գլխավոր դատախազի տեղակալը որոշել է մերժել դիմողի դիմումը՝ համարելով այն չհիմնավորված: 2004 թվականի մայիսի 18-ի նամակով դիմողը Գլխավոր դատախազությունից տեղեկացվել է, որ նրա դիմումը մերժվել է, սակայն նպատակահարմարության նկատառումներով, Գլխավոր դատախազի հրահանգով, քրեական գործը հետագա քննության համար ուղարկվել է Երևանի դատախազություն: Չհստակեցված ամսաթվին դիմողը դիմել է Գլխավոր դատախազություն՝ պահանջելով որոշում կայացնել ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քրեական գործ հարուցելու իր պահանջի վերաբերյալ:

2004 թվականի մայիսի 21-ին դիմողի քրեական գործը փոխանցվել է Երևան քաղաքի դատախազություն, որը հանձնարարվել է Երևանի դատախազության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության քննիչ Տ.-ին:

2004 թվականի հունիսի 2-ին դիմողը դիմում է ներկայացրել Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազին՝ պնդելով, որ ոստիկանության բաժնում նա խոշտանգումների է ենթարկվել և նրա նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել ոստիկանության աշխատակիցների կողմից, որոնց անունները նա նշել է 2004 թվականի ապրիլի 25-ի իր ցուցմունքում, ինչի արդյունքում նա կրել է ծանր մարմնական վնասվածքներ: Այնուամենայնիվ, միայն նրան է մեղադրանք առաջադրվել, և որևէ գնահատական չի տրվել ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված քրեական արարքների և այն փաստի առնչությամբ, որ նա գործել է հարկադրված ինքնապաշտպանության նկատառումներով: Ավելին, նա տարվել է ոստիկանության բաժին առանց որևէ հիմքերի և նրա ձերբակալության իրական պատճառը Հայաստանում տեղի ունեցող քաղաքական հետապնդումներն էին: Դիմողը պահանջել է, որ քննություն անցկացվի, որ քրեական վարույթ հարուցվի Արտաշատի ոստիկանության բաժնի ոստիկանների դեմ և որ քննության ժամանակ կասեցվեն նրանց ծառայողական լիազորությունները: 2004 թվականի հունիսի 7-ին ի

պատասխան այս դիմումի՝ քննիչ Տ.-ն որոշում է կայացրել մերժել դիմողի ներկայացրած միջնորդությունը:

Նույն ամսաթվին դիմողին ներկայացվել է 2004 թվականի մայիսի 5-ի դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը և 2004 թվականի ապրիլի 18-ի դրա լրացումը (*տե՛ս սույն վճռի 52 և 56-րդ կետերը*): 2004 թվականի հունիսի 28-ին դիմողը միջնորդագիր է ներկայացրել՝ պնդելով, որ փորձագետի ներկայացրած եզրակացություններն օբյեկտիվ չեն եղել, քանի որ իր կրած վնասվածքները եղել են ծանր և հասցվել են դիտավորությամբ, ու հանգեցրել են կենսականորեն կարևոր օրգանի ֆունկցիայի կորստի: Դիմողը պահանջել է, որ նշանակվի դատաբժշկական նոր փորձաքննություն: 2004 թվականի հուլիսի 7-ին քննիչ Տ.-ն որոշում է նշանակել դիմողի դատաբժշկական նոր փորձաքննություն այն հիմքով, որ փորձագետի 2004 թվականի մայիսի 5-ի եզրակացության և 2004 թվականի մայիսի 18-ին դրա լրացման ճշգրտությունը դրված էր կասկածի տակ՝ հիմնվելով մասնավորապես այն փաստի վրա, որ փորձագետի եզրակացությունները վիճարկվել էին դիմողի կողմից: 2004 թվականի հուլիսի 8-ին քննիչ Տ.-ն որոշում է վերցնել դիմողի բժշկական քարտը Արտաշատի հիվանդանոցից: 2004 թվականի հուլիսի 28-ին կազմվել է դատաբժշկական փորձագետի նոր եզրակացությունը, որը գրեթե նույնն էր, ինչ որ նախորդ փորձագետի եզրակացությունը (*տե՛ս սույն վճռի 52-րդ և 56-րդ կետերը*): Եզրակացության մեջ նշվում էր նաև, որ դիմողի վնասվածքների ծանրության աստիճանի մասին հետևությունը ճիշտ է տրվել:

2004 թվականի օգոստոսի 17-ին դիմողի դեմ մեղադրանքը փոխվել է՝ լրացվելով դիմողի հարբաժության վերաբերյալ փաստով: Դիմողը կրկին հարցաքննվել է և հայտարարել իր անմեղության մասին: Նա ևս մեկ անգամ փաստել է, որ նրան բերել են ոստիկանության բաժին ցույցերին մասնակցելու պատճառով և դաժան ծեծի ենթարկել: Նույն օրը քննիչը որոշել է ավարտել քննությունը, քանի որ մեղադրական եզրակացությունը պատրաստելու համար ձեռք էին բերվել բավարար ապացույցներ:

2004 թվականի օգոստոսի 30-ին Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազը դիմողի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական վարույթը կարճելու որոշում է կայացրել՝ հղում կատարելով ՔԴՕ-ի 37-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետին (*տես սույն վճռի 117-րդ կետը*):

Սույն գործով Եվրոպական դատարանն արձանագրել է նաև նյութական խախտում՝ կրկին արձանագրելով, որ երբ անձը տարվում է ոստիկանության բաժին լավ առողջական վիճակում, սակայն դուրս գալիս, նրա վրա արձանագրվում են մարմնական վնասվածքներ, պետության պարտավորությունն է ողջամիտ բացատրություն տալ դրանց առաջացման պատճառներին: Սույն գործով պատշաճ քննություն չիրականացնելու հետևանքով դիմողի մարմնական վնասվածքներին ողջամիտ բացատրություն չներկայացնելը հանգեցրել էր նաև նյութական բաղադրիչի խախտման:

Այս կապակցությամբ, մասնավորապես Եվրոպական դատարանն արձանագրել է.

«...

քրեական գործի հանգամանքները բացառապես հիմնվել են իրադարձությունների մասին ոստիկանների կողմից տրամադրված տարբերակի վրա... Արդյունքում դիմողը դարձել է այդ վարույթի միակ մեղադրյալը, մինչդեռ նշված ոստիկանները երբեք չեն համարվել հնարավոր կասկածյալներ և ավելին, մասնակցել են միայն որպես վկաներ, իսկ ոստիկանության աշխատակից Հ. Մ.-ի դեպքում՝ որպես զոհ (տես սույն վճռի 165-րդ կետը):

...

Վարույթն իրականացնող մարմինները քննության ոչ մի փուլում չեն տրամադրել որևիցե բացատրություն, թե ինչու են նրանք համարում ոստիկանների կողմից տրված ցուցմունքները հավաստի, իսկ դիմողի ցուցմունքները՝ ոչ վստահելի: Վատ վերաբերմունքի մասին իր պնդումների առումով ամբողջական քննություն իրականացնելու և հանցագործություն կատարած անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու և պատժելու մասին դիմողի բազմաթիվ

պահանջներն անտեսվել են կամ դրանց տրվել է մակերեսային պատասխան (*տե՛ս սույն վճռի 54-րդ կետը*): Այսպիսով՝ պարզվում է, որ վարույթն իրականացնող մարմիններն առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տվել են ոստիկանների կողմից տրամադրված վկայությանը և դրանով կարելի է ասել չեն ցուցաբերել անհրաժեշտ օբյեկտիվություն և անկախություն:

Այնուհետև Եվրոպական դատարանը նկատել է, որ վարույթը սկսվելուց մոտ մեկ ամիս անց դիմողի դեմ քրեական գործը մարզի դատախազությունից ուղարկվել է Երևան քաղաքի դատախազություն: Թե՛ ներպետական մարմինները և թե՛ կառավարությունը չեն կարողացել բացատրել գործն ուղարկելու պատճառները: Ամեն դեպքում, անհրաժեշտ է նշել, որ դիմողի դեմ հարուցված քրեական գործի փոխանցումը, անկախ դրա պատճառից և նպատակից, առանձնապես տարբեր արդյունքներ չի տվել, քանի որ Երևան քաղաքի դատախազությունն առանց վարանելու անփութորեն մերժել է վատ վերաբերմունքի մասին դիմողի պնդումները և շարունակել է գործել՝ հիմնվելով իրադարձությունների մասին նույն տարբերակի վրա:

Ինչ վերաբերում է տվյալ գործի քննության ընթացքում ձեռնարկված հատուկ միջոցներին, ապա Եվրոպական դատարանը չի կարող հաշվի չառնել մի շարք նշանակալից բացթողումներ և անհամապատասխանություններ, որոնք կարող էին վտանգել դրա հուսալիությունն ու արդյունավետությունը:

Եվրոպական դատարանը, մասնավորապես, ցանկանում է մատնանշել դիմողի դատաբժշկական փորձաքննության կատարման կարգը: Նման փորձաքննություն կատարելու մասին քննիչի որոշումը կայացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքի ցուցաբերման հաջորդ օրը, մասնավորապես՝ 2004 թվականի ապրիլի 24-ին: Դիմողը պնդել է, որ դատաբժշկական փորձագետ Գ.-ն սկսել է իր փորձաքննությունը միայն 2004 թվականի մայիսի 5-ին: Փորձագետի եզրակացությունից միանշանակ պարզ չէ, թե արդյոք դա այդպես է, սակայն կարելի է վստահաբար ենթադրել, որ փորձագետը չի սկսել փորձաքննությունը քննիչի որոշումից հետո առնվազն երեք օրվա ըն-

թացքում: Անհրաժեշտ է նշել, որ հետազոտման արդյունքում կազմված փորձագետի եզրակացությունը չի պարունակում որևիցե նշում դիմողի կրծքավանդակի և կողոսկրերի վնասվածքների մասին, ինչն ընդամենը մի քանի օր առաջ արձանագրվել էր Արտաշատի հիվանդանոցի բժիշկների կողմից: Այսպիսով՝ չի կարելի բացառել, որ դատաբժշկական փորձագետի կողմից այս բացթողման պատճառ է հանդիսացել հենց նշված ուշացումը: Չի կարելի բացառել նաև այն, որ դա արվել է հպանցիկ քննության արդյունքում՝ հնարավոր անկախության պակասի պատճառով: Ամեն դեպքում, այս ամենը հիմք են տալիս Եվրոպական դատարանին կասկածելու դատաբժշկական եզրակացությունների հավաստիության մեջ: Ավելին, եթե դատաբժշկական փորձագետն արձանագրեր այս վնասվածքները, ապա նրա՝ դիմողի վնասվածքների հնարավոր պատճառների մասին եզրակացությունները կարող էին միանգամայն տարբեր լինել:

...

Փորձագետի եզրակացությունն ամբողջությամբ հիմնված էր իրադարձությունների մասին հապճեպ ընդունված ոստիկանության տարբերակի վրա:

...

Եզրակացությամբ որևէ պատասխան չէր տրվել քննիչի կողմից առաջադրված հիմնական հարցերից մեկին, այն է, թե արդյոք դիմողի ամորձուն հասցված վնասվածքը պատճառվել է մեկ, թե՛ մի քանի հարվածով, ինչը, ելնելով գործի հանգամանքներից և միմյանց հակասող իրադարձությունների մասին տարբերակներից, էական նշանակություն ուներ քննության համար:

Երրորդ. փորձագետի սկզբնական եզրակացությունը պարունակում էր հետևյալ արտահայտությունը՝ «Ձախ ամորձուն հասցված վնասվածքը տրավմատիկ բնույթի է և կարող էր պատճառված լինել ցանկացած տեսակի հարվածով», որով առաջարկվում էր դիմողի վնասվածքների հնարավոր պատճառների լայն շրջանակ, բայց որը, անհասկանալի պատճառներով, հանվել է նույն եզրակացության թարմացված տարբերակից (*տես վճռի 56-րդ կետը*): Սա ևս մեկ ան-

գամ կասկած է հարուցում դատաբժշկական փորձագետի թե՛ անկախության և թե՛ փորձաքննություն ամբողջական կատարման, ինչպես նաև նրա եզրակացությունների հավաստիության կապակցությամբ:

...

Կրկնակի դատաբժշկական փորձաքննությունը կատարվել է նշանակալի ժամանակ անցնելուց հետո, որի հիմնական պատճառն այն էր, որ այդ եզրակացության պատճենը դիմողին ներկայացվել է այն կազմելուց միայն մոտ մեկուկես ամիս անց: Արդյունքում, նոր դատաբժշկական փորձաքննություն չկատարվեց դեպքից մոտ երեք ամսվա ընթացքում: Դատարանը համոզված է, որ նման հետաձգված փորձաքննությամբ հնարավոր չէր լինի ճշգրիտ կերպով արձանագրել դիմողի վնասվածքները և հետևաբար տալ հավաստի եզրակացություններ: Այսպիսով, Դատարանը լրջորեն կասկածում է, որ այս եղանակով հնարավոր եղավ շտկելու առաջին դատաբժշկական փորձաքննության թերությունները:

.... Քննչական մարմինները գործով այլ բժշկական ապացույցների պատշաճ գնահատում չեն իրականացրել, մասնավորապես՝ չեն գնահատվել Արտաշատի հիվանդանոցում կազմված փաստաթղթերը, որոնցով, ինչպես արդեն նշվել է վերը, դիմողի ամորձիների հասցված վնասվածքներից բացի՝ բացահայտվեցին նաև նրա կրծքավանդակին և կողոսկրերին հասցված այն վնասվածքները, որոնց մասին տվյալները բացակայում էին դատաբժշկական փորձագետի եզրակացության մեջ:

... Չնայած դիմողի վնասվածքների լրջությանը՝ վարույթն իրականացնող մարմինները չեն ուսումնասիրել հիվանդանոցում կազմված փաստաթղթերը կամ հարցաքննել համապատասխան բժիշկներին դեպքից հետո մոտ երկուսուկես ամսվա ընթացքում և պարզվում է, որ նույնիսկ այդ ժամանակ այս ապացույցին ուշադրություն չի դարձվել, և չի կազմվել որևէ եզրակացություն: Այս ապացույցների և դատաբժշկական փորձագետի եզրակացությունների միջև առկա տարածայնությունները շտկելու փորձ չի արվել՝ ներառյալ վերջինիս հարցաքննելու միջոցով, և պատասխան չի տրվել այն հարցին, թե

արդյոք դիմողի վնասվածքներն ամբողջությամբ կարող էին պատճառված լինել ոստիկանների կողմից նշված հանգամանքներում:

...

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Եվրոպական դատարանը չի կարող չզգալ եզրակացության, որ իրավասու մարմիններին չի հաջողվել իրականացնել արդյունավետ քննության արդյունքի հասնելու համար կարևոր նշանակություն ունեցող բժշկական ապացույցների՝ համապատասխան ժամկետներում, պատշաճ և օբյեկտիվ ձեռքբերում և գնահատում:

Այնուհետև Եվրոպական դատարանը մատնանշել է, որ վարույթ իրականացնող մարմիններն անմիջապես չեն մեկուսացրել և հարցաքննել դեպքի մեջ ներգրավված ոստիկաններին՝ դրանով իսկ չեն կանխել հնարավոր հանցավոր պայմանավորվածությունը: ... Եվրոպական դատարանը նկատել է նաև, որ որոշ նման դեպքերում ոստիկաններին պարզապես խնդրել էին տրամադրել իրադարձությունների շարադրանքի իրենց տարբերակը, և այդ առումով նրանց որևէ հարց չի տրվել: Նույնիսկ այն մի քանի դեպքերում, երբ քննիչը հարցեր է ուղղել նրանց, դրանք երբեք չեն գերազանցել մեկը կամ երկուսը, և դրանք հիմնականում սովորական հարցեր են եղել և չեն պարունակել հստակեցման տարրեր: Ուստի պարզվում է, որ տվյալ հարցաքննություններն ունեցել են պարզապես ձևական բնույթ, և Եվրոպական դատարանը չի կարող դրանք համարել լուրջ և պատշաճ ժամկետներում կատարված փորձ՝ ուղղված պարզելու այն ամենը, որոնց ժամանակ դիմողը ստացել է իր վնասվածքները:

...

Վերջապես, Եվրոպական դատարանը մատնանշել է նաև մի շարք այլ թերություններ և բացթողումներ: Նախևառաջ, որևէ փորձ չի արվել պետության կողմից նշանակված փաստաբանին հարցաքննելու նպատակով, ով ներկա է գտնվել դեպքի գիշերը վերջինիս հարցաքննությանը, կամ ոստիկան Օ.Բ.-ին հարցաքննելու համար, ով կազմել է արձանագրությունը՝ նշելով, որ դիմողն իրեն վատ է զգացել և պահանջել է բժշկական օգնություն: Երկրորդ. դիմողի և ոս-

տիկանների առերեսումները կատարվել են մեկուկես ամսից մինչև երեք ու կես ամիս ուշացումներով՝ դրանով զգալիորեն նվազագույնի հասցնելով այս միջոցների արդյունավետությունը, մինչդեռ դիմողի և ոստիկանապետի տեղակալ Գ-ի միջև առերեսում չի կատարվել:

Վերջապես, ներպետական դատարանները քննության ընթացքում լիովին չեն անդրադարձել վերոնշյալ քննության թերություններից որևիցե մեկին, և պարզվում է, որ այդ ընթացքում իրականացվել է դիմողի պնդումների միայն մակերեսային քննություն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ վատ վերաբերմունքի մասին դիմողի պնդումների առումով համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված քննությունը եղել է անարդյունավետ, ոչ պատշաճ և միանգամայն թերի: Դրանով հնարավոր չի եղել տալ հավաստի եզրակացություններ և արձանագրել գործի փաստերը: Իրավասու մարմինները բավականաչափ բարեխիղճ չեն եղել, և չի կարելի ասել, որ մտադրված են եղել բացահայտելու և պատժելու հանցագործներին: Հետևաբար, տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում*(տե՛ս վճռի 167-179-րդ կետերը)*:

Այսպիսով, եթե փորձենք ընդհանրացնել և ամփոփել Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Եվրոպական դատարանի արձանագրած Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային այն հիմնական խախտումները, որոնք թույլ են տրվել քննարկվող քրեական գործի քննության ընթացքում, ապա կարող ենք փաստել, որ դրանցով չեն պահպանվել այս տեսակ գործերի քննության երկու հիմնական չափանիշեր՝

1. *անհապաղությունը,*
2. *ամբողջականությունը:*

Առաջին չափանիշի խախտումն արտահայտվում է անհրաժեշտ քննչական գործողությունների և այլ միջոցառումների ուշացմամբ կամ ժամանակավրեպ կատարմամբ, մասնավորապես սկզբնական և կրկնակի դատաբժշկական փորձաքննությունների նշանակումը և կատարումն այդ մասին որոշում կայացնելուց հետո տևական ժա-

մանակ անց, քրեական գործի վարույթը մարզային դատախազությունից Երևան քաղաքի դատախազություն ուղարկելը, ուշացված առերեսման կատարումը, ոստիկաններին անհապաղ չմեկուսացնելը՝ պայմանավորվածությունները բացառելու նպատակով և այլն:

Ինչ վերաբերում է ամբողջականության չափանիշը չպահպանելուն, ապա պետք է նշել, որ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերը ձեռք չբերելը, ոստիկանության աշխատողների մակերեսային հարցաքննությունը և դրանց ապացուցողական մեծ նշանակության տալը, պետության կողմից դիմողին տրամադրված իրավաբանին չհարցաքննելը դրա վառ ապացույցներն են:

3. Զայանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով 2016 թվականի մարտի 17-ի վճռով (գանգաբաներ թիվ 36894/04 և 3521/07) Եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի հետևյալ ընթացակարգային խախտումները:

Որպես «Մատաղիսի գործ» հայտնի այս դատավեճը սկսվել է ՀՀ դատական ատյաններում 2004 թ. ապրիլից, երբ 2003 թ. դեկտեմբերին երկու ծառայակիցների սպանության մեղադրանքով ժամկետային զինծառայողներ Զայանը, Սարգսյանը և Սերոբյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ, որի ընթացքում նրանց նկատմամբ, իրենց իսկ պնդմամբ (ինչպես ներկայացված է Եվրոպական դատարանում գործերի փաստական հանգամանքներում), իրավապահ մարմինների կողմից կիրառվել է դաժան և անմարդկային վերաբերմունք՝ սպանություն կատարելու մեջ խոստովանական ցուցմունք կորզելու նպատակով:

«Ապա նրանք տեղափոխվել են զինդատախազի աշխատասենյակ, որտեղ շարունակվել է նրանց նկատմամբ վատ վերաբերմունքը»,— ասված է Եվրոպական դատարանի մամլո հաղորդագրության մեջ:

Երկարատև դատական գործընթացներից հետո, որոնց ընթացքում նախ Զայանին, Սարգսյանին և Սերոբյանին դատապարտում են 15 տարվա ազատազրկման (2005 թ., մայիս)՝ անհիմն համարելով իրավապահ մարմինների կողմից խոշտանգումների մասին

պնդումները, ապա 2006 թ. մայիսին Վերաքննիչ դատարանը վերանայում է ստորին ատյանի դատավճիռը և դատապարտում նրանց ցմահ ազատազրկման, իսկ նույն թվականի դեկտեմբերին զոհերից մեկի ծնողի վճռաբեկ բողոքի հիման վրա (նա պնդել էր, որ իրական մարդասպանների փոխարեն ազատազրկվել են անմեղ մարդիկ) Վճռաբեկ դատարանի որոշմամբ նախկին զինծառայողներն ազատ են արձակվում:

2012 թ. դեկտեմբերին Զալյանը, Սարգսյանը և Սերոբյանը արդարացվել են:

Եվրոպական դատարան ներկայացված գանգատում դիմողները պնդել էին, որ իրենք նախ անօրինական կերպով են զրկվել ազատությունից 2004 թ. ապրիլի 19–23–ին, և կտտանքների ու խոշտանգումների վերաբերյալ իրենց դիմումները երբեք չեն քննվել: Զալյանն իր գանգատում նաև ներկայացրել էր, որ իր բողոքի հացադուլի ժամանակ իրեն մերժել են հարազատների հետ տեսակցություն ունենալ և չեն ցուցաբերել անհրաժեշտ բժշկական օգնություն:

Եվրոպական դատարանն այս գործով եզրահանգել է, որ իշխանություններն ամենաուշը 2004 թվականի մայիսի 25–ին տեղեկացվել են երեք դիմողների նկատմամբ ենթադրաբար ցուցաբերված վատ վերաբերմունքի մասին, երբ առաջին դիմողը բողոք է ներկայացրել, «inter alia», գլխավոր դատախազին և զինվորական դատախազին: Այդ բողոքը բավականաչափ մանրամասն է եղել, պարունակել է ճշգրիտ ամսաթվեր, վայրեր, ենթադրյալ կատարողների անուններ և ցուցաբերված վատ վերաբերմունքի որոշ մեթոդներ և Եվրոպական դատարանի կարծիքով կարող է համարվել «արժանահավատ հայտարարություն»: Անկախ նրանից, թե այս բողոքը հիմնավորող բժշկական ապացույց չկա, Եվրոպական դատարանը հետևողական է իր վերը նշված եզրահանգմանն առ այն, որ արժանահավատ բժշկական եզրակացությունները բացակայում են գլխավորապես իշխանությունների կողմից սահմանված ներպետական ընթացակարգերը չպահպանելու պատճառով:

Այդ ընթացակարգերի խախտումը Եվրոպական դատարանը պատճառաբանել է հետևյալ կերպ.

«Դատարանը նշում է, որ գործի նյութերում առկա չեն այն ժամանակահատվածին վերաբերող արժանահավատ բժշկական եզրակացություններ, երբ դիմողների նկատմամբ ենթադրաբար ցուցաբերվել է վատ վերաբերմունք: Դիմողների առաջին բժշկական զննությունն իրականացվել է միայն 2004 թվականի հուլիսի 7-ին՝ դիմողներին «Նուբարաշեն» քրեակարարողական հիմնարկ ընդունելուց հետո, մասնավորապես, ենթադրյալ վատ վերաբերմունքից ավելի քան երկու ամիս հետո, և վնասվածքներ չեն արձանագրվել: Դատարանն այս կապակցությամբ չի կարող անտեսել այն փաստը, որ մինչև դիմողների տեղափոխումը ձերբակալված անձանց պահելու վայր, դիմողները պահվել են ռազմական ոստիկանության համակարգում գտնվող՝ ձերբակալվածներին պահելու վայրում՝ ավելի քան երկու ամիս, չնայած այն փաստին, որ քրեական դատավարության օրենսգրքով հստակ արգելվում է կալանավորված անձանց ձերբակալված անձանց համար նախատեսված վայրերում երեք օրից ավելի պահելը: ... Հետևաբար, ամենաուշը 2004 թվականի ապրիլի 30-ին, այսինքն՝ Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին արյանի դատարանի կողմից դիմողներին կալանավորելու մասին որոշում կայացնելուց երեք օր հետո, նրանք ռազմական ոստիկանության քննչական մեկուսարանից պետք է տեղափոխվեին Արդարադատության նախարարության համակարգում գործող՝ կալանավորված անձանց պահելու վայր: Ենթադրվում է, որ այս պահանջը պետք է կարևոր երաշխիք հանդիսանար ֆիզիկական բռնության գործադրման դեմ, որին կարող են ենթարկվել ձերբակալված անձինք ոստիկանության՝ ձերբակալված անձանց ժամանակավորապես պահելու վայրերում, այն պայմանով, որ բոլոր կալանավորված անձինք պետք է անցնեին բժշկական զննություն կալանավայր ընդունվելու ժամանակ: ... Ցանկացած դեպքում, անկախ այս կարգի խախտման մտահոգիչ լինելուց, վատ վերաբերմունքի մասին դիմողների հայտարարությունները հիմնավորող արժանահավատ

բժշկական եզրակացությունների բացակայության պարագայում, Դատարանը բավարար ապացույցներ չունի, որոնք թույլ կտային ողջամտորեն կասկածից վեր համարել, որ դիմողների նկատմամբ ցուցաբերվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջների հետ պահանջարկի վերաբերմունք» (տես սույն վճռի 261–269-րդ կետերը):

Ճիշտ է, որ առաջին դիմողի բողոքը ներկայացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքից հետո մեկ ամիս ուշացումով, այնուամենայնիվ Եվրոպական դատարանը չի համարում այդ ուշացումն այնքան, որ բողոքը, ipso facto (փաստի ուժով) զրկվի իր իրական էությունից և բավարարվելու հեռանկարից: Բացի դրանից, Եվրոպական դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ այդ ժամանակահատվածում դիմողներն օրենքի խախտմամբ պահվել են իշխանության այն մարմնի համակարգում գործող վայրում, որի աշխատակիցները վատ վերաբերմունք ցուցաբերած ենթադրյալ անձինք էին, և զրկված են եղել արտաքին աշխարհի հետ որևէ կապից, որը, հավանաբար, դիմողների շրջանում առաջացրել է անօգնականության և վախի զգացողություններ և ծառայել որպես կանխարգելիչ միջոց: Հետևաբար՝ զարմանալի չէ, որ առաջին դիմողն իր բողոքը ներկայացրել է անմիջապես այն բանից հետո, երբ նրան թույլ են տվել հանդիպել իր ընտրած պաշտպանին:

Ինչ վերաբերում է իշխանությունների արձագանքման արդյունավետությանը, ապա Եվրոպական դատարանը գտել է, որ հաշվի առնելով այն փաստը, որ բողոքը ներկայացնելու ժամանակահատվածից ի վեր բավական ժամանակ էր անցել, դատախազության մարմինները չեն նախաձեռնել և իրականացրել որևէ քննություն, առավել ևս անհապաղ քննություն:

Գրեթե ոչ ոք, բացառությամբ երկրորդ դիմողի, չի հարցաքննվել՝ ոչ առաջին և երկրորդ դիմողները, ոչ էլ վկաները և ենթադրյալ կատարողները, և ջանքեր չեն գործադրվել ապացույցներ հավաքելու՝ ներառյալ բժշկական զննություն նշանակելու և դեպքի վայրը զննելու համար: Ինչ վերաբերում է երկրորդ դիմողի հարցաքննություններին, ապա Եվրոպական դատարանը նշել է, որ 2004 թվականի մայի-

սի 18-ի հարցաքննությունը կատարվել է ենթադրյալ կատարողներ հանդիսացող երկու քննիչների կողմից և ամեն դեպքում, ենթադրյալ վատ վերաբերմունքի մասին մանրամասնորեն շարադրված հարցեր չեն տրվել, մինչդեռ 2004 թվականի հունիսի 29-ից 30-ի հարցաքննությունը կատարվել է 2004 թվականի մայիսի 25-ի բողոքից ավելի քան մեկ ամիս անց, և դրան ընթացք չի տրվել: Հետևաբար՝ նույնիսկ այս գործողությունները չեն կարող համարվել վատ վերաբերմունքի մասին հայտարարություններ քննելու լուրջ փորձ: ... Չի կատարվել բժշկական զննություն, դրա համար դիմողներից պահանջվել է ներկայացնել լրացուցիչ, որոշակի տեսակի պահանջ, չնայած որ 2004 թվականի մայիսի 25-ի բողոքը պարունակում էր բավարար պատճառներ՝ նման զննություններ կատարելու համար: Քրեական գործ հարուցելու կամ այն մերժելու վերաբերյալ ոչ մի որոշում չի կայացվել, և վատ վերաբերմունքի մասին հայտարարությունները մերժվել են զինվորական դատախազի կողմից վերջինիս գրությամբ՝ գրեթե առանց պատճառաբանության: Մասնավորապես, դրանք մերժելու միակ պատճառն այն էր, որ դիմողները վատ վերաբերմունքի մասին հայտարարություններ չեն արել 2004 թվականի ապրիլի 27-ի դատական նիստի ժամանակ, որի ընթացքում որոշվել է նրանց կալանավորելու հարցը:

Ըստ երևույթին, վատ վերաբերմունքի մասին դիմողների հայտարարությունների առնչությամբ որոշակի քննություն իրականացվել է Սյունիքի մարզի դատարանի ու Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի կողմից՝ դիմողների գործով դատաքննության ընթացքում, բայց այն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից անուղղակիորեն համարվել է ոչ պատշաճ, և դատարանը որոշել է բեկանել դիմողների մեղադրական դատավճիռը՝ ներառյալ այն հիմքով, որ անհրաժեշտ էր իրականացնել վատ վերաբերմունքի մասին դիմողների հայտարարությունների լրացուցիչ քննություն:

Ինչ վերաբերում է այս որոշմանը հաջորդած քննությանը, ապա Եվրոպական դատարանն ի սկզբանե նշում է, որ այն կատարվել է սպանության առթիվ դիմողների նկատմամբ հարուցված քրեական

գործի շրջանակներում, որոնցում նրանք ներգրավված են եղել որպես մեղադրյալներ: Ենթադրյալ կատարողներից ոչ ոք չի ներգրավվել որպես կասկածյալ, և նրանք շարունակել են հանդես գալ որպես վկաներ: Եվրոպական դատարանը կասկած է հայտնել առ այն, որ նման կերպ իրականացված քննությունը կարող էր համարվել այնպիսին, որի նպատակը վատ վերաբերմունքի մասին դիմողների հայտարարությունների առնչությամբ արժանահավատ և ամբողջական քննություն իրականացնելը և պատասխանատու անձանց բացահայտումն ու պատժելն է (*տես, mutatis mutandis՝ համապատասխան փոփոխություններով, Վիրաբյանի գործը, կետեր 165–166*): Բացի դրանից՝ այն իրականացվել է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության և Գուգարքի կայազորի զինվորական դատախազության, մասնավորապես՝ իշխանության այն մարմինների քննիչների կողմից, որոնց աշխատակիցներն առնչվել էին ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորմանը, և հետևաբար, կարող էին չբավարարել անկախության և անկողմնակալության պահանջը (*տես՝ Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործը, թիվ 9935/06 և 23339/06, կետ 123, 2015 թվականի մարտի 31*):

Բացի դրանից, չնայած մի շարք հարցաքննություններ իրականացվել են, սակայն 2007 թվականի հոկտեմբերի 1–ի որոշումից չի հետևում, որ վարույթն իրականացնող մարմինը հետևողական է եղել դիմողի վատ վերաբերմունքի մասին հայտարարություններին: Այս որոշումը միայն ամփոփել է ենթադրյալ կատարողների կողմից ներկայացված փաստերը՝ առանց դիմողների կողմից արված որոշակի հայտարարությունների մանրամասն գնահատման՝ այդ թվում նաև նրանց սկզբնական ազատությունից զրկելու, ապա օրենքի խախտմամբ ռազմական ոստիկանության քննչական մեկուսարանում տեղավորելու հանգամանքների: Ավելին՝ Եվրոպական դատարանը չի անտեսել այն փաստը, որ այդ հանցագործությունները պարունակել են գրեթե նույնանման տեքստեր, ինչը լուրջ կասկածներ է առաջացնում դրանց արժանահավատության վերաբերյալ:

Ի վերջո, ինչ վերաբերում է կատարված բժշկական զննություններին, ապա պարզ չէ, թե ինչպես ենթադրյալ վատ վերաբերմունքից երեք տարի անց կատարված բժշկական զննությունը կարող էր օգտակար արդյունքների հանգեցնել՝ հաշվի առնելով այն, որ դիմողները չեն անդել, իրենց նկատմամբ ենթադրաբար ցուցաբերված վատ վերաբերմունքն իրենց առողջության վրա տևական ազդեցություն է ունեցել: Դիմողների բժշկական քարտերի ուսումնասիրությունը նույնպես արդյունավետ չի եղել՝ խնդրո առարկա ժամանակահատվածում դիմողներին ենթադրաբար հասցված վնասվածքների վերաբերյալ արժանահավատ արձանագրությունների բացակայության պատճառով:

Հետևաբար, Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ իշխանություններն արդյունավետ քննություն չեն իրականացրել՝ ինչպես պահանջվում է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով և արձանագրել, որ բոլոր երեք դիմողների մասով տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում (*տե՛ս վճռի 270–277-րդ կետերը*):

Այսպիսով, ընդհանրացնելով Ջալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները՝ կարող ենք փաստել, որ դրանք ըստ էության վերաբերում են իրավասու մարմինների կողմից վատ վերաբերմունքի փաստի քննության արդյունավետությանը:

Մասնավորապես, վերը նշված գործի քննության ընթացքում.

1. *անհապաղության* չափանիշի խախտում կարող է գնահատվել, օրինակ՝ ենթադրյալ վատ վերաբերմունքից երեք տարի անց բժշկական զննությունների կատարումը,

2. *անկախության* և *անկողմնակալության* չափանիշի խախտման դրսևորում է այն փաստը, որ վատ վերաբերմունքի քննությունն իրականացվել է Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության և Գուգարքի կայազորի զինվորական դատախազության, մասնավորապես՝ իշխանության այն մարմինների քննիչների կողմից, որոնց աշխատակիցներն առնչվել էին ենթադրյալ վատ վերաբերմունքի դրսևորմանը,

3. *ամբողջականության* չափանիշի խախտում է այն փաստը, որ չեն հարցաքննվել՝ ոչ առաջին և երկրորդ դիմողները, ոչ էլ վկաները և ենթադրյալ կատարողները, և ջանքեր չեն գործադրվել ապացույցներ հավաքելու՝ ներառյալ բժշկական զննություն նշանակելու և դեպքի վայրը զննելու համար:

4. *Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի գործով (գանգապ թիվ 50520/08) թեև Եվրոպական դատարանը անդրադարձել է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտումներին, սակայն ԿՎԿՅ գործի փաստական հանգամանքները վերաբերում են խոշտանգմանը՝ որպես Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի նյութական բաղադրիչի:*

Սույն գործով դիմողը Հայաստանի «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետի նախկին տեղակալն է: Ըստ դիմողի՝ իր հայրն ընդդիմության ակտիվիստ է:

2007 թվականի սեպտեմբերի 4-ին Երևան քաղաքի դատախազությունը որոշել է քրեական գործով վարույթ հարուցել Ռ. Կ.-ի՝ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալի կողմից ներկայացված դիմումի հիման վրա, որը հայտնել է, որ 2007 թվականի օգոստոսի 23-ին դիմողը և քրեակատարողական հիմնարկի երկու այլ ծառայողներ՝ Ա. Գ.-ն և Լ. Հ.-ն իրեն ծեծել են ռետինե մահակներով: Որոշման մեջ նաև նշվել է, որ Ռ. Կ.-ի կողմից դիմումը ներկայացնելուց հետո կատարված դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ նա ունեցել է թեթև մարմնական վնասվածքներ:

2007 թվականի սեպտեմբերի 11-ին Երևան քաղաքի դատախազությունը որոշել է դիմողի նկատմամբ կիրառել խափանման միջոց՝ ստորագրություն՝ իր բնակության վայրից չհեռանալու մասին: Որպես անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոցի կիրառման հիմնավորում՝ որոշման մեջ նշվել է, որ դիմողն ունի մշտական բնակության վայր, չի խոչընդոտում գործի քննությունը և ազատության մեջ մնալու դեպքում չի թաքնվի կամ խոչընդոտի քննությունը:

2007 թվականի սեպտեմբերի 18-ին դիմողի նկատմամբ կիրառված խափանման միջոցը վերացվել է:

Ինչպես պարզվում է, գործի քննության ընթացքում «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկի պետը Ռ. Կ.-ին պատճառված մարմնական վնասվածքները հաստատող ցուցմունք է տվել, իսկ քրեակատարողական հիմնարկի բժշկական բաժանմունքի ղեկավարը նշել է, որ ինքը Ռ. Կ.-ին բժշկական օգնություն է տրամադրել և համապատասխան գրառում է կատարել բժշկական մատյանում:

2008 թվականի փետրվարի 7-ին դիմողը ձերբակալվել է՝ բռնությամբ զուգորդված՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու մեջ կասկածվելու պատճառով:

2008 թվականի փետրվարի 10-ին դիմողի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել՝ բռնությամբ զուգորդված՝ պաշտոնեական լիազորություններն անցնելու հետ կապված, ինչպես նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով:

Նույն օրը քննիչ Մ.-ն դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների (ընդհանուր իրավասության) դատարան՝ դիմողի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու պահանջով: Որպես այս խափանման միջոցի հիմնավորում՝ քննիչը նշել է, որ եթե դիմողը մնա ազատության մեջ, նա կարող է թաքնվել և խոչընդոտել գործի լրիվ և օբյեկտիվ քննությունը՝ վկաների վրա ազդեցություն գործադրելու միջոցով: Նա անդրադարձել է վերագրվող հանցանքի բնույթին և ծանրությանը, որի համար նշանակվում է մեկ տարին գերազանցող ժամկետով ազատագրելու:

Նույն օրը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է միջնորդությունն այն հիմքով, որ վերագրվող հանցանքը ծանր է, և եթե դիմողը մնա ազատության մեջ, կարող է թաքնվել, խոչընդոտել գործի քննությունը և վկաների վրա ազդեցություն գործադրել: Այսպիսով, դատարանը թույլատրել է

դիմողի՝ երկու ամիս ժամկետով կալանավորումը՝ վերջինիս ձերբակալման օրվանից սկսած:

2008 թվականի փետրվարի 14-ին դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել առաջին ատյանի դատարանի որոշման դեմ: Մասնավորապես, նա պահանջել է իրեն գրավով ազատ արձակել՝ հաշվի առնելով իր բարի համբավը, այն փաստը, որ ինքը նախկինում չի դատվել և ունի անչափահաս երեխա: Սակայն 2008 թվականի փետրվարի 28-ին Վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը՝ գտնելով, որ այն իրավասու չէ կալանքը գրավով փոխարինելու մասին որոշում կայացնելու, քանի որ այդ հարցը չի բարձրացվել առաջին ատյանի դատարանում:

2008 թվականի մարտի 28-ին քննիչ Մ.-ն կրկին դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան՝ դիմողի կալանքի ժամկետը երկարացնելու պահանջով: Որպես միջնորդության հիմնավորում՝ քննիչն անդրադարձել է վերագրվող հանցանքի բնույթին և ծանրությանը և ասել, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ազատ արձակվելու դեպքում դիմողը կարող է թաքնվել կամ խոչընդոտել գործի քննությունը: 2008 թվականի ապրիլի 4-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է միջնորդությունը և երկարացրել է դիմողի կալանքի ժամկետը՝ մինչև 2008 թվականի հուլիսի 7-ը: Ընդ որում, առաջին ատյանի դատարանը մատնանշել է միջնորդության մեջ ներկայացված նույն հիմնավորումները:

2008 թվականի ապրիլի 9-ին դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել Վարչական շրջանի դատարանի որոշման դեմ՝ գրավով ազատ արձակելու պահանջով, որը մերժվել է 2008 թվականի ապրիլի 17-ին: Ըստ դիմողի՝ 2008 թվականի մայիսի 26-ին նույն մեղադրանքը, որն առաջադրվել էր իր նկատմամբ, առաջադրվել է նաև Ա. Գ.-ի և Լ. Հ.-ի նկատմամբ, իսկ որպես խափանման միջոց նրանց նկատմամբ կիրառվել է ստորագրություն՝ բնակության վայրից չհեռանալու մասին:

2008 թվականի մայիսի 30–ին գործի քննությունը պաշտոնապես ավարտվել է, և գործն ուղարկվել է Երևանի քրեական դատարան: 2008 թվականի հունիսի 12–ին Երևանի քրեական դատարանը որոշում է կայացրել գործը վարույթ ընդունելու մասին: Որոշման մեջ նշվել է, որ դիմողի նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխելու անհրաժեշտություն չկա:

2008 թվականի նոյեմբերի 24–ին կայացած դատական նիստի ժամանակ դիմողը դիմել է Երևանի քրեական դատարան՝ խափանման միջոցը փոխելու պահանջով: Նա պնդել է, որ հիմքեր չկան ենթադրելու, որ ինքը կթաքնվի, կխոչընդոտի գործի քննությունը դատավարության ընթացքում կամ կանչվելու դեպքում չի ներկայանա առաջին ատյանի դատարան: Այս առումով նա անդրադարձել է այն փաստին, որ ինքն իր ձերբակալությանը կամ կալանավորմանը նախորդող ժամանակահատվածում չի թաքնվել կամ որևէ կերպ չի փորձել խոչընդոտել արդարադատության իրականացումը՝ չնայած այն հանգամանքին, որ քննությունն իր ձերբակալությունից մի քանի ամիս առաջ արդեն իսկ ընթանում էր: Դիմողն այնուհետև պնդել է, որ ինքն ունի բարի համբավ, ընտանիք և անչափահաս երեխա, ինչպես նաև մշտական բնակության վայր: Նույն օրը գործը քննող դատավորը որոշել է մերժել միջնորդությունը՝ գտնելով, որ քրեական գործով բավարար ապացույց կա, որը չի բացառում դիմողի մասնակցությունը ծանր հանցագործություն կատարելու մեջ:

2009 թվականի հունվարի 12–ին Երևանի քրեական դատարանը դիմողին մեղավոր է ճանաչել և դատապարտել երկու տարի ժամկետով ազատազրկման:

Սույն գործով դիմողը պնդել է, *inter alia* (ի թիվս այլնի), որ դատարանները նրա նկատմամբ կալանք նշանակելու և դրա ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումների համար չեն ներկայացրել «հիմնավոր» և «բավարար» պատճառներ՝ խախտելով Եվրոպական կոնվենցիայի 5–րդ հոդվածի 3–րդ կետը: Եվրոպական դատարանն ի սկզբանե նշում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135–րդ հոդվածով սահմանվում են խափանման միջո-

ցի, այդ թվում՝ կալանքի նշանակումը հիմնավորող հիմքերը: Դրանք կարծես համընկնում են Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում սահմանված հիմքերի հետ: Ընդ որում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածով պահանջվում է, որ կալանք նշանակելու մասին որոշումը լինի պատճառաբանված և պարունակի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորում:

2008 թվականի փետրվարի 10-ին դիմողը բերվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարան, որը քննել և բավարարել է քննիչի՝ նրան կալանավորելու մասին միջնորդությունը: Այսպես վարվելով՝ Վարչական շրջանի դատարանը, ողջամիտ կասկածի առկայությունից բացի, որպես նրա կալանավորումը հիմնավորող հիմք է համարել դիմողի՝ թաքնվելու ու տուժողի և (կամ) վկաների վրա ազդեցություն գործադրելու միջոցով քննությունը խոչընդոտելու ռիսկը:

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը նշել է, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարվել է իր որոշման մեջ վերացական և կարծրատիպային ձևով այդ հիմքերը նշելով՝ չներկայացնելով որևէ պատճառ, այդ թվում՝ փաստ կամ ապացույց առ այն, թե ինչու է այն համարում այդ հիմքերը հիմնավորված դիմողի գործով, և իր պատճառաբանությունը պարզապես սահմանափակելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի համապատասխան մասերի հիշատակմամբ (*տես սույն վճռի 13-րդ կետը*): Չի ներկայացվել որևէ բացատրություն այն հարցի վերաբերյալ, թե ինչու է դատարանը քննիչի միջնորդությունը հիմնավորված համարել, և ինչու է դա անհրաժեշտ եղել՝ չնայած այն հանգամանքին, որ անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոցը, մասնավորապես՝ իր բնակության վայրից չհեռանալու մասին ստորագրությունն արդեն կիրառվել էր դիմողի նկատմամբ մշտական բնակության վայր ունենալու, քննությունը չխոչընդոտելու հիմքով և այն հիմքով, որ ազա-

տության մեջ մնալու դեպքում նա չէր թաքնվի կամ խոչընդոտի քննությունը: Նույնիսկ խափանման այդ միջոցը վերացվել է մի քանի օր հետո (*տես սույն վճռի 7–8–րդ կետերը*): Առաջին ատյանի դատարանը հաշվի չի առել այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են քննության ընթացքում դիմողի վարքագիծը և անձնական բնույթի հանգամանքները, ինչպես նաև ցանկացած այլ վերաբերելի գործոն: Այն նաև չի ուսումնասիրել դիմողի կողմից արված որևէ առարկություն կամ չի դիտարկել նրան գրավով ազատ արձակելու հնարավորությունը:

Եվրոպական դատարանը նշում է, որ դիմողի բողոքները և ազատ արձակելու վերաբերյալ միջնորդությունները, ինչպես նաև քննիչի հետագա միջնորդությունը՝ դիմողի կալանքի ժամկետը երկարացնելու վերաբերյալ, դատարանների կողմից քննվել են միևնույն ձևով (*տես սույն վճռի 15–րդ, 17–րդ, 19–րդ և 24–րդ կետերը*): Եվրոպական դատարանը հաճախ հայտնաբերել է Եվրոպական կոնվենցիայի 5–րդ հոդվածի 3–րդ կետի խախտում, երբ ներպետական դատարանները երկարացրել են դիմողի կալանքի ժամկետը՝ հիմնականում հիմնվելով մեղադրանքի ծանրության վրա և օգտագործելով կարծրատիպային ձևակերպումներ՝ չանդրադառնալով առանձին փաստերի կամ չդիտարկելով այլընտրանքային խափանման միջոցներ (տես, ի թիվս այլ վճիռների, *Սմիրնովայի* գործը՝ վերևում հիշատակված, § 70, *Վասիլկոսկին և այլք ընդդեմ «Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության»* [*Vasilkoski and Others v. “the former Yugoslav Republic of Macedonia”*], թիվ 28169/08, § 64, 2010 թվականի հոկտեմբերի 28, և *Տրետյակովն ընդդեմ Ուկրաինայի* [*Tretyakov v. Ukraine*], թիվ 16698/05, § 59, 2011 թվականի սեպտեմբերի 29):

Եվրոպական դատարանը նշել է, որ տասնմեկ ամիս կալանքի տակ գտնվելուց հետո դիմողը դատապարտվել է, և նրա նկատմամբ նշանակվել է 2 տարի ազատազրկման ձևով պատիժ: Նշված ժամանակահատվածում չի ներկայացվել որևէ հիմնավորում այն մասին,

թե ինչու հնարավոր չի եղել նրան ազատ արձակել նախնական քննության կամ դատական քննության ընթացքում:

Եվ վերջապես Եվրոպական դատարանը արձանագրել է, որ կալանք նշանակելիս և դրա ժամկետը երկարացնելիս կարծրատիպային ձևակերպումների օգտագործումը հաճախ հանդիպող խնդիր է Հայաստանում, և արդեն մի շարք գործերով հայտնաբերվել է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում (տե՛ս *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* [*Piruzyan v. Armenia*], թիվ 33376/07, §§ 97–100, 2012 թվականի հունիսի 26, *Մալխասյանն ընդդեմ Հայաստանի* [*Malkhasyan v. Armenia*], թիվ 6729/07, §§ 74–77, 2012 թվականի հունիսի 26, *Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի* [*Sefilyan v. Armenia*], թիվ 22491/08, §§ 88–93, 2012 թվականի հոկտեմբերի 2), և *Արա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի*¹ վերևում հիշատակված, §§ 54–62):

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Եվրոպական դատարանը համարել է, որ ներպետական դատարանները, ողջամիտ կասկածի առկայությունից բացի, չեն ներկայացրել հիմնավոր և բավարար պատճառներ՝ դիմողի նկատմամբ կալանք նշանակելու և դրա ժամկետը երկարացնելու մասին իրենց որոշումների համար:

Հետևաբար տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

Սույն գործով դիմողը նաև բողոքել է Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն այն մասին, որ ինքը կալանավորվել է հանցանք կատարելու մեջ որևէ հիմնավոր կասկածի բացակայությամբ:

Հաշվի առնելով իր տրամադրության տակ ունեցած նյութերը և վերոնշյալ եզրահանգումները (*տե՛ս սույն վճռի 42-րդ կետը*)՝ Եվրոպական դատարանը գտել է, որ բողոքարկվող փաստերով դիմողի՝ Եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների խախտման որևէ հատկանիշ չի բացահայտվում: Հետևաբար գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է և պետք է մերժվի՝ համաձայն Եվրո-

պական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի և 4-րդ կետի:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը կարող ենք փաստել, որ սույն գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ իր նախադեպային իրավունքում «հիմնավոր» և «բավարար» պատճառներ համարվող հիմնավորումները ներառում են այնպիսի հիմքեր, ինչպիսիք են **թաքնվելու վտանգը, վկաների վրա ներգործելու նպատակով ճնշում գործադրելու կամ ապացույցները կեղծելու ռիսկը, նախնական համաձայնության գալու ռիսկը, կրկին հանցագործություն կատարելու ռիսկը, հասարակական կարգը խախտելու ռիսկը և կալանավորված անձին պաշտպանելու անհրաժեշտությունը** (տե՛ս, օրինակ, *Շթոգմյուլլերն ընդդեմ Ավստրիայի* [*Stögmüller v. Austria*], 1969 թվականի նոյեմբերի 10, § 15, շարք Ա թիվ 9, *Վեմհոֆֆն ընդդեմ Գերմանիայի* [*Wemhoff v. Germany*], 1968 թվականի հունիսի 27, § 14, շարք Ա թիվ 7, *Թոմագին ընդդեմ Ֆրանսիայի* [*Tomasi v. France*], 1992 թվականի օգոստոսի 27, § 95, շարք Ա թիվ 241 Ա, *Թոթն ընդդեմ Ավստրիայի* [*Toth v. Austria*], 1991 թվականի դեկտեմբերի 12, § 70, շարք Ա թիվ 224, *Լեթելիերն ընդդեմ Ֆրանսիայի* [*Letellier v. France*], 1991 թվականի հունիսի 26, § 51, շարք Ա թիվ 207, և *Ի.Ա.-ն ընդդեմ Ֆրանսիայի* [*I.A. v. France*], 1998 թվականի սեպտեմբերի 23, § 108, *Վճիռների և որոշումների մասին գեկույցներ* 1998 VII):

Ընդ որում, կանխավարկածը միշտ պետք է գործի՝ հօգուտ ազատ արձակման: Ազգային դատական մարմինները պետք է, հաշվի առնելով անմեղության կանխավարկածի սկզբունքը, ուսումնասիրեն հանրային շահի վերոնշյալ պահանջի առկայությանը հակասող կամ այն հաստատող կամ 5-րդ հոդվածի կանոնից շեղումը հիմնավորող բոլոր փաստերը և պետք է դրանք նշեն ազատ արձակման դիմումների մասով իրենց որոշումներում: Բացի դրանից, մեղադրյալի թաքնվելու վտանգը չի կարող գնահատվել միայն նրան սպառնացող պատժի խստությամբ: Այն պետք է գնահատել՝ վկայակոչելով մի շարք այլ վերաբերելի գործոններ, որոնք կարող են կամ հաստա-

տել թաքնվելու վտանգի առկայությունը կամ կարող են այն այնքան չնչին դարձնել, որ դրանով չի կարող հիմնավորվել մինչև դատական քննության ավարտը կիրառված կալանքը: Պետք է հաշվի առնել ներգրավված անձի բնութագիրը, նրա բարոյական սկզբունքները, տունը, զբաղվածությունը, գույքը, ընտանեկան կապերը և ցանկացած կապ այն երկրի հետ, որտեղ նա հետապնդվում է, ինչպես նաև անձի միջազգային կապերը: Ավելին, վարույթի պատշաճ իրականացումը մեղադրյալի կողմից խոչընդոտելու վտանգը չի կարող որպես հիմք ընդունվել *in abstracto* (վերացական ձևով), այն պետք է հիմնավորվի փաստացի ապացույցներով:

5. Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի գործով 2017 թվականի սեպտեմբերի 14-ի վճռով (գանգադ թիվ 52316/09) Եվրոպական դատարանն արձանագրել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի հեղկյալ ընթացակարգային խախտումները:

Սույն գործով դիմողը ծնվել է 1987 թվականին և գանգատը Եվրոպական դատարան ներկայացնելու պահին իր պատիժը կրելիս է եղել «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում: Չնշված ամսաթվին դիմողը զորակոչվել է Հայաստանի Հանրապետության բանակ: Այդ ժամանակ նա զինվորական ծառայություն անցնելիս է եղել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում: 2006 թվականի ապրիլի 29-ին դիմողի զորամասի մոտ գտնվող անտառում հայտնաբերվել է նրա ծառայակցի՝ Ա. Հ.-ի դին: Նրան գտել են ծառից կախված՝ ձեռքերը մեջքի հետևում մետաղալարով կապած: Նույն օրը Չանգեզուրի կայազորի զինվորական դատախազությունը քրեական գործ է հարուցել մահվան փաստի առթիվ: Կարճ ժամանակ անց գործի քննությունն հանձնել է Չինվորական դատախազությունը, և գործն ընդունվել է քննիչ Ա. Կ.-ի վարույթ:

Գործի նյութերի համաձայն՝ 2006 թվականի մայիսի 2-ին դիմողը քրեական գործի առթիվ հարցաքննվել է Կապան քաղաքում: Նույն օրը դիմողի և մեկ այլ ծառայակցի՝ Ռ. Հ.-ի նկատմամբ նախորդող ամսվա ընթացքում Ա. Հ.-ին ծեծի ենթարկելու համար կիրառվել է

կարգապահական տույժ՝ տասն օր ժամկետով կալանքի ձևով: Հաջորդ օրը դիմողն ու Ռ.Հ.-ն տեղափոխվել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչություն (Ռազմական ոստիկանության վարչություն), որտեղ պահվել են մինչև 2006 թվականի մայիսի 12-ը: Ռազմական ոստիկանության վարչությունում կալանքի տակ գտնվելու ընթացքում դիմողը և Ռ.Հ.-ն հարցաքննվել են որպես քրեական գործով վկաներ: 2006 թվականի մայիսի 7-ին տեղի ունեցած հարցաքննության ժամանակ Ռ.Հ.-ն խոստովանել է, որ ինքը և դիմողն սպանել են Ա.Հ.-ին: 2006 թվականի մայիսի 20-ին դիմողին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասով և 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով՝ ծանրացնող հանգամանքներում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնների խախտման և ծանրացնող հանգամանքներում սպանության համար: Մասնավորապես, քննիչը հանգել է այն եզրակացության, որ 2006 թվականի մարտ ամսին դիմողը Ռ.Հ.-ի հետ միասին Ա.Հ.-ին ծեծի է ենթարկել, իսկ 2006 թվականի ապրիլի 28-ին ծառից կախելով՝ սպանել է նրան:

Այդուհանդերձ դիմողը վիճարկել է գործի նյութերում արտացոլված փաստերը և պնդել է, որ իրեն Կապանի ռազմական ոստիկանության վարչություն են տեղափոխել 2006 թվականի մայիսի 1-ին և այնտեղ պահել են մինչև 2006 թվականի մայիսի 3-ը: Դրանից հետո իրեն տեղափոխել են Ռազմական ոստիկանության վարչության կարգապահական մեկուսարան, որտեղ պահել են մինչև 2006 թվականի մայիսի 20-ը: Այդ ամբողջ ընթացքում ռազմական ոստիկանության աշխատակիցներն ու քննիչներն իրեն ենթարկել են դաժան ծեծի ու խոշտանգումների, հարվածել են մարմնի փափուկ մասերին, ինչպես նաև «չերևացող» մասերին, այդ թվում՝ ներբաններին՝ ստիպելով նրան խոստովանել սպանություն կատարելու փաստը: Այդ ժամանակ իրեն իրավական ներկայացուցիչ չի տրամադրվել: Ռ.Հ.-ն և մեկ այլ ծառայակից, որոնք Ա.Հ.-ի մահվան փաստի առթիվ տեղափոխվել էին Ռազմական ոստիկանության վարչություն,

նույնպես ծեծի են ենթարկվել: Ռ. Հ.-ն, չկարողանալով դիմանալ ծեծին, խոստովանական ցուցմունք է տվել:

2006 թվականի հունիսի 21-ին՝ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում, դիմողը բողոք է ներկայացրել, *inter alia* (ի թիվս այլնի), Գլխավոր դատախազություն: Սեպտեմբերի 21-ին քննիչ Ա. Կ.-ն, որին ուղարկվել էր դիմողի բողոքը, հարցաքննել է Մ. Ղ.-ին, Ա. Մար.-ին և Ա. Մ.-ին, և նրանք բոլորը հերքել են դիմողի նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերելու փաստը: Սեպտեմբերի 23-ին քննիչը որոշել է քրեական գործով վարույթ չհարուցել: Ըստ դիմողի՝ այդ որոշման մասին ինքը չի ծանուցվել և դրա մասին ինքն իմացել է միայն քննության ավարտից հետո՝ քրեական գործի նյութերն ուսումնասիրելիս:

2006 թվականի նոյեմբերի 14-ին քրեական գործը դատական քննության նպատակով ուղարկվել է Սյունիքի մարզային դատարան: Դատական քննության ժամանակ դիմողն ու Ռ. Հ.-ն պնդել են, որ նախնական քննության ընթացքում իրենց նկատմամբ վատ վերաբերմունք է ցուցաբերվել: 2007 թվականի մայիսի 16-ին Սյունիքի մարզային դատարանը, դիմողի և Ռ. Հ.-ի՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումները հիմք ընդունելով, նշանակել է դատաբժշկական փորձաքննություն: Այն ակնհայտորեն որոշել է կասեցնել գործի վարույթը և խնդրել է Զինվորական դատախազությանը՝ քննել վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումները: Դիմողի՝ 2007 թվականի հունիսի 15-ին կազմված դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ նրա մարմնի վրա վնասվածքների հետքեր չեն հայտնաբերվել: Դատաբժշկական փորձաքննության եզրակացության մեջ նշված է նաև, որ քանի որ հետազոտությունն անցկացվել է բավականին ուշ (ենթադրյալ վատ վերաբերմունքին ենթարկվելուց մեկ տարի անց), և բժշկական որևէ փաստաթուղթ չկա, հնարավոր չէ ասել՝ արդյոք դիմողի վրա եղել է որևէ մարմնական վնասվածք, թե ոչ, քանի որ հնարավոր է, որ վնասվածքներ եղել են, սակայն առանց որևէ հետք թողնելու անցել են:

Ռ.Հ.-ի բժշկական հետազոտության արդյունքում հայտնաբերվել է քթի հին կոտրվածք, սակայն դատաբժշկական փարձաքննության եզրակացության համաձայն՝ հնարավոր չի եղել որոշել, թե կոտրվածքը երբ է առաջացել: Մարմնական այլ վնասվածքներ չեն հայտնաբերվել: Պարզվում է, որ քննիչը դրանից հետո հարցաքննել է մի քանի անձանց, այդ թվում՝ Ռ.Հ.-ի նախկին ծառայակիցներին, որոնք նշել են, որ իրենց ծառայության ժամանակ նկատել են, որ Ռ.Հ.-ի քիթը դեֆորմացված է, և որ Ռ.Հ.-ն իրենց ասել է, որ իր քիթը վնասվել է բանակ զորակոչվելուց առաջ:

2007 թվականի հունիսի 20-ին Գորիսի կայազորի զինվորական դատախազությունը հրաժարվել է քրեական գործով վարույթ հարուցել վատ վերաբերմունքի վերաբերյալ Ռ.Հ.-ի պնդումների հիման վրա՝ հանցագործության փաստը հաստատող ապացույցների բացակայության պատճառով, որից հետո 2007 թվականի օգոստոսի 2-ին Զինվորական դատախազությունը գրություն է ուղարկել Սյունիքի մարզային դատարան՝ տեղեկացնելով, որ դիմողի և Ռ.Հ.-ի՝ ծեծի ենթարկվելու վերաբերյալ պնդումների ճշմարտացիությունը չի հաստատվել: Նամակում հղում է կատարվել 2006 թվականի սեպտեմբերի 23-ի և 2007 թվականի հունիսի 20-ի որոշումներին, ինչպես նաև երկու դատաբժշկական փորձաքննությունների արդյունքներին:

Արդյունքում 2007 թվականի օգոստոսի 29-ին Սյունիքի մարզային դատարանը, Ա.Հ.-ի մահվան հետ կապված, դիմողին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ առանց ծանրացուցիչ հանգամանքների սպանություն կատարելու համար, ինչպես նաև Ա.Հ.-ին ծեծի ենթարկելու հետ կապված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտում կատարելու համար: Այն դիմողին դատապարտել է գումարային ինն ու կես տարվա ազատազրկման: Ռ.Հ.-ն նույնպես մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է ազատազրկման: Մարզային դատարանը հանգել է այն եզրակացության, որ Ռ.Հ.-ի ցուցմունքները կարելի է համարել ընդունելի, քանի որ

պարտադրված խոստովանության վերաբերյալ նրա պնդումները չեն հիմնավորվել:

Սույն գործով 2006 թվականի հունիսի 21-ին, *inter alia*, Գլխավոր դատախազություն դիմողի կողմից ներկայացված բողոքի արդյունքում իշխանությունները տեղեկացվել են նրա նկատմամբ ենթադրաբար ցուցաբերված վատ վերաբերմունքի մասին (*տես սույն վճռի 15-րդ կետը*): Այդ բողոքը եղել է բավականաչափ մանրամասն, պարունակել է հստակ ամսաթվեր, վայրեր և ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց անունները: Եվրոպական դատարանի կարծիքով այն, հետևաբար, կարող է համարվել «վիճարկելի պնդում»: Ճիշտ է, որ դիմողի բողոքը ներկայացվել է ենթադրյալ վատ վերաբերմունքից հետո մեկ ամիս ուշացումով: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը չի համարում, որ այդ ուշացումն այնքան երկար էր, որ բողոքը *ipso facto* (այդ փաստի ուժով) համարվեր անհիմն կամ չունենար հաջողության հասնելու հեռանկար: Ավելին, բժշկական տեղեկանքների բացակայությունը չի փոխում այս եզրահանգումը: Ուստի իշխանությունները դիմողի պնդումների մասով արդյունավետ քննություն իրականացնելու պարտավորություն են ունեցել:

Եվրոպական դատարանը նկատում է, որ դիմողի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումները քննվել են Զինվորական դատախազության կողմից, որի եզրահանգումները հետագայում հաստատվել են ներպետական դատարանների կողմից (*տես սույն վճռի 27-րդ և 41-րդ կետերը*): Հետևաբար, **սույն գործով հարցը ոչ այնքան այն է, թե արդյոք ընդհանրապես անցկացվել է որևէ տիպի քննություն, այլ այն, թե արդյոք այն անցկացվել է պատշաճորեն, արդյոք իշխանությունները տրամադրված են եղել լիովին ուսումնասիրելու դիմողի պնդումները և, համապատասխանաբար, արդյոք քննությունը կարող էր Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով համարվել «արդյունավետ»:**

Անդրադառնալով դիմողի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումներին իշխանությունների արձագանքի արդյունավետությանը, Եվրո-

պական դատարանը նկատում է, որ 2006 թվականի հունիսի 21-ին, *inter alia*, Գլխավոր դատախազություն նրա կողմից ներկայացված բողոքն ուղարկվել է Զինվորական դատախազություն, որն էլ հենց զբաղվում էր նրա դեմ հարուցված քրեական գործի քննությամբ: Ավելին, նրա բողոքն ուղարկվել է նույն քրեական գործի քննության համար պատասխանատու քննիչ Ա. Կ.-ին, որն էլ ի վերջո որոշել է ռազմական ոստիկանության համապատասխան աշխատակիցների նկատմամբ հետապնդում չիրականացնել: Եվրոպական դատարանը նկատում է, որ կազմակերպական ենթակայության տեսանկյունից Ռազմական ոստիկանությունն առանձին մարմին է, որը ենթակա է Պաշտպանության նախարարությանը, այլ ոչ թե Զինվորական դատախազությանը, որը մտնում է հետապնդում իրականացնող մարմինների կազմի մեջ: Սակայն հաշվի առնելով այն, որ քննիչ Ա. Կ.-ն կոչված էր քննելու ռազմական ոստիկանության այն աշխատակիցների գործողությունները, որոնք ներգրավված էին եղել իրեն հանձնարարված քրեական գործի նախնական քննության մեջ, և որ դիմողի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների քննության արդյունքը պարտադիր հետևանքներ կունենար այդ գործով ապացույցների ընդունելիության վրա, Եվրոպական դատարանը չի կարող այդպիսի քննությունը համարել անկախության պահանջը բավարարող: Ուշագրավ է այն, որ քննիչ Ա. Կ.-ի որոշումը, որով մերժվում էր քրեական գործի հարուցումը, պարունակում էր ընդհանրացված եզրակացություններ, որոնք զուրկ էին որևէ պատճառաբանությունից: Եվ որ ամենակարևորն է, որևէ բացատրություն չի տրվել այն մասին, թե ինչու են ռազմական ոստիկանության աշխատակիցների ցուցմունքները համարվել ավելի վստահելի, քան դեպքերի մասին դիմողի տված ցուցմունքները (*տես սույն վճռի 17-րդ կետը*): Դա ցույց է տալիս, որ վարույթն իրականացնող մարմինն առանց որևէ հիմնավորման նախապատվությունը տվել է ոստիկանության աշխատակիցների կողմից տրամադրված ապացույցներին (համեմատիր *Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի [Nalbandyan v. Armenia]*, թիվ 9935/06 և 23339/06, § 123, 2015 թվականի մարտի 31):

Եվրոպական դատարանը նկատել է նաև, որ իշխանությունները դիմողի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների մասին տեղեկացվել են 2006 թվականի հունիսի 21-ին: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումից երևում է, որ Ա. Կ.–ի կողմից ձեռնարկված միակ քննչական գործողությունը եղել է դիմողի բողոքն ստանալուց երեք ամիս հետո ռազմական ոստիկանության այն աշխատակիցներին հարցաքննելը, որոնք ենթադրաբար վատ են վերաբերվել նրան: Մասնավորապես, համապատասխան արձանագրությունների համաձայն՝ Մ. Ղ.–ն, Ա. Մար.–ը և Ա. Մ.–ն հարցաքննվել են 2006 թվականի սեպտեմբերի 21-ին (*տես վճռի 16-րդ կետը*): Հարցաքննությանը նախորդող երեք ամիսների ընթացքում կամ դրանից հետո այլ միջոցառումներ չեն ձեռնարկվել, մինչդեռ Ա. Կ.–ն նշված աշխատակիցների դեմ քրեական գործ հարուցելը մերժելու մասին իր որոշումն արդեն իսկ կայացրել է 2006 թվականի սեպտեմբերի 23-ին՝ հիմնվելով զուտ նրանց ցուցմունքների և կարգապահական մեկուսարանի պետի գրության վրա (*տես սույն վճռի 17-րդ կետը*): Այս համատեքստում Եվրոպական դատարանը գտել է, որ իշխանությունները դիմողի բողոքին չեն արձագանքել **արագ և պատշաճ կերպով**:

Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանը նկատել է, որ վարույթն իրականացնող մարմինն ունեցել է դիմողին, ոստիկանության աշխատակիցներին և վկաներին հարցաքննելու, բժշկական զննություն նշանակելու և այլ ապացույցներ ձեռք բերելու լիազորություն: Փոխարենը զինվորական դատախազության քննիչը պարզապես հարցաքննել է ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց և իր եզրակացությունների համար հիմք է ընդունել նրանց ցուցմունքները՝ բացառելով դիմողի նկատմամբ վատ վերաբերմունքը: Եվրոպական դատարանը նկատել է, որ քննիչը չի հարցաքննել դիմողին, առավել ևս՝ չի փորձել նշված աշխատակիցների հետ առերեսում իրականացնելու միջոցով պարզել դեպքերի մասին նրանց հակասող պնդումները: Բացի դրանից, վարույթն իրականացնող մարմինը դիմողի բողոքը ստանալուց անմիջապես հետո չի նշանակել բժշկական զննություն, որը հնարավոր է, որ հանգեցրել է կարևոր

նշանակություն ունեցող ապացույցների կորստի: Փոխարենը, քննիչը հիմնվել է ռազմական ոստիկանության շտաբի մեկուսարանի պետի գրության վրա, որի մեջ նշվում էր, որ դիմողի վրա մարմնական վնասվածքների նշաններ չեն եղել: Եվրոպական դատարանն այնուամենայնիվ նկատել է, որ գրությունը չի հիմնավորվել որևէ բժշկական փաստաթղթով, ինչպես նաև դրանից չէր կարելի ենթադրել, որ դիմողը բժշկական զննություն է անցել: Եվրոպական դատարանը նաև նկատել է, որ դիմողը բժշկական զննության է ենթարկվել ենթադրյալ վատ վերաբերմունքից միայն մեկ տարի անց՝ Սյունիքի մարզի դատարանի որոշումից հետո: Ուշ անցկացվելու և բժշկական փաստաթղթերի բացակայության պատճառով բժշկական զննությունը չի հանգեցրել որևէ օգտակար եզրակացության:

Վերոնշյալից ելնելով՝ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ իշխանությունները չեն իրականացրել դիմողի՝ վատ վերաբերմունքի մասին պնդումների արդյունավետ քննություն, հետևաբար, տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածի ընթացակարգային խախտում:

Ընդհանրացնելով Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները՝ կարող ենք փաստել, որ արձանագրվել են արդյունավետ քննության հետևյալ չափանիշերի խախտումները.

- 1. անհապաղության չափանիշի խախտում կարող է գնահատվել, օրինակ՝ գրությունը չի հիմնավորվել որևէ բժշկական փաստաթղթով, ինչպես նաև դրանից չէր կարելի ենթադրել, որ դիմողը բժշկական զննություն է անցել, ինչպես նաև այն, որ դիմողը բժշկական զննության է ենթարկվել ենթադրյալ վատ վերաբերմունքից միայն մեկ տարի անց՝ Սյունիքի մարզի դատարանի որոշումից հետո:*
- 2. անկախության և անկողմնակալության չափանիշի խախտման դրսևորում է այն փաստը, որ կազմակերպական ենթակայության տեսանկյունից Ռազմական ոստիկանությունն առանձին մարմին է, որը ենթակա է Պաշտպանության նա-*

խարարությանը, այլ ոչ թե Զինվորական դատախազությանը, որը մտնում է հետապնդում իրականացնող մարմինների կազմի մեջ: Սակայն հաշվի առնելով այն, որ քննիչ Ա. Կ.–ն կոչված էր քննելու ռազմական ոստիկանության այն աշխատակիցների գործողությունները, որոնք ներգրավված էին եղել իրեն հանձնարարված քրեական գործի նախնական քննության մեջ, և որ վաղ վերաբերմունքի քննության արդյունքը պարտադիր հետևանքներ կունենար այդ գործով ապացույցների ընդունելիության վրա,

3. ամբողջականության չափանիշի խախտում է այն փաստը, որ քննիչը չի հարցաքննել դիմողին, առավել ևս՝ չի փորձել նշված աշխատակիցների հետ առերեսում իրականացնելու միջոցով պարզել դեպքերի մասին նրանց հակասող պնդումները: Բացի դրանից, վարույթն իրականացնող մարմինը դիմողի բողոքը ստանալուց անմիջապես հետո չի նշանակել բժշկական զննություն, որը հնարավոր է, որ հանգեցրել է կարևոր նշանակություն ունեցող ապացույցների կորստի: Փոխարենը, քննիչը հիմնվել է ռազմական ոստիկանության շտաբի մեկուսարանի պետի գրության վրա, որի մեջ նշվում էր, որ դիմողի վրա մարմնական վնասվածքների նշաններ չեն եղել:

6. Թեյմուրազյանն ընդդեմ Հայաստանի գործով 2018 թվականի մարտի 15–ի վճռով (գանգապ թիվ 17521/09) Եվրոպական դատարանը մերժել է դիմողի գանգապը Եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածի նյութաիրավական և ընթացակարգային սուպեկոնտրոլ:

2005 թվականի ապրիլի 13–ին Կենտրոն և Նորք–Մարաշ վարչական շրջանների դատախազության քննիչ Ն.–ն ՀՀ քրեական օրենսգրքի 316–րդ հոդվածի 1–ին մասի հատկանիշներով հարուցել է քրեական գործ դիմողի նկատմամբ, ով կասկածվում էր երթևեկության կանոնների խախտման պատճառով դիմողի ավտոմեքենան

կանգնեցրած ճանապարհային ոստիկանության երկու ծառայողներին՝ Վ.Ս.-ի և Գ.Գ.-ի նկատմամբ բռնություն գործադրելու մեջ:

Նույն օրը դիմողը ձերբակալվել է, իսկ երկու օր անց նրան նույն հոդվածով մեղադրանք է առաջադրվել երկու ճանապարհային ոստիկանների նկատմամբ բռնություն գործադրելու համար: Քննության ընթացքում դիմողը ցուցմունք է տվել այն մասին, որ Վ.Ս.-ն և Գ.Գ.-ն իրենից պահանջել են կաշառք՝ երթևեկության կանոնների խախտումը չարձանագրելու համար, իսկ երբ նա մերժել է, նրան ենթարկել են ծեծի: Դիմողի նկատմամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որից պարզվել է, որ նա ստացել է վնասվածքներ, այդ թվում՝ կոնտուզիա և այտուսկրի կոտրվածք: 2005 թվականի հունիսի 10-ին դիմողի պաշտպանը գրություն է ուղարկել քննիչին՝ պնդելով, որ դիմողն է բռնության ենթարկվել Վ.Ս.-ի և Գ.Գ.-ի կողմից, այլ ոչ թե հակառակը: Ուստի դիմողի գործողությունների որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով սխալ է, իսկ ոստիկանության ծառայողներին որևէ մեղադրանք չի առաջադրվել: Պաշտպանը պահանջել է, որ քննիչն առաջադրի նման մեղադրանք: 2005 թվականի հունիսի 21-ին քննիչ Ն.-ն, վերանայելով դիմողի դեմ քրեական գործի նյութերը, որոշում է ընդունել այդ քրեական գործի մասը կարճելու և Վ.Ս.-ի ու Գ.Գ.-ի կողմից դիմողին վնասվածքներ հասցնելու մասով քրեական հետապնդում չիրականացնելու մասին: Քննիչը պարզել է, որ ճանապարհային ոստիկանության ծառայողները դիմողին վնասվածքներ են պատճառել, քանի որ փորձել են ձերբակալության ժամանակ հաղթահարել նրա դիմադրությունը, ուստի նրանց գործողությունները հանդիսացել են ուժի իրավաչափ կիրառում:

2006 թվականի փետրվարի 16-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանն արդարացրել է դիմողին՝ գտնելով, որ նա մեղավոր չէ իրեն վերագրվող հանցանքի կատարման մեջ: Առաջին ատյանի դատարանը նաև վճռել է, որ ոստիկանության ծառայողներ Վ.Ս.-ն և Գ.Գ.-ն անցել են իրենց լիազորությունները՝ բռնություն գործադրելով դիմողի նկատմամբ,

ինչը լուրջ վնաս է պատճառել դիմողին և իր ընտանիքին ու լուրջ հետևանքներ առաջացրել նրանց համար: Մասնավորապես, դիմողն ապօրինաբար բերման է ենթարկվել ոստիկանության բաժանմունք և ձերբակալվել ճանապարհային ոստիկանության ծառայողներ Վ.Ս.-ի և Գ.Գ.-ի կողմից տրամադրված կեղծ տեղեկությունների հիման վրա: Ոստիկանության ծառայողները դիմողին ծեծի են ենթարկել, ինչի հետևանքով վերջինս ստացել է վնասվածքներ, այդ թվում՝ կոնտուզիա և այտուսկրի կոտրվածք: Ավելին, նրանք դիմողին բռնի կերպով նստեցրել են ոստիկանության ավտոմեքենան և տարել նրան ոստիկանության բաժանմունք՝ ճանապարհի՝ երթևեկության արտաքին գոտու վրա թողնելով դիմողի ավտոմեքենան, որում գտնվում էր նրա ութամյա որդին: Արդյունքում դիմողի որդին ստացել է հոգեբանական տրավմա, և նրա առողջությանը վնաս է հասցվել: Չնայած այն փաստին, որ դիմողը չէր խախտել [իր նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված] չեռանալու մասին ստորագրության պայմանները, և որ նա հաշմանդամություն ունեցող անձ էր և իր խնամքի տակ ուներ երկու անչափահաս երեխա՝ քննիչը դիմել էր դատարան՝ նրան կալանավորելու վերաբերյալ չհիմնավորված միջնորդությամբ: Արդյունքում դիմողը կալանքի տակ էր եղել 2005 թվականի մայիսի 5-ից մինչև հունիսի 20-ը: Ավելին, 2005 թվականի հունիսի 20-ին նրան ստորագրությամբ բաց թողնելու հիմքերն այն նույն հիմքերն էին, որոնք օգտագործվել էին 2005 թվականի ապրիլի 16-ին՝ հիմնավորելու համար նրան ստորագրությամբ բաց թողնելը՝ նախնական կալանքի փոխարեն: Առաջին ատյանի դատարանն ի վերջո գտել է, որ քննիչն ընդունել է ոստիկանության ծառայողների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու անհիմն որոշում՝ գնահատելով նրանց գործողությունները որպես օրինական, և, հղում կատարելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածին, դիմել է գլխավոր դատախազին, որպեսզի վերջինս նրանց դեմ քրեական վարույթ հարուցի ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 3-րդ մասով՝ լիազորություններն անցնելու համար, որն առաջացրել է ծանր հետևանքներ:

2007 թվականի նոյեմբերի 27-ին դիմողը բողոք է ներկայացրել դատարաններ՝ փորձելով չեղյալ ճանաչել քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշումը, քանի որ այն հակասում էր դատարանների այն եզրահանգումներին, որոնք արվել էին նրա գործով դատական քննության ընթացքում՝ ոստիկանության ծառայողների գործողությունները գնահատելիս:

Վարչական շրջանի դատախազը պնդել է, որ դիմողի բողոքը պետք է մերժվի, քանի որ նա բաց է թողել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված վեցամսյա ժամկետը: Ի պատասխան՝ դիմողը պնդել է, որ, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի՝ այդ հոդվածում նշված ժամկետները չեն գործում նոր երևան եկած հանգամանքների պարագայում, ինչն իր դեպքում իր քրեական գործի շրջանակներում կայացված դատավճիռներն էին: Բացի դրանից, քրեական հետապնդման մարմինը օրենքով պարտավոր է եղել իր նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել նրա իրավունքները վերականգնելու համար:

2008 թվականի մարտի 25-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը որոշել է մերժել բողոքը՝ գտնելով, որ վարչական շրջանի դատախազի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի վերաբերյալ փաստարկները ճիշտ են: Այն նաև նշել է, որ վարչական շրջանի դատախազությունը չի կարող պատասխանատվություն կրել դիմողի կողմից քննիչի որոշումը պատշաճ ժամկետում չվիճարկվելու համար:

Դիմողը վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ: 2008 թվականի մայիսի 19-ին Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է դիմողի վերաքննիչ բողոքը՝ գտնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառելի չէ նրա գործի շրջանակներում, և վճռելով, որ դիմողը չի վիճարկել քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ և 290-րդ հոդվածներով, ինչպես նաև գործը վերսկսելու պահանջ ներկայացնելու համար 426-րդ հոդվածի

3-րդ մասով սահմանված ժամկետներում: Վերաքննիչ դատարանի որոշումը ենթակա էր բողոքարկման այն կայացնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում: 2009 թվականի մարտի 16-ին դիմողը վճռաբեկ բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարանի որոշման դեմ, ինչպես նաև խնդրել, որ բողոքարկման բաց թողնված մեկամսյա ժամկետը վերականգնվի: 2009 թվականի ապրիլի 8-ին Վճռաբեկ դատարանը գտել է, որ դիմողը չի ապացուցել, որ ունեցել է հիմնավոր պատճառներ՝ սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու համար, և որոշել է մերժել դիմողի վճռաբեկ բողոքի քննությունը:

Սույն գործով դիմողը բողոքել է, որ նա ենթարկվել է վատ վերաբերմունքի, և որ մարմինները չեն իրականացրել արդյունավետ քննություն այս փաստով: Նա հիմնվել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի վրա:

Սույն գործով Եվրոպական դատարանը վերահաստատել է, որ Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնը պարտադրում է դիմողներին նախ օգտագործել իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք սովորաբար հասանելի են և բավարար ներպետական իրավական համակարգում՝ ենթադրյալ խախտումների դիմաց նրանց փոխհատուցում ստանալու հնարավորություն տալու համար (տե՛ս *Դեմոպուլոսը և այլք ընդդեմ Թուրքիայի* (որոշում) [ՄԴ] [*Demopoulos and Others v. Turkey* (dec.) [GC]], թիվ 46113/99 և այլն, ՄԻԵԴ 2010): Իրավական պաշտպանության այդպիսի միջոցների առկայությունը պետք է ոչ միայն տեսականորեն, այլ նաև գործնականում բավարար չափով որոշակի լինի, քանի որ դրանց բացակայությունը կհանգեցնի մատչելիության և արդյունավետության անհրաժեշտ մակարդակի բացակայության (տե՛ս, *Պակսասն ընդդեմ Լիտվայի* [ՄԴ] [*Paksas v. Lithuania* [GC]], թիվ 34932/04, § 75, ՄԻԵԴ 2011 (քաղվածքներ)): Կառավարությունը, որը պնդում է չսպառելու մասին, պարտավորվում է Եվրոպական դատարանում ապացուցել, որ իրավական պաշտպանության այդ միջոցը եղել է արդյունավետ, տվյալ ժամանակահատվածում

տեսականորեն ու գործնականում հասանելի, այսինքն՝ այն հասանելի է եղել, դրա միջոցով հնարավոր է եղել դիմողի բողոքների մասով փոխհատուցում տրամադրել, ինչպես նաև դրանով ընձեռվել է հաջողության հասնելու ողջամիտ հեռանկար (տես *Քենեդին ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Kennedy v. the United Kingdom*], թիվ 26839/05, § 109, 2010 թվականի մայիսի 18): Ապացուցման պարտականությունը կատարելուց հետո դիմողի վրա է դրվում այն փաստը հաստատելու պարտականությունը, որ Կառավարության կողմից առաջարկվող իրավական պաշտպանության միջոցը, ըստ էության, սպառված է եղել կամ որոշ պատճառներով գործի կոնկրետ հանգամանքներում եղել է ոչ պատշաճ և անարդյունավետ (տես Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի [ՄԴ] [*Selmouni v. France* [GC]], թիվ 25803/94, § 76, ՄԻԵԴ 1999–V):

Սույն գործով Եվրոպական դատարանը նաև վերահաստատել է, որ այն դեպքում, երբ ի սկզբանե պարզ է, որ դիմողին հասանելի չէ որևէ արդյունավետ իրավական պաշտպանության միջոց, վեցամսյա ժամկետը սկսվում է այն արարքների կամ միջոցառումների օրվանից, որոնց վերաբերյալ ներկայացվում է բողոք, կամ այդ արարքի, դրա ազդեցության կամ դիմողին հասցվող վնասի մասին տեղեկանալու օրվանից (տես, ի թիվս այլ վճիռների, *Վարնավան և այլք ընդդեմ Թուրքիայի* [ՄԴ] [*Varnava and Others v. Turkey* [GC]], թիվ 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90 և 16073/90, § 157, ՄԻԵԴ 2009): Երբ դիմողն օգտվում է իրավական պաշտպանության ակնհայտորեն առկա միջոցից և միայն հետագայում է տեղեկանում այն հանգամանքների մասին, որոնք այդ միջոցը դարձնում են անարդյունավետ, վեցամսյա ժամկետն ավելի նպատակահարմար է հաշվարկել այն օրվանից, երբ դիմողն առաջին անգամ տեղեկացել կամ պետք է տեղեկացած լիներ այդ հանգամանքների մասին:

Սույն գործով դիմողն իր դեմ քրեական գործով քննության ընթացքում պնդել է, որ ենթադրյալ տուժողների, մասնավորապես՝ ճանապարհային ոստիկանության ծառայողներ Վ. Ս.–ի և Գ. Գ.–ի կողմից

ենթարկվել է վատ վերաբերմունքի: Նրա պնդումները մերժվել են իր քրեական գործը քննող քննիչի կողմից 2005 թվականի հունիսի 21-ին ընդունված որոշման մեջ, որը վերնագրված է «Որոշում քրեական գործի մասը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին» (*տես վճռի 17-րդ կետը*): Կառավարությունը պնդել է, որ դիմողը կարող էր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ և 290-րդ հոդվածների հիման վրա վիճարկել քննիչի որոշումը, ինչը նա չի արել: Ներպետական դատարաններն իրենց հերթին գտել են, որ դիմողը բաց է թողել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով և 290-րդ հոդվածով սահմանված՝ բողոքարկման ժամկետները (*տես վճռի 24-րդ և 26-րդ կետերը*):

Եվրոպական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ իրավական պաշտպանության այս միջոցների՝ տեսականորեն, ինչպես նաև գործնականում բավարար չափով որոշակի լինելը կասկածահարույց է: Այն ընդգծում է, որ նշված երեք հոդվածներից յուրաքանչյուրով սահմանվում էն տարբեր ժամկետներ (*տես վճռի 39-րդ, 46-րդ և 47-րդ կետերը*), և ենթադրելով, որ բոլոր երեքը կիրառելի էին դիմողի գործով, սա պետք է որ անխուսափելիորեն շփոթմունք առաջացներ դատավարական կանոններին հետևելիս: Ուստի չի կարելի պնդել, որ դիմողն իր տրամադրության տակ ուներ իրավական պաշտպանության արդյունավետ միջոց՝ ընդդեմ քննիչի՝ 2005 թվականի հունիսի 21-ի որոշման:

Այնուամենայնիվ, քննիչի որոշումից հետո՝ 2006 թվականի փետրվարի 16-ին, առաջին ատյանի դատարանը, քննելով դիմողի քրեական գործը, գտել է, որ դիմողի հանդեպ վատ վերաբերմունքի փաստը հաստատված է, իսկ քննիչի որոշումը՝ անհիմն, և դիմել գլխավոր դատախազին՝ ոստիկանության ծառայողների դեմ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթի հիման վրա քրեական գործ հարուցելու: Սա կարող է դիտվել որպես առաջին քայլ դիմողի՝ [իր հանդեպ] վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների մասով նոր քննություն սկսելու ուղղությամբ: Սակայն բողոք ներկայացնելու արդյունքում այդ որոշումը 2006 թվականի նոյեմբերի

12-ին բեկանվել է Վերաքննիչ քրեական դատարանի կողմից, որը, ընդունելով դիմողի հանդեպ վատ վերաբերմունքի փաստը, այնուամենայնիվ, մերժել է այդ փաստի առթիվ քննություն իրականացնելու պահանջով դիմելը և փոխարենը կիրառել է քրեական գործով վարույթը վերսկսելու վերաբերյալ դրույթները ու գտել, որ վերսկսման հնարավորությունն արգելվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածով (*տես սույն վճռի 20-րդ կետը*): Դիմողը վճռաբեկ բողոք չի ներկայացրել դատավճռի դեմ, ինչպես նաև չի դիմել Եվրոպական դատարան այդ դատավճռի կայացման օրվանից հետո վեց ամսվա ընթացքում՝ ենթադրելով, որ նման բողոքը իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չէ. փոխարենը նա փորձել է այդ հարցը ևս մեկ անգամ բարձրացնել դատարաններում՝ օգտագործելով հաջողության հասնելու հեռանկարներ չունեցող մի ընթացակարգ: Սակայն այդ փուլում՝ ամենաուշը 2006 թվականի նոյեմբերի 12-ից ի վեր, դիմողի համար պետք է պարզ լիներ, որ այլևս որևէ լրացուցիչ քննություն չէր իրականացվելու իր՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ պնդումների մասով, իսկ նույն հարցով դատարաններ դիմելու ցանկացած նոր փորձ լինելու էր ապարդյուն: Ուստի Եվրոպական դատարանը չի կարող հաշվի առնել դիմողի կողմից 2007 թվականի նոյեմբերի 27-ին հարուցված վարույթը՝ Եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

Եվրոպական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ ինչ վերաբերում է դիմողի կողմից 2007 թվականի սեպտեմբերի 11-ին և 2009 թվականի փետրվարի 26-ին ներկայացված երկու քաղաքացիական հայցերին, ապա այստեղ Եվրոպական դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ Կառավարության՝ այդպիսի պահանջների՝ հաջողության հասնելու հեռանկարներ չունենալու վերաբերյալ փաստարկներին՝ հետևյալ պատճառներով: Այն վերահաստատում է, որ պետական պաշտոնատար անձանց կողմից ուժի ապօրինի կիրառման ոլորտում՝ ոչ միայն զանցանքի, անգործության կամ անփութության դեպքում, քաղաքացիական կամ վարչական վարույթները, որոնք ավելի շատ նպատակ են հե-

տապանդում միայն փոխհատուցում տրամադրելու, այլ ոչ թե ապահովելու պատասխանատու անձանց բացահայտումն ու պատիժը, չեն համարվում իրավական պաշտպանության պատշաճ և արդյունավետ միջոցներ, որոնք կարող են տրամադրել փոխհատուցում՝ Եվրոպական կոնվենցիայի 2–րդ և 3–րդ հոդվածների նյութափրավական ասպեկտների հիման վրա ներկայացված բողոքների համար (տես *Մոկանուն և այլք ընդդեմ Ռումինիայի* [ՄԴ] [*Mocanu and Others v. Romania* [GC]], թիվ 10865/09 և մյուս երկուսը, § 227, ՄԻԵԴ 2014 (քաղվածքներ) և *Ջորգենսենը և այլք ընդդեմ Դանիայի* (որոշում) [*Jørgensen and Others v. Denmark* (dec.)], թիվ 30173/12, 2016 թվականի հունիսի 28): Սրանից հետևում է, որ դիմողի կողմից ներկայացված քաղաքացիական հայցերը գործի հատուկ հանգամանքներում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ չէին՝ Եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածի համաձայն բերված նրա հիմնական բողոքի համար:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ Վերաքննիչ քրեական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 12–ի որոշումը Եվրոպական կոնվենցիայի 35–րդ հոդվածի 1–ին կետի իմաստով ներպետական վերջնական որոշումն է: Հետևաբար, իր գանգատը ներկայացնելով 2009 թվականի մարտի 23–ին, դիմողը չի պահպանել Եվրոպական կոնվենցիայի 35–րդ հոդվածի 1–ին կետով սահմանված վեցամսյա ժամկետն այնքանով, որքանով դա վերաբերելի է 3–րդ հոդվածի նյութափրավական և դատավարական ասպեկտներին, ինչից հետևում է, որ գանգատի այս մասը պետք է մերժվի՝ համաձայն Եվրոպական կոնվենցիայի 35–րդ հոդվածի 1–ին և 4–րդ կետերի:

Այսպիսով, վերը ներկայացված գործի օրինակով կարող ենք հավաստել, որ վատ վերաբերմունքի փաստի քննության և դրա դեմ պայքարի համար առանցքային ու որոշիչ նշանակություն ունի ոչ միայն քննության անհապաղության, ամբողջականության և մյուս չափանիշերի պահպանումը, այլև իրավական պաշտպանության միջոցների արդյունավետ իրավաբանորեն

գրագետ իրագործումը, պատշաճ ջանասիրության դրսևորումը հենց տուժողի, նրա ներկայացուցչի, ինչպես նաև իրավական օգնություն փրամադրող անձանց կողմից:

Ընդդեմ Հայաստանի Եվրոպական դատարանի ընդունած վճիռներից, որով արձանագրվել են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումներ, թերևս, ուշագրավ են նաև **Դավթյանն ընդդեմ Հայաստանի (31.03.2015թ.-ի գանգապ թիվ 29736/06) և Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (26.06.2012թ.-ի, գանգապ թիվ 33376/07) վճիռները:**

7. Դավթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով վճռում Եվրոպական դատարանը, մասնավորապես արձանագրել է¹ որ 3-րդ հոդվածով ամրագրվում է ժողովրդավարական հասարակության առավել հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակապես արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ տուժողի վարքագծից: Եվրոպական դատարանը վերահաստատում է, որ վատ վերաբերմունքը պետք է լինի նվազագույն ծանրության, որպեսզի համարվի 3-րդ հոդվածով նախատեսված: Չի կարող բացառվել, որ հիվանդ անձի կալանավորումը կարող է խնդիրներ առաջացնել 3-րդ հոդվածի շրջանակում: Թեև այս հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես առողջական վիճակի հիմքով կալանավորված անձանց ազատ արձակելու ընդհանուր պարտավորություն առաջացնող դրույթ, այնուամենայնիվ այն պետության համար առաջացնում է ազատությունից զրկված անձանց ֆիզիկական անձեռնմխելիությունը՝ այդ թվում անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով պաշտպանելու պարտականություն: Դատարանն ընդգծեց նաև ազատությունից զրկված բոլոր անձանց՝ կալանքի տակ գտնվելու ժամանակ այնպիսի պայմանների ապահովման իրավունքը, որոնք համատեղելի են նրանց արժանապատ-

¹ Մանրամասն տե՛ս Դավթյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ՄԻԵԴ-ի 31.03.2015 թ.-ի վճիռի 78-88-րդ կետերը:

վությունը հարգելու հետ, շեշտեց նաև այն, որ միջոցի կիրառման եղանակի և մեթոդի հետևանքով նրանք չենթարկվեն այնպիսի ծանրության տառապանքների կամ զրկանքների, որը գերազանցում է կալանքի տակ գտնվելուն ներհատուկ տառապանքի անխուսափելի աստիճանը, ինչպես նաև այն, որ նրանց առողջությունն ու բարեկեցությունը պատշաճորեն պահպանվեն, ի թիվս այլ միջոցների՝ անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրելու միջոցով՝ հաշվի առնելով ազատությունից զրկելու հետ կապված գործնական պահանջները: Դատարանն ի սկզբանե նշում է, որ անհերքելի է, որ դիմողը տառապել է մի շարք հիվանդություններով, այդ թվում՝ ձայնալարերի քաղցկեղով, որը պահանջում էր մասնագիտացված հետազոտություն և բուժում: Կոկորդի բիոպսիա, համակարգչային տոմոգրաֆիա և լրացուցիչ հետազոտություն ու բուժում իրականացնելու առաջարկություն արվել էր 2003 թ.-ի ապրիլի 29-ին՝ դիմողին կալանավորելուց հետո՝ դեռ մեկ ամիսը չլրացած: Այնուամենայնիվ պարզվում է, որ այս հետազոտություններից ոչ մեկը ողջամիտ ժամկետում չի իրականացվել: ...Գործի նյութերից՝ ներառյալ քրեակատարողական հիմնարկի բժշկի՝ 2006 թ.-ի հունվարի 31-ի նիստին արված հայտարարությունից, բխում է, որ քրեակատարողական հիմնարկը և նույնիսկ ողջ քրեակատարողական համակարգը չունի ո՛չ անհրաժեշտ մասնագետներ, ո՛չ էլ մասնագիտացված սարքավորումներ՝ համապատասխան հետազոտություններ և բուժում իրականացնելու համար: Չնայած դրան՝ մասնագիտացված հետազոտությունների անցկացման համար դիմողին քրեակատարողական հիմնարկից տեղափոխել են անկախ գործող հիվանդանոց միայն 2005 թ.-ի հունիսին՝ վարչակազմի կողմից կրկնակի պահանջ ներկայացնելուց հետո: Այսպիսով՝ բժշկի 2003 թ.-ի ապրիլի 29-ի դիմողին մասնագիտացված հետազոտության ուղարկելու վերաբերյալ առաջարկին առաջին անգամ ընթացք տրվել է ավելի քան երկու ամիս անց:

Ավելին՝ 2005 թ.-ի հունիսի հետազոտությունից հետո առաջարկվել է հանձնել լրացուցիչ անալիզ և կատարել վիրահատություն:

Այնուամենայնիվ պարզվել է, որ դրան ևս անմիջապես ընթացք չի տրվել և միայն 2006 թ.–ի մարտին է դիմողը տեղափոխվել անկախ գործող հիվանդանոց՝ առաջարկված վիրահատության համար, ակնհայտորեն այն բանից հետո, երբ նրա առողջական վիճակը կտրուկ վատացել է, և հաստատվել է նրա վիճակի՝ կյանքի համար վտանգավոր լինելը:

Եվրոպական դատարանը նաև նշել է, որ գործի հանգամանքներից պարզվում է, որ դիմողի վիճակն աստիճանաբար և կայուն ձևով վատացել է՝ ժամանակ առ ժամանակ առաջացնելով, «inter alia», արյունախիտում, շնչափոխության նոպաներ և գիտակցության կորուստ: Ավելին, բժշկի կողմից նրա մոտ մի քանի անգամ արտադրվել է դեպրեսիա, անհանգստություն և ինքնասպանություն գործելու հակումներ: Եվրոպական դատարանը չի կարող ենթադրություններ անել այն մասին, թե արդյոք այս զգացումները եղել են դիմողին անհրաժեշտ մասնագիտացված հետազոտություն և բուժում չտրամադրելու հետևանքով, սակայն նշում է, որ պարտադիր չէ անհրաժեշտ բժշկական օգնություն չտրամադրելու պատճառով այնպիսի առողջական վիճակի հասցնելը կամ այլ կերպ լուրջ կամ երկար ցավեր պատճառելը, որպեսզի պարզի, որ կալանավորված անձը նման օգնության կարիք է ունեցել կամ պահանջել, սակայն այն հասանելի չի եղել նրան, կարող է, որոշակի հանգամանքներում բավարար լինել եզրակացնելու, որ նման վերաբերմունքը եղել է նվաստացնող՝ այդ հողվածի իմաստով:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել էր և հաստատվել առողջապահական ոլորտի մասնագետների կողմից, դիմողը մասնագիտացված հետազոտությունների և բուժման կարիք է ունեցել, որոնք, այնուամենայնիվ, չեն ապահովվել նրա համար բավականին երկար ժամանակ: Նման հանգամանքներում, դիմողին կալանքի տակ պահելու պայմաններն անցել են կալանավորվածներին տրառապանք պարճառելու անխուսափելի սահմանը և, կարելի է ասել՝ համարժեք են եղել անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի:

8. Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռում Եվրոպական դատարանը¹, նախևառաջ, դիտարկում է, որ 3-րդ հոդվածն արձանագրում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: ... Անկախ տուժողի վարքագծից՝ բացարձակապես արգելվում են խոշտանգումը կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Եվրոպական դատարանը նշել է, որ այն նախկինում արձանագրել է 3-րդ հոդվածի խախտում մի գործով, որի դիմողը դատական նիստերի ժամանակ պահվել է մետաղյա ճաղավանդակում: (Տե՛ս Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի) ... Հաշվի առնելով այն, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը չի հիմնավորել դիմողին մետաղյա ճաղավանդակում տեղավորելու և պահելու մասին որոշումը և որևէ հստակ պատճառաբանություն չի ներկայացրել՝ Եվրոպական դատարանը հակված է հանգել այն եզրակացության, որ, ինչպես և Աշոտ Հարությունյանի գործի պարագայում, նման գործողությունները թելադրված են եղել ոչ թե նրա՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու կամ բռնություն գործադրելու իրական վտանգով, այլ՝ այն պարզ հանգամանքով, որ ճաղավանդակը հանդիսանում էր նրա՝ որպես քրեական գործով ամբաստանյալի նստելու տեղը: Եվրոպական դատարանը նշել է, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում գործի քննությունը տևել է 2007 թվականի մարտից մինչև դեկտեմբեր, և այդ ընթացքում կայացել է առնվազն քսանմեկ դռնբաց նիստ: Նիստերի տևողությունը կազմել է քսանհինգ րոպեից յոթ ժամ: Այդ ողջ ընթացքում դատական նիստերին ներկա գտնվողները, այդ թվում՝ դիմողի ընտանիքի անդամները և ընկերները նրան տեսել են ճաղավանդակում: Դատարանը գտնում է, որ դատական նիստի նման դաժան պատկերը սովորական դիտորդի մոտ կարող էր ստեղծել այն տպավորությունը, որ ամբաստանյալը հանդիսանում է առանձ-

¹ Մանրամասն տե՛ս Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով 26.06.2012 թ.-ի ՄԻԵԴ-ի վճիռի 69-74-րդ կետերը:

նապես վտանգավոր հանցագործ: Եվ ավելին, Եվրոպական դատարանը կիսում է դիմողի կարծիքը, որի համաձայն՝ հանրության առջև նրան այդ կերպ ներկայացնելը նվաստացնում էր նրան եթե ոչ հանրության, ապա իր սեփական աչքերում՝ նրա մոտ առաջացնելով անլիարժեքության զգացում: Բացի այդ՝ նման նվաստացնող վերաբերմունքը կարող էր հեշտությամբ ազդել դատական նիստի ընթացքում դիմողի՝ ուշադրությունը կենտրոնացնելու և մտքի զգոնությունը պահպանելու ունակության վրա՝ դրանով իսկ ազդեցություն գործելով այնպիսի կարևոր հարցի լուծման վրա, ինչպիսին է նրա քրեական պատասխանատվության ենթարկվելու հարցը: ***Վերոնշյալ հեղուկությունների լույսի ներքո՝ Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ժամանակ դիմողի նկատմամբ նման խիստ և նվաստացնող միջոցի կիրառումը, որն արդարացված չէր անվտանգության իրական վտանգի նկատառումներով, անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք է հանդիսանում: Համապատասխանաբար, տեղի է ունեցել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:***

ԲԱԺԻՆ 2.

ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՔՐԵԱԻՐԱՎԱ- ՎԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

§ 1. Խոշտանգման և վաթ վերաբերմունքի բովանդակությունն ու քրեաիրավական բնութագիրը

Խոշտանգումների արգելքը սահմանված է ՀՀ Սահմանադրու-
թյան 26–րդ հոդվածում, որի համաձայն՝

*«1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային
կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:*

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

*3. Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական
վերաբերմունքի իրավունք»:*

Սահմանադրական այս նորմը մարդու արժանապատվության և
անձեռնմխելիության իրավունքների ապահովման կարևորագույն
երաշխիքներից է: Միաժամանակ, այն, ինչպես արդեն նշվել է, մի-
ջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է:

ՀՀ քրեական օրենսգրքում վատ վերաբերմունք երևույթին
օրենսդրական ամրագրում տալու նախապատմությունը ծավալվել է
որոշակի ընթացակարգով.

Հայաստանի Հանրապետության կողմից խոշտանգումը պատ-
շաճ կարգով քրեականացնելու հարցը բարձրացվել է դեռևս
2012 թվականի մայիսին, երբ ՀՀ–ն քննարկման էր ներկայացրել
ՄԱԿ–ի՝ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ
նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» Կոնվենցիայով
(UNCAT) նախատեսված պարտավորությունների կատարման հեր-
թական զեկույցը: ՄԱԿ–ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն (CAT)
իր եզրափակիչ դիտարկումներում նշել էր, որ Հայաստանի Հան-
րապետությունը պետք է պատշաճ ձևով քրեականացնի խոշտան-

գումը՝ ապահովելով արարքի հանրային վտանգավորությանը համապատասխան խիստ պատիժ: Այսպիսի գնահատականներ հնչել են նաև Հայաստանի վերաբերյալ այլ կազմակերպությունների զեկույցներում ու վերլուծական նյութերում: Բանն այն է, որ մինչև ՀՀ քրեական օրենսգրքում վերոհիշյալ փոփոխություններն ու լրացումը կատարելը խոշտանգման հանցակազմը նախատեսված էր մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների շարքին և չէր համապատասխանում հիշատակված Կոնվենցիայով առաջադրվող չափանիշերին: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի համաձայն՝ խոշտանգում էր համարվում ցանկացած գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել սույն օրենսգրքի 112-րդ (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը) և 113-րդ (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) հոդվածներով նախատեսված հետևանքներ: Միջազգային գնահատականների արդյունքում 2015 թվականի հունիսի 9-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 18-ին ուժի մեջ մտած՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-69-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է ՄԱԿ-ի համապատասխան Կոնվենցիայի 1-ին հոդվածին համահունչ՝ խոշտանգման համար քրեական պատասխանատվություն նախատեսող 309.1 հոդվածով:

Այսպիսով նշված հոդվածը նախատեսում է հետևյալը.

Հոդված 309.1. Խոշտանգումը

«1. Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ

անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով՝

պատժվում է ազատազրկմամբ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

5) առանձին դաժանությամբ,

6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով»:

Խոշտանգման հանցակազմը նախատեսված է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների շարքում: Հիշատակված հոդվածի դիսպոզիցիայի ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ խոշտանգման օբյեկտիվ կողմը դրսևորվում է այնպիսի գործողությամբ, որի միջոցով տուժողին պատճառվում է ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք:

Տվյալ հանցագործության **հիմնական, անմիջական օբյեկտը** պետական իշխանության հեղինակությունն է, իսկ որպես **լրացուցիչ**

օբյեկտ հանդիսանում են մարդու կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունն ու նրան պատկանող սահմանադրական այլ իրավունքները¹:

Տվյալ արարքի **օբյեկտիվ կողմը** երկընտրելի է: Այն կարող է դրսևորվել՝

- 1) **ֆիզիկական ուժեղ ցավ** պատճառելով,
- 2) **հոգեկան ուժեղ տրտապանք** պատճառելով:

Սուբյեկտիվ կողմից խոշտանգումը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է համարվում նպատակը: Այն արտահայտվում է հետևյալում՝

- այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով,
- այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է,
- այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով,
- ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով:

Նշված նպատակներից գոնե մեկի բացակայության դեպքում արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով՝ որպես պաշտոնեական լիազորությունների անցում:

Քննարկվող հանցագործության հանցակազմի վերլուծությունից հետևում է, որ տվյալ հանցագործության սուբյեկտ կարող է լինել ինչպես պաշտոնատար անձը կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձը, այնպես էլ պաշտոնատար անձ չհանդիսացող այն անձը, ով գործել է պաշտոնատար անձի դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ:

¹ Մանրամասն տե՛ս **Ավագյան Է.**, Խոշտանգման քրեաիրավական բնութագիրը: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 1(1) 2018: Երևան, ԵՊՀ հրատ., 2018թ., էջեր 354–355:

Հարց է առաջանում՝ նման դեպքերում ինչպես պետք է որակել պաշտոնատար անձի և պետական մարմնի անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի արարքները. որպես խոշտանգում, թե խոշտանգման հանցակցություն (կազմակերպում, դրդում կամ օժանդակություն):

Ի տարբերություն ՀՀ քրեական գործող օրենսգրքի՝ քրեական նոր օրենսգրքի նախագիծը լուծել է այս հարցը՝ սահմանելով, որ *խոշտանգում է համարվում պաշտոնատար անձի կողմից անձին դիտարկությանը ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան տառապանք սպորինաբար պատճառելը կամ դրան դրդելը կամ դրա համաձայնություն տալը կամ դրա կապակցությամբ թողնելություն դրսևորելը՝ այդ կամ մեկ այլ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ անձը կամ մեկ ուրիշը կատարել է կամ որի կատարման մեջ մեղադրվում է, այդ կամ մեկ այլ անձին վախեցնելու կամ որևէ գործողություն կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված որևէ պատճառով*:

ՀՀ քրեական օրենսգրքի 341–րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում *դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար, համաձայն որի՝*

«1. Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից բռնություն կամ սպառնալիք գործադրելու կամ այլ սպորինի գործողություններով՝ դատավարությանը մասնակցող անձանց ցուցմունք կամ բացատրություն կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը՝

¹ Մանրամասն տե՛ս **Առաքելյան Ս., Կոզմա Ջ.**, Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը: Երևան, 2016, էջեր 67–68:

պատժվում է որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝

առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը զուգորդվել է խոչտանգմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասից կամ հանցավորից նյութական կամ այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

4) մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

5) առանձին դաժանությամբ,

6) անձի կամ նրա մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

7) անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեք տարի ժամկետով»:

Հետևաբար այն դեպքերում, երբ խոչտանգումը կատարում է դատավորը, դատախազը, քննիչը կամ հետաքննություն կատարող անձը՝ ցուցմունք կամ բացատրություն կամ կեղծ եզրակացություն տալուն կամ սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելու համար, արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 2-րդ մասով:

Պետք է նշել, որ խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի՝ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի, տարբերակումը տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունի:

Նախ, ինչպես արդեն նշել ենք, UNCAT-ը այն վավերացնող պետությունների համար նախատեսում է պարտականություն՝ ներպետական օրենսդրությամբ քրեականացնել խոշտանգումը՝ որպես առանձին հանցատեսակ, սակայն նման պահանջ չի սահմանվում վատ վերաբերմունքի այլ ձևերի համար: Այնուամենայնիվ, վատ վերաբերմունքի մյուս ձևերի համար նույնպես նախատեսված է բացարձակ արգելք:

Այսպես, ինչպես արդեն նշել ենք, Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի¹: Իսկ Եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածը 3-րդ հոդվածի համակցությամբ պահանջում է, որպեսզի պետությունները համապատասխան քայլեր ձեռնարկեն և երաշխավորեն, որ իրենց իրավազորության ներքո գտնվող անձինք չենթարկվեն խոշտանգման կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի²:

Վատ վերաբերմունքի այլ ձևերի մասին արգելող դրույթներ սահմանվում են ոչ միայն միջազգային փաստաթղթերով, այլ նաև ներպետական օրենսդրությամբ: Արգելվում են մարմնական պատիժները: Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք: Այդուհանդերձ << քրեական օրենսդրությամբ առկա չէ առանձին հանցատեսակ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի դրսևորման համար: Սակայն առկա են տարբեր հանցատեսակներ, որոնք կարող են ընդգրկել անմարդկային վերաբերմունքի ձևերի մեծ մասը, օրինակ՝ ծեծը, ֆիզիկական կամ

¹ Նման արգելք սահմանվում է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածներով:

² *A. v the United Kingdom*, 1998 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռ, գանգատ թիվ 2559/94, կետ 22:

հոգեկան ուժեղ ցավ պատճառելը, առողջությանը վնաս պատճառելը կամ պաշտոնեական լիազորություններն անցնելը և այլն:

Այս ենթատեքստում հարկ է նշել, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության վերջին տարիների պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստի հետ կապված քրեական գործերը հարուցվել և քննվել են ՀՀ քրեական օրենսգրքի առանձին հոդվածների հատկանիշներով, որն ունի հետևյալ պատկերը.

h/h		2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ. 1-ին կիսամյակ
1.	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքով քննված քրեական գործերի թիվը, որից՝	114	104	99	71
2.	ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով	1	–	–	–
3.	ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածով	102	84	50	46
4.	ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով	8	17	47	24
5.	ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով	–	–	1	–
6.	ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով	3	2	–	–

7.	ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածով	0	1	1	1

Խոշտանգումը վատ վերաբերմունքի այլ ձևերից հիմնականում տարբերակվում է հասցված վնասի ծանրության աստիճանով, այսինքն՝ պատճառված տառապանքի ուժգնությունով:

Կոնվենցիոն իմաստով անմարդկային վերաբերմունք հասկացությունը ներառում է առնվազն այն վերաբերմունքը, որը դիտավորյալ պատճառում է ծանր հոգեկան կամ ֆիզիկական տառապանք, որը տվյալ իրավիճակում չի կարող հիմնավորված լինել:

Նվաստացնող է այն վերաբերմունքը, որը կարող է մարդու մոտ վախի, ճնշվածության և թերարժեքության զգացում առաջացնել, վիրավորել և ստորացնել նրան ու կոտրել նրա ֆիզիկական և բարոյական դիմադրությունը:

Այս իմաստով պետք է նշել, որ Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածն առանձնացնում է արգելված վատ վերաբերմունքի հետևյալ տեսակները՝

- *խոշտանգում,*
- *անմարդկային վերաբերմունք,*
- *անմարդկային պատիժ,*
- *արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք,*
- *արժանապատվությունը նվաստացնող պատիժ:*

Վերը նշված տարրերի առանձնացումն ունի կարևոր գործնական և ուղենիշային նշանակություն: Վերջիններիս առանձնացման համար անհրաժեշտ են հստակ չափանիշերի սահմանում: Կոնկրետ չափանիշի բացակայության պայմաններում դժվար կլինի պայքարել դրա դեմ և գործի դնել խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը: Այդ չափորոշիչները մշակված են Եվրոպական դատարանի նախադեպերում, ինչպես նաև

մարդու իրավունքների միջազգային այլ կառուցակարգերի օրենսդրությամբ¹:

Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածն առաջին անգամ մանրամասն դիտարկել է դեռևս *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով: Վատ վերաբերմունքի դրսևորումը խոշտանգում որակելու համար Եվրոպական դատարանը հաշվի է առել Եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածով սահմանված տարանջատումը նշված հասկացության և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հասկացության միջև²:

Այս իմաստով, նախևառաջ, վատ վերաբերմունքը ենթադրում է որոշակի ֆիզիկական ուժգին ցավ կամ հոգեկան տառապանք: Խոշտանգման դեպքում դրա ուժգնությունը շատ մեծ է: Նման ցավը կամ տառապանքն առաջանում է հատուկ մեթոդների կիրառման միջոցով կամ հատուկ հանգամանքներում: Որպես այդպիսիք, Եվրոպական դատարանն իր նախադեպային պրակտիկայում առանձնացնում է խոշտանգման հետևյալ տեսակները՝

- ոտքի թաթերին հարվածելը³,
- էլեկտրական հարվածները, տաք կամ սառը ջուր օգտագործելը, գլխին հարվածելը կամ զոհի երեխաների նկատմամբ վատ վերաբերմունք կիրառելու սպառնալիքը⁴,

¹ *Սվանիձե Է.* Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարը: Ազատությունից զրկված անձանց իրավունքները և իրավապահ մարմինների աշխատակիցների պարտականությունները: 11 հիմնական հարցեր ու պատասխաններ: 2–րդ հրատարակություն: Եվրոպայի խորհուրդ, 2017, էջ 9:

² *Տեն Իրլանդ v. United Kingdom*–ի գործով Եվրոպական դատարանի 1978 թվականի հունվարի 18–ի որոշումը:

³ Տեն Սալմանն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2000 թ. հունիսի 27–ի վճիռը, գանգատ թիվ 21986/93:

⁴ Տեն Աքսոյն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2000 թ. հոկտեմբերի 10–ի վճիռը, գանգատ թիվ 22947–48/93: Սույն գործով տուժողի նկատմամբ կիրառված միջոցները հոգեկան տառապանքի օրինակ են, որոնք կարող են իրենցից ներկայացնել խոշտանգում կամ հանգեցնել խոշտանգման:

- ազատությունից զրկելու վատ պայմանները և խիստ ռեժիմը, որոնք կիրառվում են պատժելու նպատակով¹,
- ազատությունից զրկված երիտասարդ կնոջ բռնաբարությունը ոստիկանության աշխատակիցների կամ դատախազների կողմից²,
- երիտասարդ կնոջ կրկնվող ծեծը, որը տևում է մի քանի ժամ և իրականացվում է մի քանի ոստիկանների կողմից³:

Միևնույն ժամանակ Եվրոպական դատարանի կարծիքով՝ «խոշտանգում» և «անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք» հասկացությունների տարբերությունն արտահայտվում է «տառապանքի ինտենսիվության տարբեր աստիճանի» մեջ, և ըստ այդմ՝ խոշտանգումը վատ վերաբերմունքի առավել ծանր տեսակ է:

Այն դեպքում, երբ առկա են անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի տարրեր, ցավի կամ հոգեկան տառապանքի չափը կամ հաճախականությունը նույնպես էական են, սակայն նվազ լուրջ, քան խոշտանգման դեպքում: Դաժանության մակարդակը կարող է ներկայացվել ցավի կամ տառապանքի միջոցով, որոնք պատճառվում են ֆիզիկական ուժի գործադրմամբ (մահակով դեմքին հարվածելը), որն ուղղակի անհրաժեշտ չէ՝ կապված զոհի բուն վարքագծի հետ⁴, տղամարդ ձերբակալվածին ստիպելը մերկանալ կին ոստիկանի ներկայությամբ⁵, ձերբակալվածին տրամադրված անբավարար բժշկական օգնությունը⁶, ձերբակալման անբավարար պայման-

¹ Տե՛ս Իլասկուն և այլոք ընդդեմ Մոլդովայի և Ռուսաստանի գործով Եվրոպական 2004 թ. հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 48787/99:

² Տե՛ս Մալովան և Նալբանդովն ընդդեմ Ռուսաստանի գործով Եվրոպական դատարանի 2008 թ. հունվարի 24-ի վճիռը, գանգատ թիվ 839/02:

³ Տե՛ս Մենեշևան ընդդեմ Ռուսաստանի 2006 թ. մարտի 9-ի վճիռը, գանգատ թիվ 59261/00:

⁴ Տե՛ս Մրոզովսկին ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի 2009 թ. մայիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 9258/04:

⁵ Տե՛ս Վալասինան ընդդեմ Լիտվայի գործով Եվրոպական դատարանի 2001 թ. հուլիսի 21-ի վճիռը, գանգատ թիվ 44558/98:

⁶ Տե՛ս Սարբանն ընդդեմ Մոլդովայի գործով Եվրոպական դատարանի 2005 թ. հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 3456/05:

ների ընդհանուր ազդեցությունը, ներառյալ՝ մարդաշատությունը, օդափոխման և սանիտարական հարմարանքների բացակայությունը¹: «Անամարդկային» բաղադրատարրը ցույց է տալիս ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի ոչ քաղաքակիրթ բնույթը, որը տվյալ վերաբերմունքի արդյունքն է:

«Նվաստացնող» բաղադրատարրը վերաբերում է խիստ ուրույն զգացմունքների, որոնք կապված են կոնկրետ վատ վերաբերմունքը վատթարացնող և նսեմացնող ազդեցության հետ: Ի տարբերություն խոշտանգման, անամարդկային և նվաստացնող վերաբերմունքի առկայության համար պարտադիր չէ, որ պահանջվի դիտավորություն կրած տառապանքի նկատմամբ:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ վերաբերմունքի կամ պատժի ոչ բոլոր վիճելի կամ անցանկալի չափորոշիչներն առաջացնում են Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում²: Արգելումը չի վերաբերում այնպիսի թույլատրելի սանկցիաների կամ այլ օրինական միջոցների, ինչպիսիք են պատշաճ ձերբակալումը, ձեռքերին ձեռնաշղթաներ պատշաճ կերպով հագցնելը և պահանջվող չափի ուժի կիրառումը:

Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է եզրակացնել, որ յուրաքանչյուր իրավիճակում արարքը վատ վերաբերմունքի որևէ ձևով որակելու համար որպես հիմնական չափորոշիչ պահանջվում է, որպեսզի այն հատի խստության որոշակի սահմանը՝ առաջացնելով ֆիզիկական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք: Սակայն, որոշ իրավիճակներում նույնիսկ վերոհիշյալ հանգամանքների բացակայության պայմաններում արարքը հնարավոր է դիտարկել նվաստացնող վերաբերմունք, եթե ունահարվում է մարդկային արժանապատվությունը, կամ տուժողի մոտ առաջանում է վախի, ցավի կամ թերաթժեքության զգացումներ, որոնք ունակ են կոտրելու

¹ Տե՛ս Փիրսն ընդդեմ Հունաստանի գործով Եվրոպական դատարանի 2001 թ. ապրիլի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28524/95:

² Տե՛ս Օջալանն ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի 2005 թ. մայիսի 12-ի վճիռ, գանգատ թիվ 46221/99, կետ 181:

անհատի բարոյական և ֆիզիկական դիմադրությունը: Եվրոպական դատարանը 3–րդ հոդվածի խախտում որակելու համար նույնիսկ բավարար է համարում այն, որ անձը նվաստացված զգա իրեն՝ անկախ այն հանգամանքից՝ դա գիտակցում են այլոք, թե ոչ: Սա նշանակում է, որ նույնիսկ տուժողին ստորացնելու կամ նվաստացնելու նպատակի բացակայության դեպքում էլ հնարավոր է արձանագրել Եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածի խախտում¹:

§ 2. Խոշտանգման և վատ վերաբերմունքի փաստի վերաբերյալ քրեական գործերի քննության ընդհանուր պայմաններն ու մարտահրավերները

Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքերի քննության կապակցությամբ հարկ է նշել, որ Ստամբուլյան արձանագրության Ձեռնարկի 76–րդ կետի համաձայն՝ խոշտանգումների դեպքերի քննության ընդհանուր նպատակն է բացահայտել խոշտանգման ենթադրյալ դեպքերի փաստերը՝ նպատակ ունենալով պարզելու դեպքերի համար պատասխանատու անձանց ինքնությունը և նպաստել նրանց նկատմամբ հետապնդում իրականացնելուն կամ այդ փաստերն օգտագործել տուժողների կրած վնասները փոխհատուցելու համար նախատեսված այլ գործողությունների շրջանակում²:

Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի քննության ընթացակարգային ձևերի կապակցությամբ՝ պետք է նշել, որ Հայաստանի քրեական դատավարության համակարգը հիմնված է «*ex-officio*» մեղադրման սկզբունքի վրա³: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 175–րդ և 180–րդ հոդվածները պաշտոնապես սահմա-

¹ Տե՛ս **Ավագյան Է.**, Խոշտանգման հասկացությունը և բովանդակությունը: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու: Երևան, ԵՊՀ հրատ., 2017 թ., էջեր 508–509:

² Մանրամասն տե՛ս Ստամբուլյան արձանագրություն: Ձեռնարկ բժիշկների, հոգեբույժների և իրավաբանների համար: Երևան, «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն, 2015, էջ 46:

³ Մանրամասն տե՛ս **Սվանիձե Է.**, Ձեկույց Հայաստանի վերաբերյալ՝ «Վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարն ու վատ վերաբերմունքի արդյունավետ քննությունը», ՀՀ դատավորների միություն, Երևան, Անտարես հրատ., 2011, էջ 64:

նում են իրավասու պաշտոնատար անձանց կողմից հանցագործության կատարման մասին հաղորդում ստանալուց հետո քրեական գործ հարուցելու պարտականությունը: Դրան կարող է նախորդել դրա հավաստիությունն ստուգելու նպատակով իրականացված նյութերի նախապատրաստումը: Սահմանափակ թվով հանցագործություններով է պահանջվում տուժողի կողմից պաշտոնապես ներկայացված բողոքի առկայություն:

Նման վարույթներ հարուցելու առիթներն ամրագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177–178–րդ հոդվածներում և ներառում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց բանավոր և գրավոր հաղորդումները, քննչական, դատախազական կամ դատական մարմինների կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի կամ հետևանքների ուղղակի հայտնաբերումը: Ընդունված է, որ հանցագործության մասին յուրաքանչյուր տեղեկության վերաբերյալ պետք է պաշտոնապես որոշում կայացվի՝ կապված քրեական վարույթ հարուցելու անհրաժեշտության հետ: Այս ընդհանուր մոտեցումը կիրառելի է քրեականացված վատ վերաբերմունքի վերաբերյալ հայտարարությունների կամ այլ հաղորդումների կապակցությամբ: Հիմքերից ոչ մեկը, այդ թվում՝ վատ վերաբերմունքի վերաբերյալ հաղորդումներն ուղղակի բողոքի բացակայության դեպքում չեն կարող ամբողջությամբ դիտվել որպես ոչ էական կամ որոշման կայացում չպահանջող:

Հայաստանում գործող քրեական դատավարության մոդելը նախատեսում է եռաստիճան կառուցվածք: Դրանցից առաջինը քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի բավարարությունն ստուգելու նպատակով իրականացվող համապատասխան հաղորդումների քննարկումն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:

Խոշտանգման և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ քրեական գործ հարուցելու հիմքերի բավարարության ստուգման տեսանկյունից այս փուլում, ի թիվս այլ քննչական ու դատավարական գործողությունների, առավել կարևորվում է փորձաքննությունների նշանակումը և կատարումը, որը սակայն երբեմն կարող է պահանջել առավել երկար ժամկետներ: Այս առումով հատկանշական է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180–րդ հոդվածի 3–ին մասի ձևակերպումը, համաձայն որի՝ «*Այն դեպքում, երբ անհրաժեշտ է սրանալ նշանակված փորձաքննության եզրակացությունը և առանց այդ փորձաքննության եզրակացությունը սրանալու հնարավոր չէ լուծել հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու հարցը, ապա հետաքննության մարմնի կամ քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա սույն հոդվածի 1–ին մասում նշված ժամկետը հսկող դատախազի որոշմամբ կարող է երկարացվել ևս մինչև 20 օր: Երկարացված ժամկետի ընթացքում այլ դատավարական գործողություններ կատարվել չեն կարող, բացառությամբ այնպիսի գործողությունների, որոնք ուղղված են փորձագետի գրավոր միջնորդության բավարարմանը, առանց որոնց հնարավոր չէ փորձաքննություն կատարելը կամ պատշաճ փորձաքննություն իրականացնելը*»:

Կարծում ենք, որ վերը նշված իրավակարգավորումը կարող է նպաստել ոչ միայն խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ տեսակների դեպքերի վերաբերյալ քրեական գործի հարուցման փուլի արդյունավետ իրականացմանը, այլև մեկ այլ ոչ պակաս կարևոր փոխկապակցված խնդրի լուծմանը՝ սուտ մատնության դեպքերի բացահայտմանը և դրանց կանխարգելմանը:

Սակայն հարկ է նշել, որ ՀՀ գլխավոր դատախազության տվյալներով՝ խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին հաղորդումների մի մասի ստուգմամբ պարզվել է, որ դրանք տրվել են ենթադրյալ խոշտանգման դեպքից տևական ժամանակ անց, երբ մինչև նման հաղորդում ներկայացնելն անձինք ունեցել են իրական

հնարավորություն՝ հայտնելու այդ մասին: Մի շարք դեպքերում էլ այլ քրեական գործերով քննության ընթացքում կասկածյալները և մեղադրյալները հաղորդումներ են տվել ոստիկանների կամ քննության մարմինների կողմից խոշտանգման ենթարկվելու արդյունքում խոստովանական ցուցմունքներ տալու մասին՝ նպատակ ունենալով խուսափել քրեական պատասխանատվությունից:

Բացի դրանից, առանձին դեպքերում քրեական գործ հարուցելու առիթ է հանդիսացել ոչ թե ենթադրյալ խոշտանգման ենթարկված անձի հաղորդումը, այլ տարբեր իրավապաշտպան կամ այլ հասարակական կազմակերպությունների հաղորդումները, որոնց իսկությունը երբեմն հերքվել է հենց այն անձանց կողմից, ում խոշտանգելու վերաբերյալ ներկայացվել է հաղորդումը, և քննության ընթացքում չեն հայտնաբերվել խոշտանգման փաստի մասին վկայող օբյեկտիվ այլ տվյալներ: Մասնավորապես, կալանավորված անձի անձնական գործում չկան քրեակատարողական հիմնարկ ընդունելիս մարմնական վնասվածքներ հայտնաբերելու մասին նշումներ, դատաբժշկական փորձաքննությամբ անձի մոտ չեն հայտնաբերվել մարմնական վնասվածքներ, դեպքի վայրի զննությամբ չեն հայտնաբերվել խոշտանգման հանգամանքների մասին վկայող հետքեր կամ առարկաներ:

Այսպիսով հանցագործությունների վերաբերյալ հաղորդումները ստուգվում են, և դրանց վերաբերյալ որոշում է կայացվում դատավարության այս փուլում, և դրա արդյունքում պաշտոնապես որոշում է կայացվում քրեական գործ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու մասին:

Երկրորդ փուլն սկսվում է, եթե պարզվում է, որ առկա են քրեական գործ հարուցելու բավարար առիթներ և հիմքեր: Դա իրականացվում է այս կապակցությամբ դատախազի կամ իրավասու քննչական մարմնի կողմից պաշտոնապես կայացվող որոշմամբ: Վերջինս դատավարական գործողություններ է իրականացնում՝ ուղղված ապացույցների հավաքմանը, ինչպես նաև մեղքի նախնական պարզմանը

և հանցանքի կատարմանը ներգրավված անձանց նկատմամբ այլ հնարավոր դատավարական գործողությունների կատարմանը:

Վատ վերաբերմունքի փաստի քննության առանձնահատկությունների համատեքստում հարկ է նաև նկատի ունենալ պարզաբանման ենթակա հանգամանքների շրջանակի ու ապացուցման գործընթացի սահմանների հարցը՝ գործի քննության բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության ապահովման տեսանկյունից: Ուսումնասիրության թեմայից չշեղվելու նպատակով՝ նշենք միայն, որ գործնական տեսանկյունից տվյալ հարցը կարող է ողջամտորեն դիտարկվել ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկայում արտահայտված իրավական դիրքորոշումների համատեքստում:

Մասնավորապես՝ *Գրիգոր Գրիգորյանի* գործով 2015 թվականի փետրվարի 27-ի որոշման¹ մեջ այս առումով ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ վերահաստատում է Ս. Սաքանյանի գործով որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն այն մասին, որ «(...) ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավասարությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը (...):

(...) [Ա]պացույցների բավարարությունը չի կարող որոշվել թվաբանական ցուցանիշով, այդ պատճառով ՀՀ քրեադատավարական օրենքն օգտագործում է «ապացույցների համակցություն» հասկացությունը: Ակնհայտ է, որ ապացույցները բավարար չեն, եթե՝

1) գործում բացակայում է որևէ ապացույց գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող որևէ հանգամանքի պարզման համար,

¹ Մանրամասն տե՛ս *Գրիգոր Գրիգորյանի* գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի փետրվարի 27-ի թիվ ԳԳ/0002/01/14 որոշման 17-րդ կետը:

2) եղած ապացույցը թույլ չի տալիս պարզել այդ հանգամանքը անհրաժեշտ խորությամբ և լրիվությամբ,

3) այդ հանգամանքի ապացուցվածությունը կասկած է հարուցում» (տե՛ս Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 15-րդ և 17-րդ կետերը):

ՀՀ վճռաբեկ դատարանը վերահաստատում է նաև իր նախադեպային իրավունքում ձևավորած դիրքորոշումն առ այն, որ քրեական դատավարությունում մեղքի հարցը լուծելիս որպես ապացույցների բավարարության շեմ պետք է գործի «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշը: Ընդ որում՝ «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշ ասելով պետք է հասկանալ փաստական տվյալների (ապացույցների) այնպիսի համակցություն, որը **բացառում է հակառակի ողջամիտ հավանականությունը**: Վերոգրյալը չի նշանակում, որ հանցանք գործելու մեջ անձի մեղավորությունն ընդհանրապես չի կարող առաջացնել որևէ կասկած, սակայն այդպիսի կասկածի հավանականության դեպքում դրա աստիճանը պետք է լինի աննշան (խիստ ցածր): Այլ խոսքով՝ մեղադրանքը կազմող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ **ցանկացած ողջամիտ կասկած**¹:

Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ գործում առկա ապացույցների համակցությամբ հնարավոր չէ «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշին համապատասխան հաստատել անձի մեղավորությունը նրան մեղսագրվող արարքում, անձի նկատմամբ տվյալ մեղադրանքի շրջանակում չի կարող կայացվել մեղադրական դատավճիռ:

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի փաստի քննության այս փուլի բնորոշ առանձնահատկություններից, թերևս, կարելի համա-

¹ Մանրամասն տե՛ս Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 33-րդ կետը:

րել նաև ինստիտուցիոնալ և կազմակերպական որոշակի պահանջների պահպանումը: Անշուշտ, քննության այս փուլի առանցքը կազմում է քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ ապացուցման գործընթացի իրականացումը, սակայն քննարկվող տեսակի գործերի քննության բազմակողմանիությունը, օբյեկտիվությունն ու լրիվությունը, ինչպես նաև դրանց քննության միջազգային չափանիշերը պահանջում են որպեսզի ապահովվեն որոշակի ինստիտուցիոնալ և կազմակերպական պայմաններ:

Այլ կերպ ասած՝ թեև վերը նշված պահանջների պահպանումը բնորոշ է նաև քննության մյուս փուլերի համար, այդուհանդերձ, կարծում ենք, դրանք առավել բնութագրական են այս տեսակ գործերի քննության նշված փուլի համար:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ գլխավոր դատախազության գնահատմամբ՝ մասնավորապես՝ 2014–2015 թթ. ընթացքում ընդհանուր առմամբ պահպանվել են նաև խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի քննության անհապաղության, ամբողջականության և քննության մարմնի իրավասության չափանիշերը: Քննության ամբողջականության չափանիշի խախտման դեպքերում կիրառվել են դատախազական ներգործության միջոցներ՝ նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից տրվել են համապատասխան ցուցումներ՝ ապահովելու համար գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում 9 քրեական գործով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացրած դատախազների կողմից տրվել են համապատասխան քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու մասին գրավոր ցուցումներ:

Միևնույն ժամանակ, մտահոգիչ է այն, որ առերևույթ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում քննված որևէ քրեական գործով չի քննարկվել տուժողին դատահոգեբանական փորձաքննության ենթարկելու

հարցը՝ պարզելու համար հոգեկան տառապանք պատճառելու եղանակով տուժողին խոշտանգելու հնարավորության հանգամանքը: Մինչդեռ, ՄԱԿ-ի՝ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի վարչության կողմից մշակված, Ստամբուլյան արձանագրությամբ հաստատված՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի ձևերի արդյունավետ քննության և փաստագրման մասին ձեռնարկով ներկայացված առաջարկները, որպես խոշտանգումների մասին ապացույցների հավաքման եղանակ, ներառում են անհրաժեշտության դեպքում տուժողի դատահոգեբանական փորձաքննության կատարումը:

Որոշակի թերացումներ են արձանագրվել տուժողի ներգրավվածության չափանիշի ապահովման հարցում:

Ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ նախաքննություն իրականացնելիս, ինչպես և ցանկացած քրեական գործով, նախաքննության մարմինը լիազորված է ներգրավելու անաչառ բժշկական կամ այլ փորձագետների: Մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 249-րդ հոդվածի ուժով քննիչը լիազորված է փորձաքննության կատարումը կազմակերպել փորձագիտական հիմնարկից դուրս, թեև հաշվետու ժամանակահատվածում նման պրակտիկա չի կիրառվել:

Քննություն իրականացնող՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչներն ունեն քննության համար անհրաժեշտ բոլոր տեղեկությունները ստանալու լիազորություն և պարտավորություն: Նրանք լիազորված են՝ պարտավորեցնելու խոշտանգումներին կամ այլ դաժան վերաբերմունքին ենթադրաբար առնչություն ունեցած պաշտոնյաներին՝ ներկայանալու ցուցմունքներ տալու համար:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ 2014–2018 թթ. առաջին կիսամյակի ընթացքում քննված որևէ գործով ենթադրյալ տուժողների, վկաների և քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանց նկատմամբ պաշտպանության որևէ միջոց չի կիրառվել՝ դրա անհրաժեշտությունը չլինելու պատճառով:

Ինչ վերաբերում է խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի կիրառման մեջ կասկածվող անձանց իրենց զբաղեցրած պաշտոններից ազատելու պահանջին, ապա դրան համապատասխանում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով նախատեսված՝ դատավարական հարկադրանքի այլ միջոց հանդիսացող պաշտոնավարման ժամանակավոր դադարեցումը:

Այդպիսի միջոցի կիրառման անհրաժեշտությանն անդրադարձել է նաև ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումներում:

Հաշվետու ժամանակահատվածում ենթադրյալ խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ քննված քրեական գործերով նման հարկադրանքի միջոց կիրառվել է 1 անձի նկատմամբ:

Խիստ կարևորելով այն սկզբունքը, որ փորձաքննությունը պետք է անցկացվի փակ դռների հետևում, բժշկական փորձագետի վերահսկողությամբ և իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց բացակայությամբ, միևնույն ժամանակ պետք է փաստել, որ դատախազական հսկողության միջոցները թույլ չեն տալիս կանխել կամ ի հայտ բերել այնպիսի դեպքեր, երբ փորձաքննվողի հետազոտումն իրականացվել է իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց ներկայությամբ, ուստի, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել պահանջ առ այն, որ ենթադրաբար խոշտանգումից տուժած անձի մարմնի դատաբժշկական հետազոտումն իրականացվի քննության մարմնի և իրավապահ մարմինների աշխատակիցների տեսողական և լսողական վերահսկողությունը բացառող պայմաններում:

Հատկանշական է, որ այդ հանգամանքին անդրադարձել է ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում՝ նշելով, որ մասնակից պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի՝ երաշխավորելու համար կալանավորված անձանց՝ անմիջապես կալանավորման սկզբից խոշտանգման դեմ առկա իրավական բոլոր հիմնարար երաշխիքներից օգտվելու հնարա-

վորությունը՝ որոնք, ի թիվս այլոց, ներառում են նաև անկախ բժշկի կողմից բժշկական հետազոտության ենթարկվելու իրավունք, որը պետք է իրականացվի ոստիկանության աշխատակիցների լսելու և, եթե բժիշկը ակնհայտորեն չի առարկում, տեսնելու հնարավորությունից դուրս:

Ինչ վերաբերում է քրեական գործերի քննության հետագա փուլերին, ապա այն ընդհանուր առմամբ ներառում է դատական տարբերատյանների կողմից գործերի քննությունն ու վերանայումը: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հատկապես ընդգծել ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան խոշտանգումների և վատ վերաբերմունքի վերաբերյալ քրեական գործերով: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել հետևյալ գործերով.

1) *Մուսա Սերոբյանի, Ռազմիկ Սարգսյանի և Արայիկ Ջալյանի վերաբերյալ 22.12.2006 թ. ՎԲ-176/06 գործով,*

2) *Սեյրան Այվազյանի վերաբերյալ 23.05.2008 թ. ՎԲ-17/08 գործով,*

3) *Միշա Հարությունյանի վերաբերյալ 10.04.2010 թ. ՀՔԲԴ/0028/01/08 գործով,*

4) *Արայիկ Գզոյանի վերաբերյալ 12.02.2010 թ. ԵԱԲԴ/ 0049/01/09 գործով,*

5) *Ալիկ Մաթևոսյանի վերաբերյալ 26.03.2010 թ. ՎԲ-04/10 գործով,*

6) *Սվետլանա Գրիգորյանի վերաբերյալ 11.05.2011 թ. ԵԿԴ/0281/01/10 գործով,*

7) *Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ 01.11.2012 թ. ԱՐԴ/ 0176/01/11 գործով,*

8) *Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ 28.11.2013 թ. ՎԲ-05/13 գործով,*

9) *Ռուզաննա Նիսազյանի վերաբերյալ 31.05.2014 թ. ԵԿԴ/0118/11/13 գործով,*

10) *Իլլարիոն Նունուշյանի վերաբերյալ 05.06.2015 թ. ԵՇԴ/0070/01/13 գործով:*

§ 3. Խոշտանգման և վատ վերաբերմունքի զոհերի հիմնական թիրախային խմբերը և ռիսկերը

Վատ վերաբերմունքի պատկերի ամբողջական բացահայտման տեսանկյունից նպատակահարմար է պարզել խոշտանգումների զոհերի հիմնական թիրախային խմբերն ու այդպիսի վերաբերմունքի ենթարկվելու հնարավոր հիմնական ռիսկերը:

Այսպես, ՀՀ հատուկ քննչական ծառայության վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ, մասնավորապես, 2015 թվականի ընթացքում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ հաղորդում տված 143 անձից 105-ը արական սեռի ներկայացուցիչ են, 38-ը՝ իգական: Ենթադրյալ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացվել է 123 բողոք, որոնցից 107-ը՝ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, 6-ը՝ ՀՀ քննչական կոմիտեի, 8-ը՝ ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցների, 1-ական՝ ՀՀ ԱԱԾ և ՀՀ ԴԱԿ ապահովող ծառայության աշխատակիցների վերաբերյալ են:

2016 թվականի ընթացքում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ հաղորդում տված 187 անձից 141-ն արական սեռի ներկայացուցիչ են, 46-ը՝ իգական: Ենթադրյալ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացվել է 110 բողոք, որոնցից 91-ը՝ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, 7-ը՝ ՀՀ քննչական կոմիտեի, 8-ը՝ ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցների, 1-ական՝ ՀՀ ԱԱԾ, ՀՀ ԿԱ ՊԵԿ, ՀՀ մաքսային ծառայության և ՀՀ ԴԱԿ ապահովող ծառայության աշխատակիցների վերաբերյալ են:

2017 թվականի ընթացքում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբեր-

մունքի վերաբերյալ հաղորդում տված 154 անձից 129-ն արական սեռի ներկայացուցիչ են, 25-ը՝ իգական: Ենթադրյալ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացվել է 106 բողոք, որոնցից 90-ը՝ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, 2-ը՝ ՀՀ ՊՆ ՌՌ, 5-ը՝ ՀՀ քննչական կոմիտեի, 8-ը՝ ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցների, 1-ը՝ ՀՀ դատախազության աշխատակիցների վերաբերյալ են:

2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ հաղորդում տված 154 անձից 130-ն արական սեռի ներկայացուցիչ են, 24-ը՝ իգական: Ենթադրյալ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից խոշտանգման և վատ վերաբերմունքի վերաբերյալ ստացվել է 77 բողոք, որոնցից 65-ը՝ ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների, 1-ը՝ ՀՀ ՊՆ ՌՌ, 3-ը՝ ՀՀ քննչական կոմիտեի, 4-ը՝ ՀՀ ԱՆ ՔԿՎ աշխատակիցների, 3-ը՝ ՀՀ դատախազության, 1-ը՝ ԴԱԿ ապահովող աշխատակիցների վերաբերյալ են:

Այսպիսով՝ վերը նշված, ինչպես նաև նմանատիպ այլ վիճակագրական տվյալների, ինչպես նաև մամուլ հաղորդագրությունների համադրությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում խոշտանգումների և վատ վերաբերմունքի զոհերի հիմնական թիրախային խմբերն ըստ սեռական հատկանիշի՝ տղամարդիկ են, իսկ ըստ կատարող սուբյեկտի՝ հիմնականում ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ են:

Միևնույն ժամանակ, ըստ խոշտանգման ենթարկված անձանց քրեադատավարական կարգավիճակի, վերջին տարիների պատկերը հետևյալն է.

2015 թվականի ընթացքում խոշտանգումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով և քրեական գործերով որպես ենթադրյալ խոշտանգման զոհ եղել են **143** անձինք, որոնցից՝

- ✓ 7 դատապարտյալ,
- ✓ 9 ամբաստանյալ,

- ✓ **15** կալանավոր,
- ✓ **17** մեղադրյալ,
- ✓ **54** տուժող,
- ✓ **1** տուժողի իրավահաջորդ,
- ✓ **29** վկա,
- ✓ **11**-ը քրեադատավարական կարգավիճակ չունի:

Նշվածներից **27**-ը ՀՀ ԱՆ ՔԿԿ-ներում պահվող անձինք են, **5**-ը՝ ՁՊՎ-ներում պահվող անձինք:

2016 թվականի ընթացքում խոշտանգումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով և քրեական գործերով որպես ենթադրյալ խոշտանգման զոհ եղել են **187** անձինք, որոնցից՝

- ✓ **6** դատապարտյալ,
- ✓ **3** ամբաստանյալ,
- ✓ **13** կալանավոր,
- ✓ **19** մեղադրյալ,
- ✓ **132** տուժող,
- ✓ **2** տուժողի իրավահաջորդ,
- ✓ **12** վկա:

Նշվածներից **22**-ը ՀՀ ԱՆ ՔԿԿ-ներում պահվող անձինք են, **5**-ը՝ ՁՊՎ-ներում պահվող անձինք:

2017 թվականի ընթացքում խոշտանգումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով և քրեական գործերով որպես ենթադրյալ խոշտանգման զոհ եղել են **154** անձինք, որոնցից՝

- ✓ **6** դատապարտյալ,
- ✓ **14** ամբաստանյալ,
- ✓ **10** կալանավոր,
- ✓ **11** մեղադրյալ,
- ✓ **89** տուժող,
- ✓ **2** տուժողի իրավահաջորդ,
- ✓ **6** վկա,
- ✓ **16**-ը **քրեադատավարական** կարգավիճակ չունի:

Նշվածներից **23**-ը ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձինք են, **7**-ը՝ ԶՊՎ-ներում պահվող անձինք:

2018 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում խոշտանգումների վերաբերյալ նախապատրաստված նյութերով և քրեական գործերով որպես ենթադրյալ խոշտանգման զոհ եղել է **154** անձ, որոնցից՝

- ✓ **5** դատապարտյալ,
- ✓ **8** ամբաստանյալ,
- ✓ **9** կալանավոր,
- ✓ **2** մեղադրյալ,
- ✓ **124** տուժող,
- ✓ **3** վկա,
- ✓ **3 քրեադատավարական** կարգավիճակ չունի:

Նշվածներից **19**-ը ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում պահվող անձինք են, **6**-ը՝ ԶՊՎ-ներում պահվող անձինք:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում կարելի է փաստել, որ խոշտանգումների ենթարկված անձանց խոցելի խմբում ազատությունից զրկված անձինք են:

Ինչ վերաբերում է խոշտանգումների ենթարկվելու ռիսկերին, ապա պետք է նշել, որ այս ախտածին երևույթի առկայության պատճառները ՀՀ-ում կապված են տարբեր հանգամանքների հետ: Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի՝ խոշտանգումների կանխարգելման կոմիտեն 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը Հաստատան կատարած պարբերական այցի արդյունքների վերաբերյալ զեկույցում արձանագրել է, որ ***նուփականության համակարգի ձերբակալվածների պահման վայրեր կամ քրեակարարողական հիմնարկներ ընդունված անձանց բուժզննությունների արդյունքում գրանցված մարմնական վնասվածքների վերաբերյալ տեղեկությունները շարունակում են փոխանցվել քրեական գործով վարույթն իրականացնող քննիչին, հսկող դատախազին, բայց ոչ ՀՀ հատուկ քննչական ծառայություն: ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները մեխանիկորեն չեն ներգրավվում քննությանը՝ նուփականության աշխատակիցների կողմից ենթադրյալ***

վար վերաբերմունքի դրսևորման վերաբերյալ բողոքների կամ դրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկության առկայության դեպքում:

Համաձայն ՀՀ հատուկ քննչական ծառայության ներկայացրած դիտարկումների՝ ՀՀ-ում խոշտանգումների ռիսկերի գործոնների թվում են նաև ենթադրյալ խոշտանգումների դեպքերի առթիվ քննված քրեական գործերով դեպքի վայրերի զննությունների ընթացքում արձանագրված թերացումներն են խոշտանգման հետքերի և իրեղեն ապացույցների հավաքման արդյունավետության ապահովման առումով: Մասնավորապես, այդպիսի զննությունները հիմնականում կատարվել են առանց համապատասխան մասնագետների ներգրավման: Մինչդեռ, վերջիններիս ներգրավումը հնարավորություն կտա քրեագիտական տեխնիկայի կիրառմամբ ապահովելու ենթադրյալ խոշտանգման փաստի մասին վկայող հետքերի և իրեղեն ապացույցների, այդ թվում՝ արյան, սերմնահեղուկի, մազերի և մանրաթելերի հայտնաբերումը: Այս առումով հարկ է նկատել, որ ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում նշել է, որ. **«Մասնակից պեղությունը պեղք է ամրապնդի և շարունակի մշակել խոշտանգումների կանխարգելման և արդյունավետ բացահայտման ու արձանագրման վերաբերյալ պարտադիր ընթացիկ դասընթացներ (վերապարաստման ծրագրեր)՝ Ստամբուլյան արձանագրության չափանիշերին համահունչ՝ նախապեսված համապարաստման պեղական ծառայողների, մասնավորապես՝ իրավապահ մարմինների ներկայացուցիչների, քրեակարարողական հիմնարկների անձնակազմի, կալանավայրերի բուժանձնակազմի, դատաբժշկական փորձագետների, դատավորների ու դատախազների համար»**¹:

Հարկ է նաև նշել վատ վերաբերմունքի ենթարկվելու ռիսկերի ևս մեկ վերհանված հանգամանքի մասին: Խիստ կարևորելով

¹ Տես՝ ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեի 59-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված՝ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումների 44-րդ կետի (a) ենթակետը:

այն սկզբունքը, որ խոշտանգումների վերաբերյալ դեպքերով փորձաքննությունը պետք է կատարվի փակ դռների հետևում, բժշկական փորձագետի վերահսկողությամբ և իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց բացակայությամբ, միևնույն ժամանակ պետք է փաստել, որ դատախազական հսկողության միջոցները թույլ չեն տալիս կանխել կամ ի հայտ բերել այնպիսի դեպքեր, երբ փորձաքննության ենթարկվող անձի հետազոտումն իրականացվել է իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց ներկայությամբ: Ուստի անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել պահանջ առ այն, որ ենթադրաբար խոշտանգումից տուժած անձի մարմնի դատաբժշկական հետազոտումն իրականացվի քննչական մարմնի և իրավապահ մարմինների աշխատակիցների տեսողական և լսողական վերահսկողությունը բացառող պայմաններում, ինչի բացակայությունը խոշտանգումների ենթարկվելու ռիսկերի շարքում է:

Հատկանշական է, որ այդ հանգամանքին անդրադարձել է ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում՝ նշելով, որ մասնակից պետությունը պետք է արդյունավետ միջոցներ ձեռնարկի երաշխավորելու կալանավորված անձանց՝ անմիջապես կալանավորման պահից խոշտանգումը բացառող իրավական բոլոր հիմնարար երաշխիքներից գործնականում օգտվելու հնարավորություն՝ միջազգային չափանիշերին համապատասխան, որոնք, ի թիվս այլոց, ներառում են նաև՝ անկախ բժշկի կողմից բժշկական հետազոտության ենթարկվելու իրավունք, որը պետք է իրականացվի ուստիկանության աշխատակիցների լսելու, և եթե բժիշկն ակնհայտորեն չի առարկում՝ տեսնելու հնարավորությունից դուրս¹:

Պետք է նշել ևս մեկ կարևոր հանգամանք՝ խոշտանգումների ենթարկվելու ռիսկերի մասին խոսելիս:

Այսպես, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի վերաբերյալ կարճված քրեական գործերի վարույթների ուսումնասի-

¹ Տես՝ ՄԱԿ-ի՝ Խոստանգումների դեմ կոմիտեի 59-րդ նստաշրջանի ընթացքում ընդունված՝ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի եզրափակիչ դիտարկումների 1-րդ կետի (e) ենթակետը:

րությունը ցույց է տալիս, որ խոշտանգումների դեպքերի ապացուցման կամ դրանց լիարժեք հերքման բարդությունը շատ դեպքերում պայմանավորված է նրանով, որ գործնականում հազվադեպ է տեսաձայնագրվում կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունը, ինչպես նաև՝ նրանց մասնակցությամբ կատարվող քննչական այլ գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը:

Նկատի ունենալով, որ խոշտանգումների մասին հաղորդումների հիմնական մասը վերաբերում է խոշտանգման կիրառմամբ խոստովանական ցուցմունքներ կորզելուն, ուստի կասկածյալների և մեղադրյալների (հատկապես՝ անազատության մեջ գտնվող) հարցաքննությունների տեսագրումը հնարավորություն կտա իրական պատկերացում կազմելու, թե խոստովանական ցուցմունք տվող անձը ցուցմունք տվել է իր կամքով, թե՞ ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ազդեցության տակ, ինչպես նաև պարզելու այդ պահին հարցաքննվող անձի դեմքի և մարմնի տեսանելի այլ մասերի վրա հնարավոր խոշտանգման հետքերի առկայության հանգամանքը: Նշված բացին, որը մեծացնում է խոշտանգումների ենթարկվելու ռիսկը, նույնպես անդրադարձ է կատարվել ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում:

Նշենք նաև, որ խոշտանգումների ենթարկվելու ռիսկերն էապես մեծանում են՝ նկատի ունենալով այն, որ Հայաստանի Հանրապետության բազմաթիվ շրջաններում բացի տեխնիկական անհրաժեշտ միջոցներից, առհասարակ բացակայում են ոստիկանության բաժանմունքներին կից բուժկետեր, որի պայմաններում գրեթե անհնարին է համապատասխան բժշկական փաստաթղթավորման ենթարկել խոշտանգումների վերաբերյալ բողոքներ ներկայացնող անձանց համապատասխան վնասվածքները:

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաս-

տացնող վերաբերմունքով դեպքերի քննության և դրանցով պայմանավորված՝ սուտ մատնության վերաբերյալ քրեական գործերի քննության վիճակագրական տվյալների հարաբերակցությունը, քանի որ վերջինս որոշակիորեն ազդեցություն է թողնում այս տեսակ գործերի քննության ընդհանուր պատկերի ու շարժընթացի, հատկապես՝ դատարան ուղարկվող քրեական գործերի քանակական ցուցանիշների վրա:

h/h		2015 թ.	2016 թ.	2017 թ.	2018 թ. 1-ին կիսամյակ
1.	Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքով քննված քրեական գործերի թիվը, որից՝	114	104	99	71
2.	<i>սուտ մատնության փաստով</i>	2	9	22	6

Ինչ վերաբերում է պետական ծառայություն իրականացնող անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով կարճված քրեական գործերին, ապա պետք է նշել, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության պրակտիկայի ամփոփման արդյունքում դրանք կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի.

1. քրեական գործեր, որոնցով ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձանց մոտ մարմնական վնասվածքներ չեն հայտնաբերվել և ապացույցների բավարար համակցությամբ չեն ապացուցվել ինչպես խոշտանգման, այնպես էլ սուտ մատնություն կատարելու փաստերը,

2. քրեական գործեր, որոնցով ենթադրաբար խոշտանգման ենթարկված անձանց մոտ թեև հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ, սակայն ապացույցների բավարար համակցությամբ չեն ապացուցվել ինչպես խոշտանգման, այնպես էլ սուտ մատնություն կատարելու դեպքերը:

Անշուշտ վերոգրյալի հետ կապված՝ մտահոգիչ է նաև դատարան ուղարկված քրեական գործերի քանակական ցածր ցուցանիշները, ինչը պայմանավորված է մի շարք պատճառներով: Այսպես, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքով քննված քրեական գործերից դատարան են ուղարկվել.

2015 թվականին՝ 1 քրեական գործ 1 անձի վերաբերյալ,

2016 թվականին՝ 3 գործ 1 անձի վերաբերյալ,

2017 թվականին՝ 1 քրեական գործ 1 անձի վերաբերյալ,

2018 թվականի առաջին կիսամյակին՝ 1 քրեական գործ՝ 2 անձի վերաբերյալ:

Այս կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության 23.06.2017 թ. կոլեգիան արձանագրել է, որ մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի համեմատ վարույթը կարճված քրեական գործերի բարձր ցուցանիշը պայմանավորված է այդօրինակ գործերով ապացուցման բարդությամբ և առանձնահատկություններով, ինչպես նաև խոշտանգումների վերաբերյալ ստացված հաղորդումների՝ Եվրոպական դատարանի կողմից մշակված վստահելիության չափանիշին չհամապատասխանելու հանգամանքով, մասնավորապես, երբ հանցագործության մասին հաղորդում տված անձի հայտնած հանգամանքներն իրենց հաստատումը չեն ստանում քննությամբ ձեռք բերված այլ ապացույցներով, օրինակ, դիմողի մոտ բացակայում են մարմնական վնասվածքները, կամ դրանց առկայության պայմաններում հնարավոր չի լինում ապացույցների բավարար համակցությամբ հաստատված համարել, որ դրանք առաջացել են բռնության հետևանքով, և ոչ թե այլ հանգամանքներում, օրինակ՝ բերման ենթարկելիս ոստիկանների օրի-

նական պահանջներին չենթարկվելու պատճառով ֆիզիկական ուժի գործադրման արդյունքում կամ ենթադրյալ խոշտանգմանը նախորդած իրադարձությունների ժամանակ և այլ հանգամանքներում:

Վարույթները կարճված քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ խոշտանգումների դեպքերի ապացուցման կամ դրանց լիարժեք հերքման բարդությունը շատ դեպքերում պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում հազվադեպ է տեսաձայնագրվում կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող քննչական այլ գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը:

Նկատի ունենալով, որ խոշտանգումների մասին հաղորդումների հիմնական մասը վերաբերում է խոշտանգման կիրառմամբ խոստովանական ցուցումներ կորզելուն, ուստի կասկածյալների և մեղադրյալների (հատկապես, անազատության մեջ գտնվող) հարցաքննությունների տեսաձայնագրումը հնարավորություն կտա իրական պատկերացում կազմելու, թե խոստովանական ցուցումներ տվող անձը ցուցումները տվել է իր կամքով, թե ենթադրյալ խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ազդեցության տակ, ինչպես նաև պարզելու այդ պահին հարցաքննվող անձի դեմքի և մարմնի տեսանելի այլ մասերի վրա հնարավոր խոշտանգման հետքերի առկայության հանգամանքը: Կասկածյալների և մեղադրյալների հարցաքննությունների այդօրինակ ամրագրումը հնարավորություն կտա նաև հստակ պարզելու այն հաղորդումների հավաստիությունը, որոնցով կասկածյալները և մեղադրյալները հայտնում են ոստիկանության աշխատակիցների կողմից իրենց խոշտանգելու մասին քննիչին հարցաքննության ժամանակ հայտնելու, սակայն վերջինիս կողմից այդ հանգամանքը չարձանագրելու վերաբերյալ:

Հատկանշական է, որ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում ՄԱԿ-ի՝ խոշտանգումների դեմ կոմիտեն, վերահաստատելով իր նախորդ

հանձնարարականը, նշել է, որ. «Մասնակից պետությունը պետք է նախաձեռնի օրենսդրական ու այլ անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու համար քրեական գործերով բոլոր հարցաքննությունների պարտադիր տեսաձայնագրումը, և զինի ոստիկանական բաժանմունքներում ու անազատության մեջ պահելու համար նախատեսված այլ վայրերում հարցաքննության համար նախատեսված բոլոր սենյակները տեսաձայնագրման սարքերով: Մասնակից պետությունը պետք է նաև ապահովի, որ տեսաձայնագրությունները պահպանվեն այնքան ժամանակ, որ հնարավոր լինի դրանք օգտագործել որպես ապացույց (ներառյալ դատարանում), և որ տեսագրությունները վերահսկվեն խոշտանգումներն ու չափանիշերի մյուս խախտումները բացահայտելու ու հետաքննելու նպատակով, և որ այդ տեսագրությունները հասանելի լինեն ամբաստանյալներին ու նրանց փաստաբաններին»:

Այսպիսով, վիճակագրական տվյալների ամփոփման հիման վրա կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետությունում որպես խոշտանգման և վատ վերաբերմունքի ենթարկվելու առավել դիսկային վայրեր են համարվում ՁՊՎ-ները, ՀՀ ԱՆ ՔԿՀ-ները, ինչպես նաև ոստիկանական բաժանմունքները, իսկ որպես խոցելի խմբեր՝ ազատությունից զրկված արական սեռի անձինք: Վերոգրյալը, ինչպես նաև ներկայացված վիճակագրական տվյալներն ու քննության առավել հրատապ հիմնախնդիրները կարող են օգտագործվել այս ոլորտում իրավական, կազմակերպական և ընթացակարգային առավել ընդգրկուն բարեփոխումների իրականացման նպատակով՝ ժամանակակից մարտահրավերներին լուծում տալու համար:

ԲԱԺԻՆ 3.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԵՎ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՅԼ ՁԵՎԵՐԻ ՓԱՍՏԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

§ 1. Արդյունավետ քննության ապահովման առաջարկներ

Ակնհայտ է, որ վատ վերաբերմունքի փաստի քննության արդյունավետությունը մշտական կատարելագործման կարիք ունի և պահանջում է համալիր միջոցառումների ձեռնարկում ինչպես նախաքննական մարմինների, այնպես էլ դատախազական ու դատական մարմինների կողմից: Ըստ այդմ՝ հիմք ընդունելով ՀՀ հատուկ քննչական ծառայության փորձը, ինչպես նաև նկատի ունենալով ՀՀ գլխավոր դատախազության 23.06.2017 թ. կոլեգիայի նիստի արդյունքները.

- 1) նպատակահարմար է, որպեսզի ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների կողմից նախաքննություն կատարելիս, ինչպես նաև դրա օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու համար ՀՀ գլխավոր դատախազի կողմից լիազորված դատախազներին՝ խոշտանգման ենթադրյալ հանցագործությունների դեպքերի առթիվ քրեական գործերով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս պատշաճ ուշադրություն դարձվի, որպեսզի՝
 - քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ կամ դրանից անմիջապես հետո ենթադրյալ խոշտանգման ենթարկված անձինք ճանաչվեն տուժող և մանրակրկիտ հարցաքննվեն վատ վերաբերմունքի մասին իրենց պնդումների առնչությամբ,
 - քրեական գործ հարուցելուց անմիջապես հետո անհապաղ և մանրակրկիտ հարցաքննվեն ենթադրաբար խոշտանգում

իրականացրած անձինք՝ բացառելու նրանց կողմից ցուցմունքները համապատասխանեցնելու հնարավորությունը,

- պարզվեն հնարավոր բոլոր վկաները և մանրակրկիտ հարցաքննվեն ենթադրյալ տեղի ունեցած խոշտանգման հանգամանքների շուրջ,
- ենթադրյալ խոշտանգում իրականացրած պաշտոնատար անձանց կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ տալուց անմիջապես հետո, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածին համապատասխան, ժամանակավորապես դադարեցվի նրանց պաշտոնավարությունը,
- անհրաժեշտության դեպքում տուժողի, ինչպես նաև դատավարությանը մասնակցող այլ անձանց նկատմամբ կիրառվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցներ,
- անհապաղ նշանակվի տուժողի դատաբժշկական փորձաքննություն և կատարվի դեպքի վայրի զննություն՝ այդպիսի գործողությունների զննությունների կատարմանը որպես կանոն ներգրավելով քրեագետ-մասնագետների՝ վերջիններիս կողմից քրեագիտական տեխնիկայի կիրառմամբ ապահովելու համար ենթադրյալ խոշտանգման փաստի մասին վկայող հետքերի, իրեղեն ապացույցների, միկրոմասնիկների հայտնաբերումը,
- դեպքի վայրի զննությանը որպես կանոն ներգրավվել դատական կենսաբանության (գենետիկայի) բնագավառի որակավորված համապատասխան մասնագետի՝ արյան, սերմնահեղուկի, մազերի և մանրաթելերի հայտնաբերման նպատակով,
- տուժողի դատաբժշկական փորձաքննությամբ պարտադիր պարզվի վնասվածքի առաջացման մեխանիզմը,
- նշանակվի տուժողի դատահոգեբանական փորձաքննություն բոլոր այն գործերով, որոնցով տուժողը հայտնել է հոգեկան

տառապանք պատճառելու եղանակով իրեն խոշտանգելու մասին՝ պարզելու տուժողին նման եղանակով խոշտանգման ենթարկելու հնարավորությունը՝ փորձագետի լուծմանն առաջադրելով հետևյալ հարցերը՝

1. համապատասխանում են արդյոք հոգեբանական հետազոտության արդյունքները ենթադրյալ տեղի ունեցած խոշտանգման մասին հաղորդմանը,

2. հոգեբանական հետազոտության արդյունքները հանդիսանում են արդյոք էքստրեմալ աստիճանի սպասելի կամ տիպային հակազդեցություններ՝ հաշվի առնելով տվյալ անձի և սոցիալ-մշակութային առանձնահատկությունները,

3. հաշվի առնելով հոգեկան խանգարումների զարգացման անհամաչափությունը՝ փորձաքննության կատարման պահի դրությամբ ե՞րբ է տուժողը ենթարկվել խոշտանգումների,

4. ինչպիսիք են փորձաքննվողի վրա ներգործող՝ սթրեսին ուղեկցող գործոնները (օրինակ՝ շարունակվող հետապնդումը, ընտանիքի և սոցիալական դերի կորուստը): Այդ խնդիրներն ինչպիսի ներգործություն են ունենում տվյալ անձի վրա,

5. ինչպիսի ֆիզիկական հանգամանքներ են ազդում կլինիկական պատկերի վրա,

6. կլինիկական պատկերը վկայում է արդյոք այն մասին, որ խոշտանգման ենթարկելու մասին պնդումները սուտ են,

- խստագույնս պահպանվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով երաշխավորված՝ տուժողի, ինչպես նաև կասկածյալի և մեղադրյալի իրավունքը՝ քննիչի կողմից փորձագետի եզրակացությունը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում ծանոթանալու փորձագետի եզրակացությանը,
- տուժողի և ենթադրյալ խոշտանգում իրականացրած անձանց ցուցմունքների միջև էական հակասությունների դեպքում պարտադիր և անհապաղ կատարվեն առերեսումներ,

- պատշաճ հավաքվեն, հետազոտվեն և գնահատվեն տուժողի վերաբերյալ բժշկական փաստաթղթերը, ինչպես նաև հարցաքննվեն այդ փաստաթղթերը կազմած անձինք,
- ենթադրյալ վատ վերաբերմունքի մասին հաղորդումը դեպքից հետո ուշացումով ներկայացված լինելու դեպքերում մանրակրկիտ ստուգվեն ուշացման պատճառները, մասնավորապես՝ հաշվի առնելով այն, թե արդյոք դա պայմանավորված չի եղել արգելքի տակ գտնվելու հետևանքով հնարավոր անօգնականության և վախի զգացողություններով,
- խոշտանգման դեպքի առիթով քննվող քրեական գործով արդարացնող հիմքով քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական գործով վարույթը կարճելու և/կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումներում մանրամասն գնահատական տրվի վատ վերաբերմունքի մասին հաղորդում տված անձանց հայտնած բոլոր հանգամանքներին:

2) Անկախ մարմնի կողմից քննությունն իրականացնելու չափանիշը խստագույնս պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված, հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի՝ խոշտանգումների կանխարգելման կոմիտեի դիտարկումները, առաջարկում ենք վերանայել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 10-ի որոշման (Արձանագրություն թիվ 4) 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի՝ 2009 թվականի փետրվարի 8-ի որոշման (Արձանագրություն թիվ 2) 1-ին կետի 3-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2008 թվականի ապրիլի 10-ի թիվ 20/4-116-08 հանձնարարականով սահմանված և գործնականում կիրառվող այն ընթացակարգը, համաձայն որի՝ «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներից այդ հիմնարկներ մարմնական վնասվածքներով անձանց ընդունելու վերաբերյալ ստացված իրազեկումներով արդեն իսկ նախատեսված նյութերը և հարուցված քրեական գործերը պետք է ուղարկվեն ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Նպատակահարմար է, որպեսզի բոլոր այն դեպքերում, երբ վարույթն իրականացնող մարմինը, այդ թվում՝ հսկող դատախազը, իրազեկման ուսումնասիրությամբ պարզում է, որ ձեռքբերված կամ կալանավորված անձը վնասվածքները ստանալու հանգամանքների շուրջ հայտարարել է այդպիսիք խոշտանգման արդյունքում պատճառվելու մասին, առանց այդ իրազեկման առթիվ նյութեր նախապատրաստելու, անհապաղ այդպիսին պետք է ուղարկվի ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

3) Համապատասխան շրջաբերական-նամակներով նախաքննության մարմինների ղեկավարներին առաջարկել, որպեսզի քննչական պրակտիկայում կասկածյալների և մեղադրյալների (հատկապես՝ անազատության մեջ գտնվող) հարցաքննությունը, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կատարվող այլ քննչական գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննումը, քննչական փորձարարությունը, հետազոտման համար նմուշներ ստանալը որպես կանոն տեսաձայնագրվի:

Դատաբժշկական փորձաքննություններ իրականացնող փորձագիտական հիմնարկներին ուղարկել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 2000 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 55/89 և Մարդու իրավունքների հանձնաժողովի 2000 թվականի ապրիլի 20-ի թիվ 2000/43 բանաձևերով հաստատված՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի ձևերի արդյունավետ քննության ու փաստագրման սկզբունքներով հաստատված՝ խոշտանգումների և այլ դաժան վերաբերմունքի վերաբերյալ քննության ընթացքում կազմվող բժշկական փորձագիտական եզրակացություններին ներկայացվող խորհրդատվական բնույթի պահանջները՝ խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերով փորձագիտական եզրակացություններն այդ պահանջների հաշվառմամբ կազմելու համար այնքանով, որքանով դրանք չեն հակասում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով փորձագետի եզրակացությանը ներկայացվող պահանջներին:

4) Խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերի քննության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ապահովել միասնական տակտիկական գիծ, ինչը, նախևառաջ, ենթադրում է առանձին քննչական գործողությունների կատարման ընթացքում կիրառել որոշակի տիպային տակտիկական հնարքներ: Մասնավորապես.

- տուժողի հարցաքննության ընթացքում նախաքննության գաղտնիության սկզբունքի պահպանման պայմաններում վերջինիս առավել տեղեկացնել քննության ընթացքի, ձեռքբերումների ու ձեռնարկվող քայլերի մասին, ինչը կնպաստի ոչ միայն վերջինիս հետ հոգեբանական շփման հաստատմանը, այլ նաև՝ քննության նկատմամբ վստահության ձևավորմանը և առավելագույն աջակցության ցուցաբերմանը,
- տուժողի հարցաքննության ընթացքում առավելագույնս խուսափել այնպիսի հարցադրումներից կամ ձևակերպումներ օգտագործելուց, որոնք վերջինիս կստիպեն վերապրել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի դեպքի մանրամասները՝ դրանից բխող բացասական հետևանքներով հանդերձ,
- դեպքի վայրի զննության ընթացքում հատուկ ուշադրություն դարձնել տարբեր տեսակի միկրոմասնիկներ, մանրաթելերի, հատկապես կենսաբանական հետքերի մնացորդների, հայտնաբերման, ինչպես նաև անտեսանելի հետքերի ու գոյացությունների, հնարավոր տեսաձայնագրության նյութի առկայության փաստի վրա,
- դեպքի վայրի զննությունը կազմակերպել ոչ միայն քրեաբանի և դատական բժշկության, այլ նաև միկրոկենսաբանության (գենետիկայի) բնագավառի մասնագետների պարտադիր մասնակցությամբ՝ համապատասխան տեխնիկական միջոցների կիրառմամբ,
- դեպքի վայրի զննության ընթացքում կիրառել կրիմինալիստիկական լուսանկարչության ու տեսագրման համապատասխան մեթոդներն ու եղանակները, մասնավորապես՝

կատարել դեպքի վայրի և հայտնաբերված հետքերի ամբողջական լուսանկարում՝ *կողմնորոշող, տեսածիրային, հանգուցային և դեֆալային* եղանակներով,

- տուժողի մասնակցությամբ առերեսում կատարելու նախապատրաստական փուլում անհրաժեշտ է վերջինիս հոգեբանորեն տրամադրել այդ քննչական գործողության և դրա արդյունքների նշանակության վերաբերյալ:

5) Խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերի քննության ընթացքում ապացույցներ հավաքելու և ամրագրելու՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների ունակությունները բարձրացնելու և այդ բնույթի քրեական գործերով նախաքննության նկատմամբ պատշաճ դատավարական ղեկավարում ապահովելու համար առաջարկվում է ՀՀ արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրերում ներառել ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների և խոշտանգումների վերաբերյալ քրեական գործերով նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների վերապատրաստում Ստամբուլյան արձանագրության չափանիշերին համապատասխան:

§ 2. Կազմակերպատիրական բնույթի առաջարկներ

Խոշտանգման կամ վատ վերաբերմունքի ցանկացած ձևի դրսևորման կանխարգելման կարևոր գրավականներից մեկը ՁՊՎ-ներում և ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում համապատասխան մարմինների կողմից ծառայական խիստ հսկողության սահմանումն է: Ընդ որում՝ այս գործում ոչ պակաս կարևոր դեր ունեն նաև դատախազական մարմինները՝ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառույթի շրջանակում:

Այդ նպատակով էլ ստորև ներկայացվող առաջարկությունները մշակելիս, Ստամբուլյան արձանագրության հիմնական պահանջների համատեքստում, հաշվի են առնվել ՀՀ հատուկ քննչական ծառայության և դատախազական համապատասխան մարմինների

արժեքավոր փորձն այս ոլորտում, ինչպես նաև հատկապես վերջին տարիներին այդ ուղղությամբ ձեռնարկված գործուն քայլերն ու որոշակի առաջարկները, որոնք, մոտ ապագայում անկասկած իրենց արդյունքները զգացնել կտան:

Այս տեսանկյունից, հաշվի առնելով ընդդեմ Հայաստանի գործերով Եվրոպական դատարանի կայացրած վճիռներում արձանագրված ընթացակարգային խախտումները, ինչպես նաև՝ Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ CAT-ի եզրափակիչ դիտարկումները՝ անհրաժեշտ է, որ պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազները ձերբակալման օրինականության նկատմամբ իրենց հսկողական լիազորություններն իրականացնելիս հետևողական լինեն, որպեսզի խստագույնս պահպանվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջն առ այն, որ կալանավորված անձը չի կարող 3 օրվանից ավելի պահվել ՁՊՎ-ում, բացի այն դեպքերից, երբ ՁՊՎ-ից քննչական մեկուսարան կամ, օրենքի պահանջներին համապատասխան, կալանավորվածներին պահելու այլ վայրեր նրա տեղափոխումը հնարավոր չէ տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով:

Այս կապակցությամբ Զալյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով որոշմամբ Եվրոպական դատարանն արձանագրել է. *«Ենթադրվում է, որ այս պահանջը պետք է կարևոր երաշխիք հանդիսանա ֆիզիկական բռնության դեմ, որին կարող են ենթարկվել ձերբակալված անձինք ոստիկանության՝ ՁՊՎ-ներում, այն պայմանով, որ բոլոր կալանավորված անձինք պետք է անցնեն բժշկական զննություն կալանավայր ընդունվելու ժամանակ»:*

Միևնույն ժամանակ կարծում ենք անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել գրանցամատյաններում գրառումների հստակության, լրիվության, ինչպես նաև միասնական ձևանմուշների սահմանման ու վարման կարգի ներդրման վրա: Բացի դրանից, նախընտրելի է, որպեսզի անձանց ՁՊՎ-ներ ընդունելու գործընթացը

տեսագրվի, ընդ որում՝ տեսանյութի պարտադիր պահպանման հնարավորությամբ: Հասկանալի է, նման գործընթացը պահանջում է լրացուցիչ միջոցներ, այնուամենայնիվ տեսանյութի առկայությունն էապես կարող է օգնել գործով օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը, ինչու չէ՝ նաև ոստիկանության աշխատակիցներին հանիրավի մեղադրելուն բացառմանը՝ դրանով իսկ նպաստելով նաև սուտ մատնության դեպքերի բացահայտմանն ու քննությանը:

Խոշտանգումների փաստի արդյունավետ փաստաթղթավորման, դրանց արագ ու լիարժեք բացահայտման, ինչպես նաև սուտ մատնության հնարավոր դեպքերի նվազեցման ու կանխարգելման նպատակով նպատակահարմար է որոշակի պարբերականությամբ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների և ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների համապատասխան աշխատակիցների համար դատական բժշկության և գենետիկայի, ինչպես նաև քրեաբանության բնագավառի մասնագետների մասնակցությամբ կազմակերպել կանոնավոր հանդիպումներ, քննարկումներ:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է, հատկապես ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների և ՀՀ ԱՆ ՔԿՀ-ների աշխատակիցների համար եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքներով շրջաբերականների տեսքով հրապարակել վատ վերաբերմունքի դեպքերի քննության ու բացահայտման վիճակագրությունը, դրանց շարժընթացը, ժամանակակից մարտահրավերները, ներպետական ու միջազգային իրավական զարգացումներն ու դրանց միտումները:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով եվրոպական դատարանի կողմից արձանագրված խախտումը՝ ենթադրյալ վատ վերաբերմունքի ենթարկված անձի փաստաբանին չհարցաքննելու մասին՝ առաջարկվում է համապատասխան օրենսդրական փոփոխության միջոցով վերացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ինչպես նաև «Փաստաբանության

մասին» ՀՀ օրենքի 21–րդ հոդվածի 8–րդ մասով նախատեսված իրավաբանական օգնություն ցույց տալու կապակցությամբ փաստաբանին հայտնի դարձած հանգամանքների շուրջ վերջինիս որպես վկա հարցաքննելու օրենսդրական բացարձակ արգելքը՝ նախատեսելով փաստաբանին հարցաքննելու իրավական հնարավորություն բոլոր այն դեպքերում, երբ վերջինիս իր մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում հայտնի են դարձել խոշտանգման կամ վատ վերաբերմունքի հանգամանքների մասին տեղեկություններ:

Հիմք ընդունելով CPT–ի և CAT–ի դիտարկումները, ինչպես նաև խոշտանգումների կանխարգելման և արդյունավետ բացահայտման ու արձանագրման վերաբերյալ Ստամբուլյան արձանագրության պահանջները՝ նպատակահարմար է օրենսդրորեն ամրագրել պահանջն այն մասին, որ.

- a. ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ–ներում և ՀՀ ԱՆ ՔԿՀ–ներում համապատասխանաբար ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական զննումը պարտադիր տեսագրվի, իսկ վնասվածքներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում կատարվի այդ վնասվածքների դետալային գունավոր լուսանկարահանում,
- b. Ենթադրյալ խոշտանգումից տուժած անձի մարմնի դատաբժշկական հետազոտումն իրականացվի քննության մարմնի և իրավապահ մարմինների աշխատակիցների տեսողական և լսողական վերահսկողությունը բացառող պայմաններում՝ ՁՊՎ–ներում, ՀՀ ԱՆ ՔԿՀ–ներում և փորձագիտական հիմնարկներում բժշկական զննության հատուկ սենյակներ առանձնացնելով, որոնք կահավորված կլինեն միակողմանի տեսանելիություն ապահովող ապակիներով և հնարավորություն կտան իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից, լսողական վերահսկողությունը բացառող պայմաններում զննում իրականացնող բժշկի չառարկելու դեպքում, իրականացնելու միայն

զննման գործընթացի տեսողական դիտարկում՝ բժշկի անվտանգությունն ապահովելու նպատակով:

- c. Նկատի ունենալով Հայաստանի չորրորդ պարբերական զեկույցի վերաբերյալ ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրափակիչ դիտարկումները՝ օրենսդրորեն ամրագրել պահանջն առ այն, որ ազատությունից զրկված անձի, կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կամ մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների ընթացքը ենթակա է պարտադիր տեսաձայնագրման:

Առաջարկվում է նաև քննչական ենթակայության առարկայական հատկանիշով ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների ենթակայությանը վերապահել ՀՀ քրեական օրենսգրքում լրացված՝ խոշտանգման համար քրեական պատասխանատվություն նախատեսող 309.1-րդ հոդվածով հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերը՝ նկատի ունենալով, որ հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործությունը կարող է կատարվել ինչպես պետական ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի, այնպես էլ՝ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ:

Խոշտանգումների վերաբերյալ սուտ տեղեկություններ հայտնելու միջոցով իրավունքի չարաշահման դեպքերը նվազեցնելու համար անհրաժեշտ է խստացնել սուտ մատնության և սուտ ցուցմունքներ տալու համար քրեական պատասխանատվությունը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ կատարված ուսումնասիրության արդյունքում վերհանված օրինանշափությունների և դրանց ամփոփման հիման վրա ձևակերպված առաջարկների պահպանումն ու հետագա կատարելագործումը միտված է նպաստելու Հայաստանի Հանրապետությունում վատ վերաբերմունքի փաստի քննության միջազգային չափանիշերի ներդրմանը՝ դրանով իսկ բարելավվելով այս տեսակ գործերի քննության որակը:

Անշուշտ, հարկ է նաև արձանագրել, որ վատ վերաբերմունքի քննության միջազգային չափանիշերը դինամիկ բնույթ ունեն, անընդհատ զարգանում են հարափոփոխ իրականությանը համընթաց, ուստի այս տեսակ գործերի քննության ինստիտուցիոնալ ու ընթացակարգային բարեփոխումները մշտական վերանայման կարիք ունեն:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻՑ

Վատ վերաբերմունքի քննության միջազգային չափանիշերի բացահայտման ու վերլուծության տեսանկյունից նպատակահարմար ենք համարում ներկայացնել խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության կապակցությամբ Եվրոպական դատարանի արտահայտած այն դիրքորոշումները, որոնք, կարծում ենք, արդյունավետ և ուղենշային նշանակություն կարող են ունենալ ներպետական քննչական պրակտիկայի ձևավորման համար:

Ասենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի (գանգապ թիվ 24760/94)՝ 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճռի մեջ Եվրոպական դատարանը նշել է հետևյալը՝

«...

100. Դատարանը, ինչպես և Հանձնաժողովը, անհնարին է համարում իր տրամադրության տակ եղած ապացույցների հիման վրա պարզել, արդյոք, դիմողի մարմնի վրա առկա վնասվածքները պատճառվել են, ինչպես ինքն է պնդում՝ ոստիկանության աշխատակիցների կողմից, թե՛ ոչ:

(b) Քննության աղեկավարությունը:

101. Սակայն Դատարանը գտնում է, որ պարոն Ասենովի ցուցմունքները, և այն փաստը, որ երկու ժամվա ընթացքում նրան պահել են ոստիկանության բաժանմունքում, ինչպես նաև վկաներից որևէ մեկի հայտարարության բացակայությունն առ այն, թե պարոն Իվանովը ծեծել է իր որդուն այնքան դաժան, որ պատճառվել են նշված վնասվածքները, համարել առաջ են բերում հիմնավոր կասկած առ այն, որ այդ վնասվածքները կարող էին պատճառված լինել ոստիկանության աշխատակիցների կողմից:

102. Դատարանը գտնում է, որ այն հանգամանքներում, երբ անձը ներկայացնում է փաստարկված պահանջ ոստիկանության կամ պետական իշխանության այլ մարմինների կողմից դաժան ապօրինի վերաբերմունքի ենթարկվելու մասին՝ ի խախտումն

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, այս դրույթը, որը դիտարկվում է Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված «իր իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար... Կոնվենցիայով նախատեսված իրավունքներ և ազատություններ ապահովելու» ընդհանուր պարտականության հետ համատեղ, ենթադրում է պարտականություն իրականացնելու արդյունավետ պաշտոնական քննություն: Այդպիսի քննությունը, ինչպես 2-րդ հոդվածի դեպքում է, պետք է պտտենցիալ հնարավորություն ստեղծի մեղավորներին հայտնաբերելու և պատժելու համար (տես Մակկան և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով 1995 թվականի սեպտեմբերի 27-ի որոշումը, Կայան ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի փետրվարի 19-ի որոշումը և Յաշան ընդդեմ Թուրքիայի գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի որոշումը): Եթե դա այդպես չլիներ, ապա խոշտանգումների և անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքի համընդհանուր արգելքը, չնայած իր հիմնարար նշանակությանը, կլիներ ոչ արդյունավետ պրակտիկայում և որոշ դեպքերում պետական ծառայողները կկարողանային չարաշահել նրանց իրավունքները, ովքեր գտնվում են իրենց հսկողության ներքո՝ փաստորեն անպատժելիորեն:

.....

104. Շրջանային զինվորական դատախազության և Գլխավոր զինվորական դատախազության կողմից իրականացված նախնական քննությունը եղել է էլ ավելի մակերեսային: Դատարանը հատկապես հատկանշական է համարում այն, որ Գլխավոր զինվորական դատախազությունը, չունենալով համապատասխան ապացույցներ, եզրակացրել է, որ պարոն Ասենովը ցուցաբերել է անհնազանդություն, և չբացատրելով անհնազանդության բնույթը, եզրակացրել է, որ «նույնիսկ եթե անչափահասին հասցվել են հարվածներ, դա եղել է ոստիկանության հրամանների չենթարկվելու արդյունք»: Նման ենթադրությունը հակասում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի սկզբունքներին, համաձայն որի՝

ազատությունից զրկված անձի նկատմամբ ֆիզիկական ուժի գործադրումը, որի անհրաժեշտությունը չի առաջացել նրա սեփական վարքագծով, նրա իրավունքների սկզբունքային խախտում է հանդիսանում:

105. Դատարանը նշում է, որ 1993 թվականի Գլխավոր զինվորական դատախազությունը որոշել է, որ ոստիկանության կողմից ենթադրվող ապօրինի գործողությունների դեպքում անհրաժեշտ է ցուցմունք վերցնել անկախ վկաներից: Սակայն ևս երկու վկաների հարցաքննությունը, որոնցից մեկը միայն մակերեսային էր հիշում նշված իրադարձությունները, բավարար չէ շտրկելու համար այս հարցի առիթով քննության բացթողումները:

106. Այս հիմքով և հաշվի առնելով մանրակրկիտ, արդյունավետ և անկողմնակալ քննության բացակայությունը դիմողի հիմնավոր բողոքի հիման վրա առ այն, որ ինքը ծեծի է ենթարկվել ոստիկանության աշխատակիցների կողմից, Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում»:

Լաբիթան ընդդեմ Իտալիայի (զանգապ թիվ 26772/95) 2000 թ.-ի ապրիլի 6-ի վճռի մեջ Եվրոպական դատարանը նշել է հետևյալը՝

«....

В. Կատարված քննությունը:

130. Դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Տրապանիի դատավոր-քննիչին 1993 թվականի հոկտեմբերի 2-ին ներկայացված դիմողի դիմումի և carabinieri-ին 1994 թվականի հունվարի 5-ին նրա դիմումի համապետ ուսումնասիրությունը տրամաբանական հիմք է տալիս կասկածելու, որ դիմողը ենթարկվել է ոչ պարզաձև վերաբերմունքի Պիանոզայի բանտում: Դրա հետ մեկտեղ չի կարելի մոռանալ, որ Պիանոզայում ազատագրված պայմանները եղել են զանգվածային լրատվամիջոց-

ների ուշադրության կենտրոնում նշված ժամանակահատվածում, և որ այլ ազատագրկվածներ նույնպես բողոքել են այնպիսի վերաբերմունքի դեմ, որի մասին բարձրաձայնել է դիմողը՝ այդպիսով հաստատելով նրա դիմումների հիմնավորվածությունը:

...

132. Դատարանը նշում է, որ այն բանից հետո, երբ դատավոր-քննիչը համապատասխան դատախազության մարմնին տեղեկացրել է դիմողի կողմից վատ վերաբերմունքի ենթարկված լինելու բողոքների մասին նախնական քննության ընթացքում, պետական մարմինները կատարել են տվյալ դիմումներով մի շարք քննություններ: Սակայն տվյալ քննությունները չեն եղել բավականաչափ մանրակրկիտ և արդյունավետ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար:

133. Դատարանը նշում է, որ Լիվորնոյի դատախազության կողմից քննության սկիզբը եղել է դանդաղ. carabinieri-ի կողմից 1994 թվականի հունվարի 5-ին հարցաքննությունից հետո անցել է 14 ամիս մինչև այն պահը, երբ նրան հնարավորություն են տվել ճանաչելու պատասխանատու անձանց: Այդ հանգամանքների առիթով միակ ձեռնարկված գործողությունը, ինչպես հետևում է գործի նյութերից, եղել է Պիանոզայում աշխատող պահակների ֆոտոպատճենները ստանալը (ոչ թե բուն լուսանկարները): Այդ ողջ ընթացքում դիմողը պահվել է Պիանոզայի բանտում:

134. Դատարանն առավել հատկանշական է համարում այն, որ չնայած դիմողի կողմից 1995 թվականի մարտի 9-ին կրկնակի ներկայացված դիմումին առ այն, որ ինքը չէր կարողանա ճանաչել պահակների դեմքերը, չի արվել ոչինչ, որպեսզի նրան տրվի այդպիսի հնարավորություն, և 9 օր անց դատախազությունը դիմում է ներկայացրել ու ստացել թույլտվություն քննությունը դադարեցնելու համար ոչ թե հայտարարված պահանջների հիմքերի բացակայության պատճառով, այլ այն պատճառով, որ հնարավոր չէ պարզել պատասխանատու անձանց:

...

136. Նշված հանգամանքներում, հաշվի առնելով դիմողի դիմումների մանրակրկիտ և արդյունավետ քննության բացակայությունն առ այն, որ ինքը ենթարկվել է վատ վերաբերմունքի Պիանոզայի բանտի պահակների կողմից, Դատարանը գալիս է այն եզրակացության, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում»:

Միխենն (MIKHEYEV) ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով (բողոք թիվ 77617/01) 2006 թվականի հունվարի 26-ի Եվրոպական դատարանի վճիռ

«...»

i. Ընդհանուր սկզբունքներ:

107. Նախևառաջ Դատարանը հիշեցրել է, որ կատարված քննության ավարտի մասին հետևությունների բացակայությունն ինքնին դեռ չի նշանակում, որ այդ քննությունը եղել է ոչ արդյունավետ, քննություն կատարելու պարտականությունը «պարտականություն չէ արդյունք ստանալու, այլ պարտականություն է ձեռնարկելու միջոցներ» (տե՛ս Պոլը և Օրդի Էդվարդսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանի վճիռը (բողոք թիվ 46477/99, կետ 71, ECJR 2002-III): Պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգեցնի արդյունքների, որոնք կհաստատեն դիմողի կողմից շարադրված փաստերը, սակայն այն պետք է, ըստ էության, հանգեցնի գործի հանգամանքների հաստատմանը և այն դեպքում, երբ բողոքները հիմնավոր են մեղավորներին հայտնաբերելու և պատժելու համար (տե՛ս *mutatis mutandis*, Մախմուր Կայան ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանի վճիռը (բողոք թիվ 22535/93), կետ 124, ECJR 2000-III):

108. Այդպիսով, վատ վերաբերմունքի առիթով լուրջ բողոքներով քննությունը պետք է լինի մանրակրկիտ: Դա նշանակում է, որ պետական մարմինները պետք է միշտ լուրջ փորձեր ձեռնար-

կեն պարզելու, թե ինչ է իրականում տեղի ունեցել և չպետք է հիմնվեն հապճեպ կամ չհիմնավորված հեղուկությունների վրա և դադարեցնեն քննությունը կամ դրանց հիման վրա կայացնեն որևէ որոշումներ (տե՛ս Ասենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի Եվրոպական դատարանի 1998 թվականի հոկտեմբերի 28-ի վճիռը, Հաշվետվություններ 1998–VIII, կետ 103 և այլն): Նրանք պարտավոր են ձեռնարկել բոլոր հասանելի և տրամաբանական միջոցները, որպեսզի ապահովվեն գործով ապացույցներ, ներառյալ՝ *inter alia* ականատեսների ցուցմունքները, դատաբժշկական եզրակացությունները և այլն (տե՛ս, *mutatis mutandis*, Սալմանն ընդդեմ Թուրքիայի գործը, կետ 106, ECJR 2000–VIII; Տանրիկուլուն ընդդեմ Թուրքիայի (*Tanrikulu v. turkey*) գործով Մեծ պալատի որոշումը, բողոք թիվ 23763/94, ECJR 1999–IV, կետ 104 և այլն: Գյուլն ընդդեմ Թուրքիայի (*Gul v. Turkey*) գործով Եվրոպական դատարանի՝ 2000 թվականի դեկտեմբերի 14-ի վճիռը, բողոք թիվ 22676/93, կետ 89): Քննության ցանկացած թերություն, որն անհնարին է դարձնում վնասվածքների առաջացման աղբյուրի բացահայտումը կամ մեղավորների անձերի հաստատումը, կարող է հանգեցնել այս չափանիշի խախտմանը:

109. Այնուհետև քննությունը պետք է լինի արագ: Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածների ներքո բողոքներով գործերով, երբ պաշտոնական քննության արդյունավետությունն ունի առաջնային նշանակություն, Եվրոպական դատարանը հաճախ գնահատում է, արդյոք պետական մարմիններն արձագանքել են ժամանակին, թե՛ ոչ (տե՛ս Լաբիթան ընդդեմ Իտալիայի (*Labita v. italy*) գործով Մեծ պալատի որոշումը և այլն, EVJR 2000–IV): Հաշվի է առնում քննությունը սկսելու ժամը, հարցաքննությունների կատարման ձգձգումները (տե՛ս Տիմուրտաշն ընդդեմ Թուրքիայի (*Timurtas v. Turkey*) գործով Եվրոպական դատարանի վճիռը, բողոք թիվ 23531/94, կետ 89, ECJR 2000–VI, և Տեկինն ընդդեմ Թուրքիայի (*Tekin v. Turkey*) գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, Հաշվետվություններ 1998–IV,

կետ 67), ինչպես նաև նախնական քննության տևողությունը (տե՛ս *Ինդելիկատոն ընդդեմ Իտալիայի (Indelicato v. Italy)* գործով Եվրոպական դատարանի 2001 թվականի հոկտեմբերի 18–ի վճիռը, բողոք թիվ 31143/96, կետ 37):

110. Վերջապես, Եվրոպական դատարանը հիշեցրել է՝ որպեսզի ենթադրվող դաժան վերաբերմունքի մասին բողոքի քննությունը համարվի արդյունավետ, այն պետք է լինի անկախ (տե՛ս օրինակ՝ *Եգուրն ընդդեմ Թուրքիայի (Ogur v. Turkey)* գործով Եվրոպական դատարանի Մեծ պալատի վճիռը, բողոք թիվ 21954/93, ECJR 1999–III, կետ 91–92: Մեխմետ Էմին Յուքսելն ընդդեմ Թուրքիայի (*Mehmet Emin Yuksel v. Turkey*) գործով Եվրոպական դատարանի՝ 2004 թվականի հուլիսի 20–ի վճիռը): Այդպիսով՝ քննությունը կորցնում է իր անկախությունը, երբ այն իրականացնում են այն նույն մարմնի կամ ենթաբաժնի աշխատակիցները, որի հետ կապված են վատ վերաբերմունք կիրառելու մեջ կասկածվողները (տե՛ս Գյուլեչն ընդդեմ Թուրքիայի (*Gulec v. Turkey*) գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի հուլիսի 27–ի վճիռը, Հաշվետվություններ 1998–IV, կետեր 81–82): Քննության անկախությունը ենթադրում է ոչ միայն հիերարխիկ կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև՝ պրակտիկ անկախություն (տե՛ս օրինակ՝ *Էրգին ընդդեմ Թուրքիայի (Ergi v. Turkey)* գործով Եվրոպական դատարանի՝ 1998 թվականի հուլիսի 28–ի վճիռը, Հաշվետվություններ 1998–IV, կետեր 83–84: Նշված գործով դատախազը, ով քննություն էր իրականացնում անվանագույն ուժերի և Քրդական աշխատավորական կուսակցության ենթադրվող բախման ընթացքում մանկահասակ աղջկա սպանության գործով, հիմնականում հիմնվել էր այն տեղեկությունների վրա, որոնք ներկայացվել են միջադեպին մասնակցած ժանդարմների կողմից):

ii. Այդ սկզբունքների կիրառումը տվյալ գործով.

111. Նախ՝ չի կարելի ասել, թե տվյալ գործով իշխանությունները եղել են բացարձակապես պասիվ: Այդպիսով, քննիչը հարցաքննել է Լենինսկի շրջանային ոստիկանության աշխատակիցներին և թիվ 33 և թիվ 39 հիվանդանոցների անձնակազմերին ու հիվանդներին և ստացել է դիմողի բժշկական եզրակացությունը և նրա ֆիզիկական ու հոգեկան վիճակի վերաբերյալ դատաբժշկական հետազոտության արդյունքները և այլն: Այդուհանդերձ, քննության նյութերի բացակայության պայմաններում, Դատարանի համար հնարավոր չէ գնահատել քննչական միջոցների որակը, այն է՝ իմանալ, թե երբ և ինչպես են ձեռք բերվել ապացույցները, ինչ բնույթի են եղել քննիչի կողմից վկաներին և փորձագետներին առաջադրված հարցերը, որքան հստակ են արտացոլվել նրանց պատասխանները քննության կապակցությամբ կազմված գործի փաստաթղթերում և այլն:

112. Երկրորդ՝ Դատարանի տրամադրության տակ եղած նյութերը, հատկապես քննությունը կարճելու վերաբերյալ քննիչի որոշումները, բացահայտում են մի շարք էական բացթողումներ, որ տեղի են ունեցել մինչդատական քննության ընթացքում: Այդպիսով՝ պարզ չէ, թե արդյոք ձեռնարկվել են միջոցներ խուզարկելու այն աշխատասենյակները, որտեղ դիմողը ենթադրաբար ենթարկվել է վատ վերաբերմունքի: Փաստը, որ նման խուզարկությունը կատարվել է, և ձեռք է բերվել կարևոր ապացույցի մի հատված (դիմողի կողմից գրված խոստովանություն), մատնանշվել է միայն 2005 թվականի նոյեմբերի 30-ի դատավճռում: Քննիչը չի փորձել հայտնաբերել և հարցաքննել այն անձանց, որոնք դիմողի հետ մեկտեղ ձերբակալված են եղել Բոգորոդսկի և Լենինսկի ոստիկանության բաժանմունքներում 1998 թվականի սեպտեմբերի 10-19-ը, և որոնք կարող էին ունենալ կարևոր տեղեկություններ դիմողի վարքագծի վերաբերյալ մինչև ինքնասպանության փորձը: Պարզ չէ, թե արդյոք Վ.-ն՝ դիմողի հետ ձերբակալված անձը, երբևէ հարցաքննվել է քննիչի կողմից, թե՛ ոչ:

113. Երրորդ՝ միջոցների մեկ մասը ձեռնարկվել է ուշացմամբ: Դիմողի դատարժշկական հետազոտության արձանագրությունը, օրինակ, իրականացվել է 1998 թվականի հոկտեմբերի 26-ին, այն է՝ ենթադրյալ վատ վերաբերմունքից հինգ շաբաթ անց: Վատ վերաբերմունքի մեջ կասկածվող ոստիկանները դիմողի ճանաչմանը ներկայացվել են միայն դեպքից մոտ երկու տարի անց: Դիմողի մայրը հարցաքննվել է միայն 2000 թվականին, իսկ թիվ 33 հիվանդանոցի բժիշկ Մ.–ն՝ 2001 թվականին, չնայած որ նա եղել է դեպքից հետո դիմողին առաջինը տեսած վկաների թվում: Քննիչը չի հարցաքննել թիվ 39 հիվանդանոցի անձնակազմին և հիվանդներին մինչև 2000 թվականի հունվարը (բացառությամբ Բ.–ի և բժիշկ Կ.–ի, որոնք հարցաքննվել են նախնական քննության ժամանակ): Վերջապես, դիմողի հոգեբուժական հետազոտությունը կատարվել է միայն 2001 թվականին, չնայած այն փաստին, որ նրա հոգեկան վիճակի խնդիրն առաջ է քաշվել իշխանությունների կողմից՝ ի բացաբարություն նրա կատարած ինքնասպանության փորձի, և հիմք է հանդիսացել քննությունը կարճելու համար:

114. Դատարանը նաև նկատում է, որ բոլոր որոշումները, որոնց համաձայն քննությունը վերսկսվել է, հիմնավորվել են առավել մանրամասն քննություն կատարելու անհրաժեշտությամբ: Այդուհանդերձ այդ որոշումը միշտ չէ, որ իրականացվել է գործի քննությունն իրականացնող քննիչի կողմից: Հետևաբար քննությունը կարճելու մասին 1999 թվականի փետրվարի 25-ի որոշումն ունեցել է այն նույն հիմքերը, ինչ 1998 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը: 2000 թվականի փետրվարի 24-ի վճիռը կրկին հիմնված էր գրեթե միևնույն ասպացույցների և պատճառաբանությունների վրա: Դիմողի գործի նյութերը մեկ այլ քննիչի փոխանցելուց հետո ևս քննությունն առաջ չի ընթացել, և քննիչների որոշումների մեջ չեն հայտնվել նոր փաստարկներ կամ տեղեկություններ: Այդուհանդերձ, թանկարժեք ժամանակը բաց է

թողնվել, և Դատարանի կարծիքով՝ դա կարող էր ունենալ միայն բացասական ազդեցություն քննության ընթացքի վրա:

115. Չորրորդ՝ Դատարանը նկատում է, որ առկա է ակնհայտ կապ քննության համար պատասխանատու աշխատակիցների և վաղ վերաբերմունքի համար պատասխանատու աշխատակիցների միջև: Դատարանը հիշեցնում է, որ դեպքի օրը դիմողը հարցաքննվել է Նիժնի Նովգորոդի Լենինսկի շրջանային ոստիկանության բաժանմունքում: Հարցաքննությունը տեղի է ունեցել ոստիկանության ավագ քննիչի ներկայությամբ, Ներքին գործերի նախարարության շրջանային մասնաճյուղի ղեկավարի տեղակալի և դատախազության երկու աշխատակիցների՝ Բոգորոդսկի քաղաքային դատախազի և շրջանային դատախազի տեղակալ Մ. Ռ.-ի ներկայությամբ: Ըստ դիմողի՝ չնայած որ Մ. Ռ.-ն ներկա չի եղել այն սենյակում, որտեղ դիմողին տանջել են էլեկտրահաղորդիչով, նա չի արձագանքել դիմողի՝ վաղ վերաբերմունքի վերաբերյալ բողոքներին: Ավելին, երբ դիմողը հրաժարվել է խոստովանել Մ. Ս.-ի սպանությունը, Մ. Ռ.-ն նրան վերադարձրել է ոստիկաններին, որոնք, ըստ դիմողի, իրեն խոչտանգել են: Բացի դրանից, չնայած հայտնի էր, որ Մ. Ռ.-ն մասնակցել է 1998 թվականի սեպտեմբերի 19-ի հարցաքննությանը և չէր արձագանքել վաղ վերաբերմունքի վերաբերյալ դիմողի բողոքներին, գործի քննությունը փոխանցվել է Նիժնի Նովգորոդի Լենինսկի շրջանային դատախազության դատախազին, որն անմիջականորեն ներկայացնում էր փարածքային դատախազությունը, որտեղ Մ. Ռ.-ն կարևոր պաշտոն էր զբաղեցնում: Տարիներ անց քննությունը մնացել է այդ նույն շրջանային դատախազության վարույթում՝ չնայած այն հանգամանքին, որ մի քանի անգամ կասեցվել և վերսկսվել է: Միայն 2004 թվականին է գործը փոխանցվել հարկապես կարևոր գործերով վարչության քննիչներին, այդուհանդերձ, այն դեռևս մնում է շրջանային դատախազության իրավասության ներքո:

116. Պարզվել է նաև, որ քննության ընթացքում դատախազությունը սերտորեն համագործակցել է Լենինսկի շրջանային ոստիկանության հետ: Այդպիսով, ոստիկան Օ.-ն, որին դիմողը ճանաչել էր, որպես իրեն 1998 թվականին խոշտանգած ոստիկանի, հանձնարարություն էր ստացել հայտնաբերելու գործով վկա Վ.-ին: Օ.-ն հայտնել է դատախազությանը, որ ինքը գնացել է Վ.-ի տուն, սակայն չի կարողացել նրան այնտեղ գտնել: Դրանից քիչ անց Վ.-ն ցուցմունք է տվել առ այն, որ ոստիկանությունից ոչ ոք իրեն չի այցելել: Այդպիսով, պաշտոնական քննության կարևոր քայլը վստահված է եղել երկու հիմնական կասկածյալներից մեկին:

117. Դատարանը նկատում է, որ դատախազությունը դրսևորել է ընտրողական և ինչ-որ չափ անհամարեղելի մոտեցում՝ ապացույցներ ձեռք բերելիս և գնահատելիս: Գործն ավարտելու մասին 1998 թվականի դեկտեմբերի 21-ին կայացված առաջին որոշումը հիմնված է եղել հիմնականում ոստիկանների ցուցմունքների վրա, որոնք ներգրավված էին դիմողի՝ 1998 թվականի սեպտեմբերի 19-ի հարցաքննությանը, և որոնք այդ իսկ պարճառով չէին կարող դիտվել որպես անկողմնակալ վկաներ: Միևնույն ժամանակ, քննիչն անտեսել է Բ.-ի՝ հիվանդանոցում դիմողի հետ միևնույն հիվանդասենյակում գտնվող հիվանդի հայտարարությունները: Բ.-ի ցուցմունքները մերժվել են քննիչի կողմից, քանի որ Բ.-ն չի ունեցել հատուկ բժշկական գիտելիքներ և, քննիչի կարծիքով, չէր կարող տարբերակել էլեկտրական այրվածքները դիմողի՝ պարուհանից ընկնելու արդյունքում ստացած վնասվածքներից: Միևնույն ժամանակ, քննիչը հիմնվել է դիմողի՝ ճանապարհային ոստիկանությունում նախկին վերադասի կարծիքի վրա, որը հայտարարել է, որ դիմողը եղել է թույլ անհատականություն: Այս ցուցմունքը քննիչի կողմից ընդունվել է առանց հարցադրումների, ավելին՝ կիրառվել է որպես վճռորոշ ապացույց, թեև այդ ցուցմունք տվողը մասնագետ չէր ո՛չ հոգեբուժության, և ո՛չ էլ հոգեբանության ոլորտում:

118. Ապա, չնայած որ դիմողի՝ 1998 թվականի հոկտեմբերի 26-ի բժշկական հետազոտության արդյունքում չի հայտնաբերվել այրվածքներ նրա ականջներին, այդուհանդերձ, հաստատվել է, որ դիմողն ունեցել է կտրվածքներ իր լեզվի վրա: Քննիչը չի բացատրել, թե այդ վնասվածքներն ինչպես կարող էին առաջանալ դիմողի՝ պատուհանից նետվելու արդյունքում: 1998 թվականի սեպտեմբերի 19-ի դեպքի առթիվ ոչ պաշտոնական քննության ընթացքում (տես սույն վճռի 62-րդ կետը) Ֆ.-ն ցուցմունք է տվել առ այն, որ քննիչներն անտեսել են իր ցուցմունքները 1998 թվականի սեպտեմբերի դեպքերին դատախազ Մ. Ռ.-ի առնչության վերաբերյալ:

119. Դատարանը հարկապես մտահոգված է 1998 թվականի դեկտեմբերի 21-ի քննության արձանագրության փաստական մասով: Քննիչը նշել է, որ 1998 թվականի սեպտեմբերի 11-ին դիմողն ազատվել է կալանքից, սակայն այնուհետև ձերբակալվել է, երբ երկաթուղային կայարանում անցորդներին անհանգստացնելիս է եղել: Սակայն այդ ժամանակ պաշտոնապես հաստատվել է, որ քննիչներ Ն.-ի, Տ.-ի և Դ.-ի ցուցմունքները (որոնք իբրև թե ձերբակալել են դիմողին երկաթուղային կայարանում) եղել են շինծու, և որ այդ ժամանակ դիմողը եղել է ոստիկանների ձեռքում: Այդուհանդերձ, դեպքերի այդ նկարագրությունը կրկին նշվել է 1999 թվականի փետրվարի 25-ի՝ քննությունը կարճելու մասին որոշման մեջ: Այդ փաստը, Դատարանի կարծիքով, կասկածի տակ է դնում պաշտոնական քննության տրամաբանությունը՝ անկախ դիտորդի տեսանկյունից:

120. Ապա Դատարանը կրկնում է, որ գործը չի հասել դատական քննության դեպքերի վերաբերյալ բողոք ներկայացնելուց հետո՝ յոթ տարվա ընթացքում: Մինչդարձական քննությունն ավարտվել է, ապա վերսկսվել ավելի քան տասնհինգ անգամ, և ակնհայտ է, որ որոշակի ժամանակահատվածներում քննության գործընթացը ոչ այլ ինչ էր, քան ձևականություն՝ կանխատեսե-

լի հետևանքով: Վերջապես, Դատարանը նկատում է, որ 2005 թվականի նոյեմբերի 30-ի դատավճիռը դեռևս վերջնական չէ:

121. Վերը նշված խիստ լուրջ հետևանքների լույսի ներքո՝ հատկապես կապված քննության ընթացքի հետ, Դատարանը եզրակացնում է, որ այդ քննությունը չի եղել պարզաճև և բավականաչափ արդյունավետ: Այդպիսով, Դատարանը մերժում է Կառավարության՝ ներպետական միջոցներն սպառված չլինելու վերաբերյալ առարկությունները և վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում դրա դատավարական իմաստով, և որ վար վերաբերմունքի առթիվ կատարված քննությունը չի եղել արդյունավետ:

...»:

Վիկտորյոն ընդդեմ Լեհաստանի գործով Եվրոպական դատարանի՝ 2009 թ.-ի մարտի 31-ի վճիռ (գանգապ թիվ 14612/02)

«...

2. Հետաքննության ենթադրյալ անբավարարությունը

58. Ըստ Դատարանի ձևավորված նախադեպային իրավունքի՝ երբ անհապը հավանական հայտարարություն է անում, որ պետական գործիչների կողմից նա արժանացել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խախտող վերաբերմունքի, ապա դա դառնում է ազգային իրավասու մարմինների պարտականությունը՝ իրականացնել «արդյունավետ պաշտոնական հետաքննություն»՝ պարզելու փաստերը և պարժելու պատասխանատուներին (տես Ասենովն ու այլոք ընդդեմ Բուլղարիայի, 1998 թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Ջեկույցներ, § 102): Ավելին, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային պահանջները վերաբերում են նախաքննությանը: Ընթացակարգերը, որպես ամբողջություն, ներառում են նաև դատավարությունը, որը պետք է համապատասխանի Կոնվենցիայի 3-րդ հոդվածում պահանջված արգելքների պահանջներին: Չնայած չկա այդպիսի բացարձակ պահանջ, որ

բոլոր հետապնդումներն անպայման հանգեցնեն որևէ դատապարտման կամ դատապարտի, այնուամենայնիվ ազգային դատարանները որևէ կերպ չպետք է թույլ տան, որ անձի ֆիզիկական և հոգեկան ամբողջությունը լրջորեն վրանգող դեպքերը մնան անպատիժ (տես Օնարյիլիզն ընդդեմ Թուրքիայի գործով [GC], no. 48939/99, § 95 – 96, ECHR 2004–XII), Սալմոնն ընդդեմ Թուրքիայի գործով [GC], թիվ 21986/93, § 104–109, ECHR 2000–VII և Օկկալին ընդդեմ Թուրքիայի գործով 52067/99, § 65, ECHR 2006 թ.–... Եվրոպական դատարանի վճիռները (քաղվածքներ): Սա հատկանշական է օրենքի գերակայության նկատմամբ ձեռք բերելու և պահպանելու համար հասարակության վստահությունն ու աջակցությունն, ինչպես նաև կանխելու համար իշխանությունների գաղտնի համաձայնությունը կամ հանդուրժողականությունն անօրինական գործողությունների նկատմամբ (տես *mutatis mutandis*, Օնարյիլիզն, վերը մեջբերված, § 96):

59. Դատարանը նախ նշել է, որ դիմողի բողոքի քննությունը տևել է յոթ ամիս, մասնավորապես՝ 2000 թ. հունվարից մինչև նույն թվականի օգոստոսը: Երկու առիթով դատախազը վերացրել է քննությունները դադարեցնելու մասին որոշումները՝ համարելով, որ քննության ընթացքը թերի է եղել ընթացակարգային ակնհայտ թերությունների պատճառով: Իր ներկայացրած բողոքներում դիմողը գանգապվել է որոշակի ընթացակարգային թերություններից, ինչպիսիք են, օրինակ՝ գործին առնչվող փաստաթղթերի անհասանելիությունն ու վկաների, մասնավորապես կենտրոնի աշխատակիցների առերեսման հնարավորության բացակայությունը: Ճիշտ է, որ սրանք վերականգնվել են այն բանից հետո, երբ 2000 թ. հունվարի 1-ի և 2000 թ. ապրիլի 19-ի որոշումները չեղյալ են հայտարարվել, ու քննությունը վերսկսվել է:

60. Այնուամենայնիվ, փաստ է մնում այն, որ վարույթը դադարեցնելու մասին որոշումը կայացվել է Դատարանի կողմից, որը գտել է, որ, ըստ ներպետական օրենքի՝ չեն եղել հիմքեր, որոնցից կարելի էր եզրակացնել, որ տեղի է ունեցել քրեական

հանցագործություն: Այս կապակցությամբ Դատարանը չի կարող չնշել, որ քննության հիմնական ուշադրությունը եղել է դիմողին ազատությունից զրկելու և նրա հանդեպ ֆիզիկական ուժ կիրառելու արդարացումը: Թեև դիմողը վիճարկել է, որ ինքը եղել է թունավորված վիճակում և պնդել է, որ իր վարքում չի եղել ոչ մի բան, որ կարդարացներ իրեն ազատությունից զրկելը, նա նաև բողոքել է, որ նրա նկատմամբ սարսափելի վատ վերաբերմունք է ցուցաբերվել, և կենտրոնի աշխատակազմի աշխատակիցներն են իրեն այնպես մերկացրել, որով նվաստացրել ու խախտել են մարդկային արժանապատվության իր իրավունքը: Դատարանի կարծիքով՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված ընթացակարգային պարտականությունները պետք է ի գորու լինեն որոշելու, թե արդյո՞ք բողոքում բերված փաստերը գերազանցում են 3-րդ հոդվածի արգելքների սահմանները: Դատարանի կարծիքով՝ իրավասու մարմինները դիմողի մեղադրանքները քննել են խիստ նեղ շրջանակներում՝ այդպիսով զրկվելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի չափանիշերի տեսանկյունից դիմողի նկատմամբ գործադրված ուժի համաչափությունը ճիշտ գնահատելու իրենց հնարավորությունից, մասնավորապես, արդարացնել երկու արական սեռի պատկանող աշխատակիցների կողմից ուժով նրա հագուստը հանելը և նրան զսպագոտիներով մինչև 1999 թ. դեկտեմբերի 28-ի առավոտն անշարժացված վիճակում պահելը:

61. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ գործի ուսումնասիրման ձևը չի համապատասխանել Պեյրության՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սրանձնած ընթացակարգային պարտականություններին:

62. Հետևաբար, տեղի է ունեցել այդ դրույթի խախտում՝ դրա ընթացակարգային հիմքով»:

Տարաբուրկան ընդդեմ Մոլդովայի գործով Եվրոպական դատարանի՝ 2011 թվականի դեկտեմբերի 6-ի վճիռը (գանգապ թիվ 18919/10)

«...

(b) 3-րդ հոդվածի դատավարական մասը:

54. Այժմ Դատարանը կքննի, թե ինչպես է իրականացվել դիմողի բողոքի քննությունը վաղ վերաբերմունքի առթիվ: Դատարանը նկատում է, որ գործի հանգամանքների սկզբնական ստուգումը կատարվել է այն հաստատության կողմից (Ներքին գործերի նախարարություն), որտեղ աշխատել է վաղ վերաբերմունքի մեջ կասկածվողների մեծ մասը (ոստիկանությունը գտնվում է Նախարարության կազմում: Ստացվում է, որ դատախազի կողմից քրեական գործ չհարուցելն առնվազն մասամբ հիմնված է Նախարարության կողմից նման ստուգումների արդյունքների վրա: Դա առավել փարօրինակ է այն փաստի լույսի ներքո, որ վաղ վերաբերմունքի առթիվ գործերի քննությունը զինվորական դատախազներին հանձնարարելու հայտարարված նպատակն է եղել քննությունն իրականացնողների և ոստիկանության միջև կապերի բացակայության ապահովումը: Ավելին, զինվորական դատախազները հայտարարել են, որ իրենք ուշադրություն են դարձրել նախարարությունում աշխատող ավագ ոստիկաններին, որը այդ հաստատության կողմից իրականացվող քննությունն անհամարելի է դարձնում քննվողից քննիչի անկախ լինելու պահանջի հետ: Այդ պատճառով դիմողի բողոքի առթիվ քննությունը եղել է որոշ չափով կոմպրոմիսային:

55. Դատարանը նաև նկատում է, որ համաձայն գործի նյութերի՝ զինվորական դատախազն ընդունել է դիմողի բողոքը միայն 2009 թվականի ապրիլի 21-ին, այն է՝ այն ներկայացնելուց մեկ շաբաթ հետո: Ապա նա սպասել է առնվազն 38 օր, որպեսզի կատարվի ներքին քննություն Ներքին գործերի նախարարության կողմից: Վերջապես 2009 թվականի հունիսի 12-ին կայացնելով քրեական գործ չհարուցելու մասին որոշում՝ դատախազն իր որոշման մասին փեղեկացրել է դիմողին միայն 2009 թվականի հուլիսի 16-ին:

Դատարանի կարծիքով՝ վերը նշված փարբեր անբացատրելի ձգձգումներն անհամապետելի են քննության պատշաճության գաղափարի հետ, որը նախատեսված է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով, քանի որ առկա է ռիսկ, որ կոչնչանան վաղ վերաբերմունքի վերաբերյալ ապացույցները կամ վնասվածքները կվերանան (տե՛ս օրինակ, *Pădureț v. Moldova*, no. 33134/03, 5 January 2010):

56. Ապա Դատարանը նկատում է, որ չնայած դիմողի դեմքին առկա են եղել տեսանելի վերքեր, ինչը հաստատվել է բժշկի կողմից 2009 թվականի ապրիլի 14-ին, պաշտոնյաներից ոչ մեկը, որը տեսել է նրան մինչև այդ օրը թե՛ Բուրանիկայի ոստիկանության բաժանմունքում, դատախազությունում (որը վարում էր դիմողի նկատմամբ քրեական գործը), թե՛ GPD հաստատություններում (որտեղ նրան տեսել էր դատավոր Մ. Դ.–ն), թե՛ թիվ 13 բանտում, չեն արձանագրել և դատախազությանը չեն հայտնել հնարավոր վաղ վերաբերմունքի դրսևորման մասին՝ անտեսելով դիմողի կողմից ներկայացված բոլոր բողոքները:

57. Դատարանը կրկնում է՝ հայտնի է, որ «Քրեական դատավարության օրենսգրքի 93, 96 և 109-րդ հոդվածների համաձայն՝ ոչ մի քննչական գործողություն չի կարող ձեռնարկվել ենթադրյալ հանցագործության առթիվ ... քանի դեռ չի հարուցվել քրեական գործ» (տե՛ս *Guțu v. Moldova*, no. 20289/02, § 61, 7 June 2007, and *Ipate v. Moldova*, no. 23750/07, § 63, 21 June 2011): Տվյալ դեպքով որևէ քրեական գործ չի հարուցվել, որը կսահմանափակեր քննիչի ազդեցությունը և կմեծացներ ձեռք բերված ապացույցի արդյունավետությունը՝ դիմողի նկատմամբ վաղ վերաբերմունք դրսևորած անձանց քրեական հետապնդման ենթարկելու նպատակով:

58. Պեպք է նշել նաև, որ դիմողը բողոքել է առ այն, որ քննիչը ճանաչում չի կատարել՝ անտեսելով իր միջնորդությունը, ինչպես նաև չի պարզել, թե ովքեր են իր հետ մեկտեղ գտնվել կալանքի տակ 2009 թվականի ապրիլի 8-10-ը՝ նրա դեմքին առկա վաղ

վերաբերմունքի հետքերի վերաբերյալ իր հայտարարությունները ստուգելու նպատակով: Այս բացթողումները խարխլել են քննության արդյունավետությունը:

59. Դատարանը գտնում է, որ վապ վերաբերմունքի առթիվ դիմողի բողոքի կապակցությամբ պատշաճ քրեական գործ չհարուցելը, քննության և դրա արդյունքների մասին դիմողին հայտնելու անբացատրելի ձգձգումները, փաստը, որ քննության մի մասը կատարվել է այն մարմինների կողմից, որտեղ աշխատել է կասկածվողների մեծ մասը, ինչպես նաև դիմողի դեմքին առկա վնասվածքների հետքերի առաջացման պատճառները չպարզելը, ճանաչում չկատարելն անհամարելելի են Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված պահանջների հետ:

Այդ իսկ պատճառով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի դատավարական մասի խախտում:

